ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ

ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Խաղը որպես ն/դպ առաջատար գործունեություն»

ԿԱՏԱՐՈՂ՝ Սյուզաննա Պալթաջյան

ՂԵԿԱՎԱՐ՝Մ.Գ.Թ. Լ. Միրաբյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……3-4
2. Գլուխ 1. Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում……5-7
3. Գլուխ 2.Դիդակտիկ խաղերի նշանակությունը ն/դպ զարգացման գործում…8-11
4. Գլուխ 3.1. Խաղը որպես ուսուցման ամենաարդյունավետ միջոց……12-13
5. 3.2. Խաղային գործունեության զարգացման փուլերը……14-15
6. 3.3. Խաղային գործունեության հոգեբանական կառուցվածքը……16-17
7. Փորձարարություն……18
8. Եզրակացություն……19
9. Ցանկ……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. «Ուրախացի՛ր երեխայի գոյությամբ, սովորի՛ր նրանից, լսի՛ր նրան և խաղա նրա հետ»: [Lib. armedu.am]

Նախադպրոցական տարիքում խաղը երեխայի համար առաջնային գործունեությունն է: Խաղը նաև շրջակա իրականությունը ճանաչելու և հույզերը արտահայտելու հզոր միջոց է: Խաղը նախադպրոցականի համար շփման, հաղորդակցման, ինքնաճանաչման միակ միջոցն է: Խաղի միջոցով երեխան սկսում է տիրապետել խոսքին,մարդկային հաղորդակցման, շփման և հասարակական փորձի յուրացման այդ հզոր միջոցին: Նա ամեն կերպ ջանում է գործել մեծի պես, սակայն այդ ձգտումը չի համապատասխանում իր ուժերին և հնարավորություններին:

Ըստ Վիգոտսկու՝ եթե նախադպրոցական տարիքում չզարգանային այնպիսի կարիքներ, ինչպիսիք հնարավոր չլիներ անմիջապես իրագործել, այլապես խաղը գոյություն չէր ունենա:

Խաղում երեխան զարգանում է որպես մարդ: Խաղի ժամանակ տեղի է ունենում նաև հաջորդ կարևոր ձեռք բերումը՝ կոլեկտիվում ինքնահաստատվելու կարողությունը:

Խաղը մի կողմից ստեղծում է երեխայի մոտակա զարգացման կարևոր ուղի և հետևաբար հանդիսանում է առաջատար գործունեություն նախադպրոցական տարիքում :

Բազմաթիվ խաղեր միաժամանակ նպաստում են ն/դպ տարիքի երեխաների բարոյական դաստիարակությանը (սյուժետային, դրամատիկ, շարժական խաղեր և այլն): Կան խաղեր, որոնք ուղղակիորեն կապված են մտավոր, գեղագիտական և ֆիզիկական զարգացմանը (դիդակտիկ շարժախաղեր և այլն):Միևնույն ժամանակ այս խաղերում երեխաները սովորում են համակարգել գործողությունները, ենթարկվել խաղի կանոններին, կարգավորել իրենց ցանկությունները:

« Խաղը կայծ է, որ հարցասիրության և հետաքրքրասիրության կրակ է վառում»:

Վ. Ա. Սոխումլինսկի

Թեմայի արդիականությունը

« Խաղը կյանքի արտացոլումն է»

Արդի ժամանակներում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, ն/դպ ուսումնական հաստատության կարևորագույն խնդիրներից է դառնում խաղ-ուսուցումը հետաքրքիր դարձնելը: Ն/դպ տարիքը շատ կարևոր է երեխայի բազմակողմանի զարգացման և ձևավորման համար, ուստի այն կախված է երեխաներին շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են մանկապարտեզ-ընտանիք կապը և կիրառվող խաղային գործողությունները: Որքան կազմակերպվող խաղերը բազմաբնույթ և հետաքրքիր լինեն, այնքան երեխան կքայլի բազմակողմանի զարգացման հետքերով:

Հետազոտական աշխատանքի նպատակն է

Ուսումնասիրել հիշյալ թեմայով գիտական,մեթոդական, գիտամեթոդական գրականությունը, այլոց փորձը,կատարել եզրակացություններ:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են

1.Նկարագրել խաղերի կիրառման առանձնահատկությունները

2.Բացահայտել երեխաների հուզական վիճակը

3.Իրականացնել դիդակտիկ խաղերի շարք, կատարել եզրահանգում

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը

Կազմված է բովանդակությունից ,երեք գլխից: Երրորդ գլուխը կազմված է երեք ենթաբաժնից ,փորձարարությունից, եզրակացությունից, գրականության ցանկից: Բաղկացած է 20 էջից:

Գլուխ 1. Խաղի դերն ու նշանակությունը երեխաների կյանքում

Խաղը ն/դպ-ի հիմնական կենսաձևն է, որը միշտ մնում է սիրված զբաղմունք։Խաղի դերը մեծ է երեխայի դաստիարակության և ուսուցման ընդհանուր զարգացման գործում: Հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը գտնում է, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»։

Երեխայի համար խաղը առաջնային գործունեություն, զգացմունքների արտահայտման և շրջապատող իրականության ճանաչման հզոր միջոց է։ Խաղը ն/դպ-ի համար նաև հաղորդակցման և ինքնաճանաչման միակ միջոցն է։

Խաղը երեխաների համար սոցիալական հասունացման ուղի է։ Խաղի ընթացքում երեխան փորձում է կատարել մեծի դեր՝ հասկանալով հանդերձ,որ ինքը դեռ մեծ չէ։ Սակայն դրա արդյունքում երեխաների մոտ ձևավորվում է մեծ դառնալու , հասարակայնորեն արժեքավոր դեր կատարելու մոտիվը։

Խաղը հանդես է գալիս որպես մի գործունեություն,- գրում է Դ. Բ. Էլկոնինը, - որը կապ ունի երեխայի պահանջմունքների ոլորտի հետ,նրանում տեղի է ունենում նախնական,հուզական,գործուն կողմնորոշում դեպի մարդկային գործունեության իմաստը, ծագում է մեծերի հարաբերություններում իր սահմանափակ տեղի գիտակցումը և չափահաս լինելու պահանջմունքը։

Քիչ խաղացող երեխան Լ. Ս. Վիգոտսու կարծիքով կորցնում է զարգացման շատ հնարավորություններ, քանի որ խաղի մեջ երեխան միշտ իրեն գիտակցում է ավելի բարձր, քան իր առօրյա վարքագիծն է։

«Այս իմաստով խաղը ն/դպ տարիքի նորագոյացություն է, որի մեջ խտացված ձևով, ինչպես ոսպնյակի ֆոկուսում, կենտրոնանում են նրա զարգացման առավել խորքային ուղիները։

Խաղի հոգեբանությունը նվիրված Լ.Ս.Վիգոտսկու, Լ.Ս.Ռուբինշտեյնի, Դ. Բ. Էլկոնինի, Լ.Ս.Բոժովիչի,Ն.Պ.Անիկեևայի ուսումնասիրություններում այն դիարկվումէ որպես.

- «շրջապատող աշխարհի նկատմամբ անձնավորության հատուկ վերաբերմունք,
- երեխայի հատուկ գործունեություն,որը փոփոխվում և զարգանում է որպես նրա սուբյեկտիվ գործունեություն
- հասարակայնորեն նրան առաջարկված և նրա կողմից յուրացված գործունեության տեսակ
- գործունեություն, որի ընթացքում տեղի է ունենում երեխայի հոգեկան զարգացումը» [3, էջ 12]

Մանկական խաղում առաջին անգամ ձևավորվում և դրսևորվում է իրականության վրա ազդելու,իր գործունեության սուբյեկտը՝ «տերը» դառնալու պահանջմունքը։

Խաղի համար կարևորը ոչ թե արդյունքը, այլ խաղային և նրա հետ կապված ապրումների գործընթացն է,ընդ որում թեև խաղային իրադրությունը երևակայության արդյունք է, սակայն ապրվող զգացմունքները բնական են։

Խաղի ընթացքում ապրվող զգացմունքների բնականությունը հնարավորություն է տալիս դաստիարակին խաղի սյուժեում ներառելով որոշակի դերեր, ծրագրավորել խաղացող երեխաների դրական հատկանիշները։

Հետաքրքիր խաղը երեխայի մոտ ստեղծում է աշխույժ, զվարթ տրամադրություն, երեխաների կյանքը դարձնում է լիարժեք,բավարարում է ակտիվ գործունեության նրանց պահանջմունքը ։ «Նույնիսկ լավագույն պայմաններում, լիարժեք սնվելիս երեխան վատ կզարգանա, կդառնա վեհերար, եթե զրկվի հրապուրիչ խաղից»։

Երեխան պետք է միշտ խաղա, նույնիսկ եթե կատարում է լուրջ աշխատանք։ Նախադպրոցական տարիքում խաղի կրճատումը շատ տխուր ազդեցություն է ունենում երեխաների ընդհանուր մտավոր և անձնական զարգացման վրա։ Ինչպես գիտենք երեխայի մտածողությունը, հաղորդակցությունը, երևակայությունը,հույզերը, գիտակցությունը զարգանում է խաղի միջոցով։

Խաղի առավելությունը ցանկացած այլ մանկական գործունեության նկատմամբ այն է, որ դրանում երեխան ինքն է կամովին ենթարկվում որոշակի կանոնների, իսկ այդ գործողությունը տալիս է առավելագույն հաճույք։ Հետևաբար, խաղը

գործնականում միակ ոլորտն է, որտեղ նախադպրոցական երեխան կարող է ցույց տալ իր նախաձեռնությունն ու ստեղծագործական գործունեությունը։

Խաղ. ի՞նչը կարող է ավելի հետաքրքիր և բովանդակալից լինել երեխայի համար։ Սա ուրախություն է, գիտելիք և սեղծագործություն ։ Սրա համար է երեխան գնում մանկապարտեզ։ Խաղային գործունեությունը առաջարար է ն/դպ երեխայի համար։Խաղը երեխայի կյանքն է, նրա գոյությունը, անհատի բարոյական որակների զարգացման աղբյուրը, նրա զարգացումն ամբողջությամբ։

Գլուխ 2. Դիդակտիկ խաղերի նշանակությունը ն/դպ զարգացման գործում

Ն/դպ հասակի երեխաների ուսուցման և դաստիարակության լավագույն միջոց են դիդակտիկ խաղերը։ Դիդակտիկ խաղերի բովանդակությունը միշտ որևէ մտավոր խնդրի իրականացում է, որի լուծման համար երեխան պետք է արագ մտածի, կարողանա համեմատել առարկաները, երևույթները, վերլուծի, համադրի դրանք և ինքնուրույն կերպով որոշ եզրակացության հանգի։

Դիդակտիկ խաղերն ունեն խնդիր, գործողություն, հստակ կանոններ, որոնց կատարումը պարտադիր է երեխաների համար և արդյունք (ավարտ)։

Դիդակտիկ խաղերի դաստիարակչական նշանակությունը նախևառաջ նրանց բովանդակության մեջ է։ Խաղի ժամանակ երեխան գիտակցաբար ենթարկվում է խաղի կանոններին, ձեռք է բերում ինքնատիրապետում, ինքնավերահսկում սեփական գործողությունների և հավատ իր ուժերի նկատմամբ։

Դիդակտիկ խաղերը կիրառվում են տարբեր նպաակներով

- Որպես նոր գիտելիքի հաղորդման միջոց
- Վարժությունների և գիտելիքների ամրապնդման միջոց
- Գիտելիքների ստուգման միջոց
- Որպես պրակտիկ գործունեություն
- Ճանաչողական գործողության ակտիվացման միջոց
- Որպես անհատական գործողություն։ [4, էջ 6]

Խաղերի և խաղային վարժությունների միջոցով ն/դպ տարիքի երեխաների դաստիարակության գործը գտնվում է մանկավարժի ձեռքում։ Երեխաներին սովորաբար հետաքրքրում են տարբեր նպատակաուղղվածություն ունեցող խաղեր։Դրա համար անհրաժեշտ է.

- Նախապատրաստել խաղի անցկացման տեղը
- Ընտրել որակյալ դիդակտիկ նյութեր
- Ապահովել երեխային առաջադրվող պահանջները, այն է՝ ճանաչողությունը, շփումը, խաղը և ինքնահաստատումը։

- Խաղն անցկացնել հմտորեն, ուրախ և տարբեր հետաքրքիր միջոցներով։

Եթե մանկավարժը խաղը անցկացնում է ժպիտով,կատակով, սիրով, ապա այն անպայմանորեն կակտիվացնի երեխաների լեզվամտածողությունը և երեխայի մոտ կզարգանա մարդասիրական որակներ։

Ահա դիդակտիկ խաղերի մի քանի օրինակներ, որոնց միջոցով հարստանում է երեխաների բառապաշարը և զարգանում է կապակցված խոսքը։

«Դու ի՞նչ հանեցիր»

Խաղի նպատակը

Երեխաներին սովորեցնել տեսնել առարկան և դրա հատկանիշը։ Հարստացնել բառապաշարը և կապակցված խոսքը։

Խաղի ընթացքը

Դաստիարակը բերում է խաղալիքներով լի պարկը և դրա պարունակությունը դատարկում է սեղանին։ Նա առաջարկում է դիտել խաղալիքները, ապա նորից դրանք լցնում պարկի մեջ։

-Ես ձեզ կկանչեմ ինձ մոտ, - ասում է դաստիարակը և ձեզանից յուրաքաչյուրը պետք է հանի որևէ առարկա ու պատմի դրա մասին։ Ինչպե՞ս է այն կոչվում, ի՞նչ գույն է և ինչպե՞ս կարելի է խաղալ դրանով։[2,էջ 47]

Դաստիարակն ինքը ներկայացնում է որևէ խաղալիք.

«Սա գնդակ է, կարմիր գույնի։ Գնդակը կարելի է գլորել, նետել և բռնել, հատակին խփել» Այնուհետև հարցեր է տալիս երեխաներին և նրանց ընդգրկում զրույցի մեջ։ Օրինակ աքաղաղ հանած երեխային նա առաջարկում է աքաղաղի պես բարձրաձայն «ծուղրուղու» կանչել, տիկնիկով երեխային՝ ընտրել նրա համար գեղեցիկ անուն։ Խաղը պետք է անցկացնել ուրախ և աշխույժ մթնոլորտում և ապահովել խաղալիքների բավարար քանակ։Այս դեպքում երեխայի մոտ ցանկություն է առաջանում խոսելու և ընտրածը նկարագրելու կարողություն։ Այսինքն նա կարող է առարկան նկարագրել ածականներով (տիկնիկին նկարագրել կապուտաչյա, գեղեցիկ և այլն)։

Խանութ

Խաղի նպատակը

Ճշտել երեխաների պատկերացումները առարկաների օգտագործման, նշանակության մասին, կարողանալ նկարագրել դրանք։

Խաղի ընթացքը

Դաստիարակի առաջարկությամբ երեխաները բերում են խաղալիքներ, կենցաղային առարկաներ,նկարներ և դասավանդում են ըստ տեսակների.մեքենաներն առանձին, ամանեղեն առանձին և այլն։

Դաստիարակը, առաջինը դնելով խաղալիքը կամ կենցաղային օգտագործման առարկան, անվանում է այն,համառոտ նկարագրում և նշում, թե ինչի համար են օգտագործվում։ Օրինակ. «Տվեք, խնդրեմ, դեղին և սև գծեր ունեցող սափորը։ Այն ինձ հարկավոր է կաթ լցնելու համար»։ Դրանից հետո երեխաներն իրենք են սկսում «գնել» իրեր՝ հնարավորինս ամբողջական նկարագրելով դրանք։[2, էջ 67]

Եթե երեխաներն օգտվում են միայն շարժումներից կամ առարկան ցույց տվող դերանուններից, դաստիարակը նրանց հարցեր է տալիս, օգնում ճիշտ նկարագրել առարկան։

«Խանութ» խաղի կազմակերպումը կարող է հետապնդել այլ նպատակներ՝ դասավորել առարկաներն ըստ գույնի, ձևի, բովանդակության և մեծության։

«Խանութ» խաղը զարգացնում է երեխաների պատկերացումները տարածության մեջ գրաված դիրքի, առարկային դրանց հատկություններ, քանակի, ձևի, գույնի մասին ունեցած պատկերացումները։

Նմանատիպ խաղերը զարգացնում են նաև երեխաների հետաքրքրասիրությունը տարբեր իրերի և առարկաների նկատմամբ։ Խաղի ժամանակ երեխաները սովորաբար վերարտադրում են այն, ինչ տեսնում են շրջապատում կամ հետաքրքրում է իրենց։

Պիաժեն առանձնացրել է խաղի չորս տեսակ՝ գործնական խաղ,խորհրդանշական (սիմվոլիկ) խաղ։

Խաղ՝ կանոններով,կառուցողական խաղեր։ Խաղի յուրաքանչյուր տեսակ ներառում է ակտիվ ճանաչողության հնարավորություններ։

Գլուխ 3. Խաղը որպես ուսուցման ամենաարդյունավետ միջոց

Խաղը երեխաների համար ամենահաճելի և հասանելի գործունեության տեսակն է, շրջակա միջավայրից ստացած տպավորությունների մշակման և հաղորդման միջոց: Խաղում երեխան հստակ ցույց է տալիս իր մտածողության և երևակայության առանձնահատկությունները, ցույց է տալիս իր հուզականությունը, ակտիվությունը:

Խաղը այն մեթոդներից է, որի ընթացքում արդյունքը երևում է համատեղ զրույց, դիտում, ընթերցում կազմակերպելիս:

Խաղի ընթացքում երեխաներն սովորում են գործնականում կիրառել իրենց գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև այն օգտագործել տարբեր պայմաններում: Շատ հաճախ խաղը այն հարմար իրավիճակի ընտրությունն է, որի ժամանակ երեխաներին հորդորվում է նոր գիտելիքներ և տեղեկություններ շրջակա միջավայրի մասին: Խաղի միջոցով է, որ երեխաները ծանոթանում են մեծերի աշխատանքին, սոցիալական և հասարակական կյանքի մի շարք երևույթների, մեծերի սխրագործությունը և նրանց մեջ զարգացնում է հետաքրքրություն ապագա կյանքի և մասնագիտության նկատմամբ:

Մեր ժամանակաշրջանի նախադպրոցական տարիքի փոքրիկները ունեն բարձր հայրենասիրական ոգի, անկոտրում կամք և նրանց երազած մասնագիտությունների բավականին մաս են կազմում ծառայել հայրենիքին, պետությանը, մարդկությանը, լինել պիտանի և օգտակար հասարակական և սոցիալական կյանքում:

Ուսուցման ընթացքում խաղերի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում է դաստիարակին ակտիվացնել կաշկանդված և պասիվ երեխաներին, որովհետև խաղի ժամանակ երեխան իրեն ազատ է զգում: Երեխաներին հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու իր մտքերն ու կարծիքը:

Խաղային ուսուցումը իր մեջ ներառում է տարբեր հիմնախնդիրների լուծումներ երեխաներին մղում է ակտիվության, դժվարությունների հաղթահարման, իր «ես» ը հաստատելու և ինքնահաստատվելու կարողության ամրապնդմանը: Ինչպես ասել է Վ. Ս. Սուխոմլինսկին.

«Առանց խաղի չկա և չի կարող լինել ամբողջական մտավոր զարգացում: Խաղը մի մեծ լուսավոր պատուհան է, որի միջոցով երեխաների հոգևոր աշխարհը, կյանքը լցնում է պնդումների, գաղափարների հոսքով: Խաղը կայծ է՝ հարցասիրության և հետաքրքրասիրության վառվող կրակ»:Վ. Ա. Սուխումլինսկի

Խաղը, զուգակցված աշխատանքի և ուսուցման հետ, երեխաների գործունեության որոշակի տեսակ է: Երեխաները հեշտությամբ են ներգրավվում խաղային գործունեության ոլորտ, և ինչքան այն բազմազան է, այնքան ավելի գրավիչ է դառնում: Խաղային գործունեության մեջ մտնում են խաղեր և վարժություններ, որոնք զարգացնում են առարկաների բնույթը, բնութագրիչ հատկանիշները բացահայտելու, դրանք իրար հետ համեմատելու և համադրելու կարողությունները: Այսպիսով՝ խաղը երեխաներին հնարավորություն է ընձեռնում օգտվելով անհրաժեշտ միջոցներից, ճանաչել, թե ինչպես է կառուցված աշխարհը: Ըմբռնումը ձևավորվում է ակտիվ գործունեության միջոցով, որի ժամանակ հարկավոր է դրսևորել ինքնուրույն կամ մյուսների հետ համատեղ,ակտիվ մասնակցություն:

Խաղային գործունեության զարգացման փուլերը

Հոգեբանական դասակարգում

Խաղի տեսակը	**Օպտիմալ զարգացման տարիքը**	**Նկարագրությունը**	**Զարգացման իմաստը**
«Խաղ»	9-12 ամսական մինչև 1-2տ	Երևակայական իրավիճակի ըմբռնումը, որն ստեղծվում է մեծահասակի կողմից	Նախապատրաստական փուլ՝ խաղային գործունեության զարգացման նախնական փուլի համար
Ռեժիսորական խաղ (1-ին)	2,5-3տ.	Առարկայի տրամադրում երևակայական գործառույթով	Իրադրության «ռեժիսորավորում» 1-3առարկաների համար
Դերային խաղ	3-4տ.	Երևակայական կերպարի ստեղծումը և վերաարտադրումը երեխայի կողմից	Տարրական դերակատարումների և դերային վարքի ըմբռնում
Սյուժետադերայի ն խաղ	4-5տ.	Երեխայի՝ դերը ընդունում և կատարում	Դերակատարումների և հասարակական դերերի ըմբռնում, իրավիճակում «տեղափոխվելու» կարողություն
Ռեժիսորական խաղ (2-րդ)	5-7տ.	Երևակայական իրավիճակի, առարկաների և խաղալիքների	4-5, 8-12 առարկաների համար իրադրության «բեմադրում», իրավիճակի «ղեկավարման հմտացում»

		միակ սյուժեի ստեղծում	
Խաղ՝ կանոններով	5-7տ	Երեխայի կողմից կանոնների ընդունում և կատարում	«Նորմատիվ վարքի»ըմբռնում,ընդհանուր պահանջներին, կանոններին ենթարկվելու կարողություն

[3, էջ 27]

Խաղային գործունեության հոգեբանական կառուցվածքը



Դրդապատճառներ (մոտիվներ) – այն ամենը, ինչը դրդում է գործունեության, պահանջների ու հետաքրքրությունների ձևավորման և այլն։

- Նպատակներ-ցանկալի արդյունքներ, որոնց հասնելու է ուղղորդված գործունեությունը։[3,էջ 28]
- Գործողություններ- գործառույթներ, որոնք անհրաժեշտ են ցանկալի արդյունքին հասնելու համար։
- Միջոցներ- ցանկալի արդյունք ստանալու համար անհրաժեշտ առարկաներ,ձևեր։
- Վերլուծություն- ստացված արդյունքի համեմատումը ցանկալի արդյունքի հետ։

- Կշռադատում (ռեֆլեքսիա) – գործողության մեջ սեփական անձի գիտակցումը գործող սուբյեկտի միջոցով։

Փորձարարություն

Իրագործելով «Խանութ» դիդակտիկ խաղը, որի ընթացքում երեխաները վաճառողի և գնորդի կարգավիճակում էին։

Երեք սեղանների միջոցով, որի վրա դասավորված էին տիկնիկներ, սպասք և գրենական պարագաներ, սկսեցինք խաղը։ Երեխաներից երեք աղջիկներ դարձան վաճառողներ, նրանք գնորդներին ներկայացնում էին վաճառվող ապրանքների հատկանիշները.օրինակ՝ տիկնիկը փափուկ է , հագել է վարդագույն զգեստ, անունը Նունիկ է։ Սպասքի գնորդին վաճառողը ներկայացնում է սպասքի տեսակները, որակը, գույնը, կարևորությունը. օրինակ կարմիր մեծ ապակյա ափսեն, վարդագույն թեյնիկը և այլն։ Գրենական բաժնի վաճառողը ներկայացնում է գունավոր մատիտների որակը, երանգները, վրձինները, գունավոր թղթերը, գուաշները։ Ե՛Վ վաճառողները և գնորդները մեծ բավականություն ստացան, ոգևորված և բարձր տրամադրությամբ, համբերատար սպասում էին իրենց հերթին։

Եզրակացություն

Այսպիսով ուսումնասիրելով և իրականացնելով մի շարք տեսական և գործնական աշխատանքներ՝ հանգեցինք հետևյալ եզրակացության.

- Խաղը նպաստում է երեխայի բազմակողմանի զարգացմանը՝ մասնավորապես հիշողության, երևակայության, մտածողության, ստեղծագործական մտքի, հաղորդակցման և կապակցված խոսքի զարգացմանը: Ընդլայնվում է երեխաների աշխարհհայացքը, դրսևորվում է կամային որակներ, ձեռք է բերում անձնային աճ՝

Գիտելիք

Կարողություն

Հմտություն

Օգտագործված գրականության ցանկ

2. Մանուկյան Լ.

   «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում»

   Երևան 2007, էջ 60

3. Սմբատյան Լ.

   «Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում»

   Երևան 2014, էջ 222

4. Սմբատյան Լ.

   «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում»

   Երևան 2014, էջ 151

5. Н. П. Аникеева, Васпитание игрой, М., «Просвещение», 1987, с. 18

6. Lib. armedu.am

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Մեթոդժամերի, խորհրդատվական քննարկումների դերն ու նշանակությունը որպես կրթական աշխատանքների արդյունավետության բարձրացման միջոց*

ԿԱՏԱՐՈՂ՝ ***Սյուզաննա Հովհաննիսյան***

ՂԵԿԱՎԱՐ՝ ***մ.գ.թ. Լուսինե Միրաբյան***

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1. Մեթոդմիավորման աշխատանքների բովանդակությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում 5

Գլուխ 2. Մեթոդական ժամերի, խորհրդատվական քննարկումների արդյունավետության բարձրացման ուղիներն ու միջոցները..... 8

Փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծություն և ընդհանրացում.....13

Եզրակացություն 17

Գրականության ցանկ 19

Հավելվածներ

Ներածություն

Մեթոդական աշխատանքը գործունեության ամբողջական համակարգ է և ուղղված է նախադպրոցական ուսումնական հաստատության ռազմավարական խնդիրների իրականացման ամենաարդյունավետ որակի ապահովմանը:

Ժամանակակից կրթությունը զարգանում է նորարարական որոնման եղանակով՝ առաջացնելով մանկավարժական գործունեության տարբեր բաղադրիչների փոփոխություններ:

Հատուկ կազմակերպված մեթոդական աշխատանքները, խորհրդատվական քննարկումները օգնում են դաստիարակին յուրացնել մանկավարժական նոր մտածողությունը, կրթական համակարգում բարդ խնդիրներ լուծելու պատրաստակամությունը, կատարելագործելու իրենց մանկավարժական հմտությունները:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Մանկավարժական հմտությունների մակարդակի բարելավումը մեթոդական աշխատանքի առաջնահերթ ոլորտ է, որը հատուկ տեղ է զբաղեցնում նախադպրոցական հաստատության կառավարման համակարգում: Այն նպաստում է մանկավարժի անհատականության ակտիվացմանը, նրա ստեղծագործական անհատականության զարգացմանը: Արդի կրթական չափորոշիչների պահանջներն են մանկավարժական գործընթացը դարձնել այնպիսին, որ երեխաներն իրենք դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասսիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Այդ գործում մեծ ներդրում ունի մեթոդմիավորումների աշխատանքները:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել մեթոդժամերի, խորհրդատվական քննարկումների դերի ու նշանակության վերաբերյալ գիտամեթոդական և գիտատեսական գրականությունը, ծանոթանալ մեթոդմիավորման աշխատանքների համակարգին ՆՈՒՀ-ում, ուսումնասիրել մեթոդական աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են՝

• նկարագրել մեթոդմիավորման աշխատանքները, բացահայտել այդ աշխատանքների բարելավման, կատարելագործման հիմնական ուղղությունները,

• բացահայտել դաստիարակների ինքնակրթության, ինքնազարգացման հիմնախնդիրները,

• բացահայտել մեթոդական աշխատանքների, խորհրդատվական քննարկումների բարելավման ուղիներն ու միջոցները նախադպրոցական ուսումնական հաստատություններում,

• իրականացնել փորձարարական աշխատանքներ՝ միտված բացահայտելու և պարզելու ՆՈՒՀ-երում իրականացվող մեթոդական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը և մանկավարժների ներգրավվածության մակարդակը նորարարության ոլորտում:

Կարևորելով մեթոդմիվորումների աշխատանքը և խորհրդատվական քննարկումները ՆՈՒՀ-ում կրթական աշխատանքների իրականացման գործընթացում փորձել ենք ներկայացնել մեթոդական աշխատանքների բովանդակությունը, մեթոդմիավորումների աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղիներն ու միջոցները, որոնք համապատասխանում են կրթական համակարգի արդի պահանջներին ու կրթական չափանիշներին:

Հետազոտական աշխատաքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, փորձարարական մասից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառել ենք դիտման, հարցաթերթիկի, զրույցի մեթոդները:

Գլուխ 1. Մեթոդմիավորման աշխատանքների բովանդակությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում մեթոդական աշխատանքի բովանդակությունը որոշվում է կրթական համակարգի զարգացման նպատակներին և խնդիրներին համապատասխան:

Միևնույն ժամանակ, ժամանակակից ՆՈՒՀ-ի հիմնական գործառույթը երեխայի անձի նպատակաուղղված սոցիալականացումն է. նրան ծանոթացնել և ընդգրկել մարդկային փոխհարաբերությունների աշխարհ, փոխանցել վարքի լավագույն օրինակները, մեթոդները և վարքագծի նորմերը՝ կյանքի բոլոր ոլորտներում[3, էջ 62]:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, տարբեր լսարանների կողմից կրթության որակը ոչ միանշանակ է ընկալվում: Օրինակ, ծնողները նախադպրոցական կրթության որակը կապում են երեխաների անհատականության զարգացման և դպրոց ընդունվելու նրանց պատրաստակամության աստիճանի հետ: Մանկավարժների համար որակը, որպես կանոն, նշանակում է լիարժեք մեթոդական աջակցություն ձեռնարկներով, մանկավարժական գործընթացի մշակումներով և խորհրդատվական քննարկումների անընդհատությամբ:

Որակը ողջ մանկավարժական կազմի գործունեության արդյունքն է: Որոշելով իր նախադպրոցական ուսումնական հաստատության զարգացման հիմնական նպատակները՝ յուրաքանչյուր ղեկավար մեթոդմիավորման հետ միասին կազմակերպում է մանկավարժական գործընթացը, ինչը նշանակում է, որ նա անընդհատ համեմատում է ստացված արդյունքները[2, էջ 86]:

Մեթոդական գործունեության խնդիրն է ստեղծել այնպիսի կրթական միջավայր մի հաստատությունում, որտեղ դաստիարակի և մեթոդական կազմի ստեղծագործական ներուժն ամբողջությամբ կիրացվի: Դաստիարակների մեծ մասը, հատկապես սկսնակները, միշտ օգնության կարիք ունեն՝ ավելի փորձառու գործընկերներից, ղեկավարներից, ավագ մանկավարժներից[2, էջ 87]:

Այսօր նախադպրոցական հաստատությունում մեթոդական աշխատանքի իրական մակարդակը դառնում է նրա գործունեությունը գնահատելու կարևորագույն չափանիշներից մեկը:

Մանկավարժական գործունեության որակի բարձրացման համար կարևորագույն պայման է մեթոդական աշխատանքը: Վերջինիս իրականացման համար նախատեսված են հատուկ ժամեր, որոնք հնարավորություն են տալիս յուրաքանչյուր դաստիարակի ոչ միայն բարձրացնել իրենց մասնագիտական մակարդակը, այլև ձեռք բերել նոր գիտելիքներ:

Մեթոդական ժամերը պետք է ուղղված լինեն մանկավարժական կոլեկտիվի անդամների համակարգված գործունեության, որը նպատակաուղղված է նրանց ընդհանուր մանկավարժական և հոգեբանական, գիտական-տեսական, մեթոդական պատրաստականության, մասնագիտական վարպետության բարձրացմանը:

Մանկապարտեզում իրականացվող մեթոդական աշխատանքի նպատակներն են՝

- ✓ նախադպրոցականների ուսուցման և դաստիարակության առավել ռացիոնալ մեթոդների և հնարների յուրացում, տիրապետում,
- ✓ կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում մանկավարժի՝ ընդհանուր ուսուցողական և մեթոդական մակարդակի բարելավում,
- ✓ մանկավարժական կոլեկտիվում միմյանց աշխատանքային փորձի փոխանակում,
- ✓ կրթադաստիարակչական գործընթացի որակի բարձրացում, մանկավարժների տեսական և փորձարարական, վերլուծական ունակությունների զարգացում[3, էջ 64]:

Մեթոդական աշխատանքի կազմակերպման խնդիրներն են՝

- ✓ մանկավարժական գիտության նվաճումների ներդրում աշխատանքային պրակտիկայում,
- ✓ մանկավարժական կոլեկտիվի սիստեմատիկ գործունեության և ուսումնասիրության ընթացքում բացահայտված նորարարական ուղղության ձևավորում,
- ✓ մանկավարժների տեսական և գործնական գիտելիքների մակարդակի բարձրացում,
- ✓ կրթական նոր ծրագրեր, ուսումնական պլաններ՝ կրթական պետական չափորոշիչներին համապատասխան,

✓ ինքնակրթության, ինքնակատարելագործման հարցում մանկավարժական խորհրդատվական աջակցության ցուցաբերում[3, էջ 64-65]:

Տարբեր տարիների փորձը ցույց է տվել, որ մեթոդական աշխատանքի բովանդակության մշակումը դաստիարակի աշխատանքի արդյունքների հետ ապահովում է յուրաքանչյուր մանկավարժի մասնագիտական հմտությունների կատարելագործման շարունակական գործընթացը: Մեթոդական աշխատանքի ավանդական ձևերը, որոնցում հիմնական տեղը հատկացվում էր զեկուցումներին և ելույթներին, կորցրել են իրենց նշանակությունը ցածր արդյունավետության և անբավարար արձագանքների պատճառով:

Այսօր անհրաժեշտ է օգտագործել աշխատանքի նոր, ակտիվ ձևեր, որոնք բնութագրվում են ներգրավվածությամբ՝ ներառելով կարծիքների ազատ փոխանակում, ինքնակրթության համար հետաքրքրության և մոտիվացիայի խթանում, ակտիվության և անկախության մակարդակի բարձրացում, վերլուծության և իրենց գործունեության արտացոլման հմտությունների զարգացում, ինչպես նաև համագործակցության ցանկության զարգացում:

ՆՈՒՀ-ում տարվող մեթոդական աշխատանքն ինքնանպատակ չէ: Այն իրականացվում է կրթության և դաստիարակության կայուն արդյունքների ստացման և պահպանման նպատակով: Դաստիարակների հետ տարվող մեթոդական աշխատանքը մանկապարտեզի տնօրինության հիմնական խնդիրներից մեկը պետք է համարվի և միշտ պահվի ուշադրության կենտրոնում[2, էջ 87]:

Մեթոդական աշխատանքի կազմակերպման հիմնական տեսակներն են ՝



Գլուխ 2. Մեթոդական ժամերի, խորհրդատվական քննարկումների արդյունավետության բարձրացման ուղիներն ու միջոցները

Ինչպես նշեցինք նախորդ գլխում յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորումը կիրառում է տարբեր աշխատաոճեր. կլոր սեղաններ, սեմինարներ, մանկավարժական ընթերցումների օրեր, զեկույցներ, թեմատիկ քննարկումներ, մշտադիտարկումներ:

Կարևոր են մեթոդական աշխատանքների վերջնական արդյունքների իրական ցուցանիշները որոշելու համար ձևավորել գնահատման չափանիշներ[1, էջ 26]: Մեր կարծիքով այն կարելի է իրականացնել անկետավորման միջոցով՝ ներառելով հետևյալ հարցերը

1. Ի՞նչն է Ձեր աշխատանքում ամենահաջողվածը:
2. Կցանկանա՞ք արդյոք Ձեր փորձը փոխանցել Ձեր գործընկերներին:
3. Աշխատանքում ո՞ր հարցում եք դժվարանում:
4. Ի՞նչը կփոխեիք Ձեր աշխատանքում:

Լրացված հարցաթերթիկի հիման վրա ղեկավարը կազմում է յուրաքանչյուր մանկավարժի վարպետության գնահատման նկարագիր, որի հիման վրա մեթոդական ժամերին պլանավորում են որոշ թեմաների քննարկում:

Օրինակ, Վանաձորի թիվ 33 ՆՈՒՀ-ում մեթոդական ժամին դաստիարակներին առաջարկվեց «կերտել իդեալական դասիարակի կերպարը ՆՈՒՀ-ում», իրենց պատկերացմամբ: Բուռն քննարկումների արդյունքում ստացանք դաստիարակի հետևյալ ընդհանրացված նկարագիրը՝ «Մանկապարտեզի դաստիարակը պետք է լինի հանգիստ, խելացի, միշտ պատրաստ որակյալ օգնություն ցուցաբերել իր գործընկերներին, պետք է լավ տրապետի մասնագիտական գիտելիքներին, կարողություններին և հմտություններին, ճիշտ և համակարգված կազմակերպի իր աշխատանքը: Ամենակարևորը, զբաղվի ինքնուսուցմամբ՝ ուղղված իր մասնագիտական կարողությունների հարստացմանը, կարողանա իր սաների համար կառուցել անհատական զարգացման ուղի»:

Իդեալական դաստիարակի ընդհանրական դիմանկարի վրա կենտրոնանալով՝ առաջանում է նրա ինքնակրթության անհրաժեշտությունը: Արդյունքում կազմվեց ինքնակրթության ծրագիր՝ հաշվի առնելով

աշակերտակենտրոն մոտեցումը: Ինքնակրթության վրա աշխատանքը մանկավարժների մասնագիտական կարողությունների աճի կենտրոնական ձևերից մեկն է:

Առանձնացնում ենք մեթոդական աշխատանքների կազմակերպման հետևյալ ձևերը՝

1. անհատական
2. խմբային

Մեթոդական աշխատանքի անհատական ձևերից է ինքնակրթությունը: Ինքնակրթությունը մանկավարժի կողմից մասնագիտական գիտելիքների, հմտությունների կատարելագործումն է: Հիմնական ձևը գրականության ինքնուրույն ուսումնասիրությունն է, որի աղբյուր են հանդիսանում դասախոսությունները, զեկույցները, ցուցահանդեսների այցելությունները և այլն: Այն մեծապես նպաստում է անձի ընդունակությունների, ստեղծագործական ներուժի, ինքնարտահայտման բացահայտմանը:

Ինքնակրթության ձևերը բազմազան են՝

- ✓ աշխատանք գրադարանում՝ գրքի հետ, պարբերականներով
- ✓ մասնակցություն գիտագործնական խորհրդատվություններին, համաժողովներին,
- ✓ խորհրդատվության ստացում բարձրագույն ուսումնական հաստատություններում
- ✓ աշխատանք մեթոդական կենտրոններում[3, էջ 66]:

Սկսնակ մանկավարժների համար առաջարկում ենք ընտրել ինքնակրթության հետևյալ թեմաները

1. Նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելու մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքների համախմբում՝ հաշվի առնելով աշակերտակենտրոն մոտեցումը,
2. Կրթության, դաստիարակության և զարգացման անհատականության վրա հիմնված մոդել.
3. Մանկավարժական հմտությունների սկիզբների ձևավորում:

Այսպիսով, ինքնակրթության գործընթացը ենթադրվում է, որ մանկավարժները կբարելավեն սեփական հմտությունները, գործնական և տեսական գիտելիքները, թիմում կկազմակերպվի պրոֆեսիոնալիզմի և ստեղծագործելու ոգին, մանկավարժները կլինեն ինքնազարգացման և որոնման մեջ:

Մեթոդական ժամերին տրմադրված առաջադրանքները կարող են իրականացվել այնպիսի ձևերի միջոցով, ինչպիսիք են տեսական և պրակտիկ սեմինարները, խմբային մեթոդական խորհրդատվությունը, անհատական մեթոդական խորհրդատվությունը, ինքնակրթությունը, անհատական գիտամեթոդական թեմայով աշխատանք, հետազոտական աշխատանք և այլն:

Օրինակ, եթե սեմինարը լավ է նախապատրաստված (թեման ընտրված է դաստիարակների պահանջարկին համապատասխան, կազմված է պլան, ռացիոնալ որոշված աշխատանքի ժամանակը, մտածված են մանկավարժների հանձնարարականները), ապա վերջնական արդյունքը կլինի բարձր:

Սեմինարները և սեմինար-պրակտիկումները օգնում են մանկավարժներին կատարելագործելու մանկավարժական մասնագիտական վարպետությունը, քանի որ դրանք առաջարկում են յուրաքանչյուրին ակտիվ մասնակցություն: Ահա թե ինչու անհրաժեշտ է մանկապարտեզի տարեկան աշխատանքային պլանում սեմինար-պրակտիկումի թեման որոշել ուստարվա սկզբում: Սեմինարը կարող է բաղկացած լինել 2-3 և ավելի պարապմունքներից, որտեղ համադրվում են խնդիրների քննարկումը, նոր գրականության հետ ծանոթացումը, առաջավոր փորձի փոխանակումը, գործնական խնդրի իրականացումը, մանկավարժական աշխատանքի տարրերի յուրացումը, գործընկերների աշխատանքի դիտումը:

Խորհրդատվական քննարկումները նույնպես օգնում են մանկավարժներին կատարելագործելու իրենց գիտելիքները և հմտությունները:

Ցանկացած խորհրդատվություն մեթոդիստից պահանջում է իր իրավասությունների շրջանակներում՝ դաստիարակի մասնագիտական հետևողական նախապատրաստում:

Խորհրդատվական քննարկումներ կարելի է անցկացնել ինչպես անհատական, այնպես էլ խմբերով՝ մանկավարժական և հոգեբանական արդիական հարցերի ուղղությամբ: Այս ձևաչափով առաջնային խնդիրներն են նոր մանկավարժական

գաղափարների և տեխնոլոգիաների զարգացումը՝ հաշվի առնելով անհատականության վրա հիմնված մոտեցումը, դրանց հարմարեցումը տվյալ հաստատության պայմաններին և դրանց ներդրումը մանկավարժական աշխատանքի պրակտիկայում: Հիմնականում խորհրդատվությունները պլանավորում են ամբողջ տարվա համար: Սակայն անհրաժեշտության դեպքում կարող են փոփոխել[3, էջ 67]:

Խորհրդատվությունները նույնպես իրականացվում են տարբեր ձևերով: Օրինակ՝ կարելի է ընտրել որևէ պրոբլեմային թեմա: Սկզբում ձևավորվում է պրոբլեմը՝ ցույց տալով լուծման ուղիները:

Խորհրդատվություններ կարելի է անցկացնել բացատրության, զրույցի ձևերով: Զրույցի ընթացքում վերլուծվում են ուսումնասիրվող նյութին առնչվող մեթոդական գրականության դրույթները, տրվում բացատրություններ այն հարցերի շուրջ, որոնք հետաքրքրում են մանկավարժներին, բացահայտում են սխալները, տեղեկատվության ընկալման մակարդակը:

Խորհրդատվության ընթացքում կիրառելի է նաև բանավեճի մեթոդը: Այս մեթոդը կիրառելիս անհրաժեշտ է ապահովել հետևյալ բաղադրիչները՝ համակողմանիորեն քննարկման կարիք ունեցող թեմայի քննարկում, նախապես հարցերի նախապատրաստում, ներածական կամ եզրափակիչ խոսք: Այս մեթոդը կարելի է կիրառել հետևյալ թեմայի շուրջ «Ներառական կրթությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում»: Խումբը կարելի է բաժանել երեք խմբի՝ կողմ, դեմ և չեզոք: Ի տարբերություն զրույցի, բանավեճում անհրաժեշտ է վիճելի հարցերի կամ թեմաների առաջադրում: Օրինակ՝ «Ի՞նչ է ներառական կրթությունը», «Ի՞նչ պայմաններ պետք է ստեղծվեն մանկապարտեզում, ներառական երեխաների անվտանգ կրթությունն իրականացնելու համար», «Արդյոք ճի՞շտ եք համարում ներառական կրթության իրականացումը ՆՈՒՀ-ում», «Ինչպե՞ս կներկայացնեք ծնողներին այս թեման», «Ինչպիսի՞ աշխատանքներ կիրականացնեք ծնողների և երեխաների հետ» և այլն: Բանավեճի ընթացքում կարևոր են մտքերի պայքարը և բախումը: Բանավեճը վարելիս մեթոդիստից պահանջվում է ցուցաբերել իրավիճակային արագ կողմնորոշում, վստահության մթնոլորտի ստեղծում: Վերջում

կատարվում է մասնակիցների ելույթների վերլուծություն, բացահայտվում են սկզբունքային հարցերը:

Մեթոդական և խորհրդատվական քննարկումների ժամերին հատկապես կարևոր են ոչ փորձառու դաստիարակների ներգրավվածությունը: Մանկավարժի բարենպաստ ադապտացումը նոր պայմաններին մեթոդական աջակցության առաջնային խնդիրներից է: Այս շրջանում կարևոր դեր է խաղում դաստիարակի հետ անհատական աշխատանքը:

Մեր կարծիքով մեթոդական աջակցության հիմնական խնդիրները անփորձ դաստիարակների համար հետևյալն է.

- օգնել ուսուցչին հարմարվել նոր պայմաններին,
- դաստիարակների արդյունավետ և ակտիվ ներգրավվածությունը կրթական գործընթացում,
- դաստիարակի գործնական կարողությունների և հմտությունների ձևավորում,
- կողմնորոշվել նախադպրոցական հաստատության կազմակերպչական մշակույթի զարգացման մեջ:

ՆՈՒՀ-երում մեթոդական աշխատանքներ իրականացվում են նաև երեխաների ծնողների հետ: Մանկապարտեզի մեթոդիստը առաջարկում է ընտանիքների հետ աշխատանքի ինտերակտիվ ձևեր, որը կօգնի դաստիարակներին տեղեկատվություն պաշար ստեղծել ինչու չէ նաև ծնողներին կրթելու համար:

Այսպիսով, մեթոդական աջակցությունը, խորհրդատվական քննարկումները պետք է ուղղված լինի ակտիվ նախաձեռնության ձևավորմանը, նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի անհատականությանը, երեխաների, գործընկերների և ծնողների հետ աշխատելու գործնական հմտությունների զարգացմանը, բարձր մակարդակի բարձրացման և ինքնազարգացման անհրաժեշտությանը, ուսուցման պլանավորմանը կրթական գործընթաց՝ հաշվի առնելով անհատականության վրա հիմնված մոտեցումը:

Փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծություն և ընդհանրացում

Հետազոտական աշխատանքն իրականացրել ենք առանձնացնելով հետևյալ նպատակները՝ բացահայտել ՆՈՒՀ-ում իրականացվող մեթոդական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը և մանկավարժների ներգրավվածության մակարդակը: Հետազոտության ժամանակ հարցազրույցներ ունեցանք Վանաձորի 33-րդ, 10-րդ ՆՈՒՀ-երի մեթոդմիավորման ղեկավարների, մանկավարժների հետ:

Հետազոտությունն անց ենք կացրել մի քանի փուլով:

Առաջին մասում ներկայացված են մանկավարժների հետ հարցաթերթով հարցման արդյունքը, որն ավարտվում է եզրակացություններով: Հարցմանը մասնակցել են 20 մանկավարժներ:

Հարցեր	**Մանկավարժների կողմից դրական պատասխանների թիվը**	**Պատասխանների արդյունքները**
1 . Մասնակցո՞ւմ եք մանկապարտեզի նորարարական աշխատանքներին	4	25 %
2. Ձեր նշանակությունը զգո՞ւմ եք մանկապարտեզի խնդիրների լուծման գործում	14	87 %
3. Ձեր աշխատանքային փորձը երբևէ ներկայացրե՞լ եք գիտամանկավարժական հրապարակումներում	5	31 %
4. Ձեր գիտելիքները, հմտությունները բարելավելու կարիք զգո՞ւմ եք	9	56 %
5. Դուք ունե՞ք հնարավորություն բարելավելու ձեր Ձեր մասնագիտական մակարդակը	10	62 %
6. Ձեզ հնարավորություն տրվո՞ւմ է կիսվել ձեր, ձեր կոլեգաների հետ	11	69 %
7. Մանկավարժական խորհուրդում, ներկայացնո՞ւմ եք ձեր դասավանդման փորձը	4	25 %
8. Վերջին տարիներին մասնակցել եք վերապատրաստման դասընթացի կամ այլ սեմինարների	6	37 %

Այսպիսով, ստացված տվյալների վերլուծությունը թույլ է տալիս պարզել, որ մանկավարժները հնարավորություն ունեն ներգրավվելու մանկապարտեզի աշխատանքներին, բարելավելու իրենց մասնագիտական մակարդակը՝ ելնելով իրենց անձնական և մասնագիտական հնարավորություններից: Միաժամանակ անհրաժեշտ է մանկավարժական առաջադեմ փորձի ներդրման համար մեթոդական աջակցություն ցուցաբերել ուսուցիչներին:

Երկրորդ մասում ներկայացված են մեթոդմիավորման ղեկավարների և մանկավարժների հետ հարցազրույցի արդյունքները: Հարցազրույցն նպատակն է բացահայտել մեթոդմիավորման ղեկավարների իմացական ոլորտի մակարդակը՝ կրթական նոր չափորոշիչների վերաբերյալ, մասնակցությունը վերապատրաստման տարբեր դասընթացներին, դրանցից ստացված դրական և բացասական արդյունքների վերլուծությունը:

Հարց 1՝ *Տեղեկացված ե՞ք հանրակրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին. Կրթական նոր չափորոշիչներին:*



Հարց 2. *Մասնակցե՞լ եք վերապատրաստման դասընթացներին, եթե ոչ, ապա ինչու՞:*



Այսպիսով. Մասնակիցների մեծամասնությունը տեղեկացված են կրթական նոր չափորոշիչներին,սակայն 47 % է լիովին տեղեկացված: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են հարցվողների 94% -ը, իսկ մյուս 6%-ը դեռ չի հասցրել վերապատրատվի, քանի որ սկսնակ դաստիարակներ են:

Հարց 3. *Որքանո՞վ եք կարևորում մեթոդմիավորման աշխատանքների իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, որպես կրթական աշխատանքների արդյունավետության բարձրացման միջոց:*







Մեթոդմիավորումների աշխատանքների արդյունավետությունը



Եզրակացություն

1. 20-րդ դարի վերջից սկսած՝ գրեթե ողջ աշխարհում տեղի ունեցան կրթական բարեփոխումներ, որոնք թելադրված էին արդի կյանքի պահանջներով: Կրթական այդ բարեփոխումները ենթադրում են բարեփոխումներ նաև նախադպրոցական ուսումնական հաստատության կրթական համակարգում՝ նոր մեթոդաբանական, հայեցակարգային մոտեցումների, նորարարական տեխնոլոգիաների ներդրում, կրթության հիմնահարցերի վերանայում, կրթության կազմակերպման, ՆՈՒՀ-ի կառավարման գործընթացներում բովանդակային փոփոխությունների անհրաժեշտություն: Մեթոդական աշխատանքի բովանդակությունը ձևավորվում է հենց այս ամենի հիման վրա, որոնք ընդհանուր են տարածաշրջանի բոլոր նախադպրոցական հաստատությունների համար:

2. Հետազոտական խնդրի տեսական վերլուծությունը և նախադպրոցական ուսումնական հաստատությունում մեթոդական աշխատանքի կազմակերպման գործնական ուսումնասիրությունը, թույլ տվեցին եզրակացնել, որ մանկապարտեզում մեթոդական գործունեության կազմակերպման աշակերտակենտրոն մոտեցումը առավելագույնս համապատասխանում է ժամանակակից մանկավարժի կարիքներին և թույլ է տալիս արդյունավետ լուծում գտնել մանկապարտեզի առաջնահերթ խնդիրների համար:

3. Մեթոդական աշխատանքը փոխկապակցված գործողությունների և միջոցառումների համապարփակ համակարգ է, որը հիմնված է առաջադեմ փորձի և գիտության ձեռքբերումների և կրթական գործընթացի կոնկրետ վերլուծության վրա, որն ուղղված է մասնագիտական հմտությունների և որակավորումների համակողմանի բարելավմանը, ՆՈՒՀ-ի մանկավարժական կազմի ստեղծագործական ներուժի ձևավորմանը, որպես ամբողջություն, ինչպես նաև կրթական գործընթացի բարելավմանը:

4. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում մեթոդական աշխատանքի գործառույթների և խնդիրների բարդությունն ու բազմազանությունը, դրա բովանդակության բազմակողմանի, անընդհատ թարմացնող բնույթը, ինչպես նաև որոշակի նախադպրոցական ուսումնական հաստատության

առանձնահատկությունները ենթադրում են նաև աշխատանքի ձևերի բազմազանություն:

5. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում մեթոդական աշխատանքի կազմակերպման արդյունավետության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հետազոտությանը մասնակցող մանկավարժներն ունեն բարձր պատրաստվածության մակարդակ և կարևորում են մեթոդական ժամերի և խորհրդատվությունների դերն իրենց աշխատանքում:

6. Մեթոդական աջակցությունը, խորհրդատվական քննարկումները պետք է ուղղված լինի ակտիվ նախաձեռնության ձևավորմանը, նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի անհատականությանը, երեխաների, գործընկերների և ծնողների հետ աշխատելու գործնական հմտությունների զարգացմանը, բարձր մակարդակի բարձրացման և ինքնազարգացման անհրաժեշտությանը, ուսուցման պլանավորմանը կրթական գործընթաց՝ հաշվի առնելով անհատականության վրա հիմնված մոտեցումը:

Գրականության ցանկ

1. Ա. Հովհաննիսյան, Նախադրոցական կրթական համակարգում մանկավարժական գնահատականը, Երևան, 2008թ.:
2. Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան, Ն-դ մանկավարժություն, Երևան 2005թ.
3. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան, 2010թ.:

Հավելված 1


Ուսուցում
Գիտահետազոտական սեմինարներ,
համագործակցություն
մանկավարժական խորհուրդ, մեթոդական միավորում, ստեղծագործական խմբեր, մեթոդմիավորման անդամ
Մանկավարժի մասնագիտական զարգացման միջավայրը
Նվաճումները
Կարողությունների դաշտ, բաց պարապմունքներ, փորձի փոխանակում, մրցակցություն
մանկավարժի
մանկավարժ, կազմակերպիչ, փորձագետ, միջնորդ, տեղեկատու, վերլուծաբան,
մանկավարժի մասնագիտական գործունեությունը
պարապմունքներ, էքսկուրսիաներ, ինտերակտիվ պարապմունքներ

Հավելված 2


ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ
ԽՄԲԱՅԻՆ
ԱՆՀԱՏԱԿԱՆ
Հոգեբանամանկավարժական թեմաներով սեմինարներ
Մանկավարժական զեկուցումներ
Մեթոդական շաբաթներ
Մեթոդական հավաքներ
Ստեղծագործական հաշվետվություններ
Դաստիարակների ինքնակրթությունը
Փորձառու դաստիարակների համագործակցության կազմակերպումը սկսնակ դաստիարակների հետ
Մասնագիտական հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթերի, նյութերի անհատական ուսումնասիրում
Մեփական գործունեության վերլուծություն
Ձեռնարկների, դիդակտիկ նյութերի ստեղծում
Զրույցներ
Անհատական խորհրդատվություններ
Այցելություններ փորձառու ուսուցիչների բաց դասերին
Անհատական առաջադրանքների կատարում՝ տնօրենի հսկողությամբ


Մեթոդական աշխատանքի մակարդակները
ճանաչողական
Գործնական
որոնողական

Հավելված 3


Մեթոդական աշխատանքի կազմակերպումը ՆՈՒՀՀ-ում
Ուսումնա-մեթոդական և կազմակերպա-մանկավարժական փաստաթղթերի պատրաստում
Պրոցեսային և ստեղծագործական խմբերի հետ աշխատանքի կազմակերպում
Մանկավարժական փորձի փոխանցում
մեթոդական և գործնական սեմինարների անցկացում
Արդյունքների ամփոփում և նոր խնդիրների ցուցադրում
Ստացված արդյունքների հավաքում և վերամշակում
Աշխատանք ծնողների հետ
Ստեղծագործող մանկավարժների խթանում և ընդլայնում
Ինքնակրթությու
Գործնական օգնություն սկսնակ մանկավարժներին

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Շարժախաղերի դերը նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման գործում»

ԿԱՏԱՐՈՂ՝ Սուսան Ձիվանբեկի Գրիգորյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.Գ.Թ. Լուսինե Միրաբյան

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ 1. ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ----------4

ԳԼՈՒԽ 2.1 ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ----------7

ԳԼՈՒԽ 2.2 ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ----------9

Փորձարարական մաս----------14

Եզրակացություն----------15

Գրականություն----------16

Ներածություն

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ապահովում է երեխաների առողջությունը, նպաստում ֆիզիկական ճիշտ զարգացմանը, օրգանիզմի կոփմանը:

Աշխատանքի նպատակը առողջության պահպանումն է ու ամրապնդումը, առողջ ապրելակերպի հաստատումը:

Հետազոտության նպատակը՝ ուսումնասիրել «Շարժախաղերի դերը նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման գործում» թեմային վերաբերող գիտական, գիտամեթոդական գրականություն, այլոց փորձը ուսումնասիրել և կատարել եզրահանգումներ:

Աշխատանքի խնդիրներն են.

- ✓ Նկարագրել շարժախաղերի բնույթը,
- ✓ բացահայտել շարժախաղերի դերը երեխաների զարգացման գործում,
- ✓ իրականացել հետազոտություն երեխաների շրջանում:

Ֆիզակական զարգացման լավագույն միջոցը ֆիզիկական դաստիարակությունն է, որի անհրաժեշտությունն առավել կարևորվում է ն/դ տարիքում: Այս տարիքում շարժախաղը մեծ նշանակություն ունի երեխայի անհատականության ձևավորման,շարժողական որակների զարգացման, մարմնի ճիշտ կեցվածքի ձևավորման համար:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածական մասից, 2 գլխից, հետազոտական մասից, եզրակացությունից և գրականությունից: Հետազոտությանը մասնակցել են թվով 20 երեխաներ: Ծավալը՝ 16 տպագիր էջ:

ԳԼՈՒԽ 1. ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում բոլոր տեսակի խաղերից ամենամեծ տեղը զբաղեցնում է շարժախաղը:

Շարժախաղը ունի կանոններ, որի ընթացքում դաստիարակության մյուս խնդիրների հետ միասին առաջին հերթին իրականացվում է երեխայի շարժումների զարգացման խնդիրը:

Նախադպրոցական տարիքի երեխան դրսևորում է շարժման ուժեղ պահանջ,նա չի կարողանում երկար ժամանակ մի տեղում նստած կամ կանգնած մնալ:Օրվա ընթացքում առողջ երեխան բավականին վազում ,քայլում, ցատկում է;Այդ շարժումները ավելի զարգանում,ամրապնդվում և կատարելագործվում են նրա հետ կազմակերպվող շարժախաղերում,որոնք համարվում են երեխաների ֆիզիկական գործունեության հիմնական ձևը:

Խաղերի ճիշտ կազմակերպումը դրական ազդեցություն է ունենում երեխայի բազմակողմանի,ներդաշնակ զարգացման վրա:Դրանք ամրապնդում են նրա ֆիզիկական, բարոյական և մտավոր կարողությունները, նպաստում են աշխատանքային տարրական ունակությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, դարձնում են նրան արագաշարժ, դիմացկուն, ճարպիկ: Շարժախաղերում երեխան հանդես է բերում իր նախաձեռնությունը, հնարամտությունը՝ բռնողից, իրեն հետապնդողից խուսափելու, դժվարին կացությունից դուրս գալու համար:

Շարժածաղերը ընդգրկում են հիմնական շարժումների բոլոր ձևերը (վազք, քայլք, ցատկ, նետում, մագլցում, սողանցում):

Շարժախաղերում երեխաները գործում են բոլորը միասին կազմակերպված, ենթարկվում բոլորի համար պարտադիր կանոններին: Այդ ամենը դաստիարակում է երեխայի վարքը, որովհետև նման խաղերում երեխան պետք է զսպի իրեն, օգնի ընկերոջը, հաղթահարի որոշ դժվարություններ, պայմաններին համապատասխան փոխի շարժման բնույթը և այլն:

Այս բոլորը ոչ միայն զարգացնում այլև ընդարձակում է երեխայի շարժողական հնարավորությունների ոլորտը, ստիպում նրան լինել ակտիվ, գործունյա,

նախաձեռնող:

Այս բոլորը ոչ միայն զարգացնում այլև ընդարձակում է երեխայի շարժողական հնարավորությունների ոլորտը, ստիպում նրան լինել ակտիվ, գործունյա, նախաձեռնող:

Շարժախաղերը նպաստում են երեխայի երևակայության, դիտողականության, ուշադրության, հիշողության և դրական հույզերի դաստիարակմանը: Դրանք առաջ են բերում մի շարք հաճելի զգացումներ, ստեղծում առույգ, կենսուրախ տրամադրություն, որի շնորհիվ ամրապնդվում է նյարդային համակարգի շարժողական ապարատի գործունեությունը:

Խաղի ընթացքում երեխաները կատարում են մտքերի փոխանակություն, արտասանում կարճ ոտանավորներ, օրինակ՝

- ✓ «Արջի մոտ անտառում»,
- ✓ «Սագեր-կարապներ»,
- ✓ «Փուչիկ»,
- ✓ «Մկան թակարդ»,
- ✓ «Մենք ուրախ երեխաներ ենք» խաղերում:

Այդ բոլորը նպաստում են երեխայի խոսքի զարգացմանը:

Շարժախաղերը հանդիսանում են նաև երեխաների ակտիվ հանգիստը կազմակերպելու միջոց:

Տարբեր պարապմունքներից հետո երեխաների մոտ նկատվում է հոգնածություն, ալարկոտություն, անտարբերություն: Այստեղ է, որ շարժախաղերը, որպես գործունեության ձևերի փոփոխություն, վերացնում են հոգնածությունը:

Ն.Կ.կրուպսկայան նշել է որ շարժախաղերը մեծ նշանակություն ունեն երեխայի կյանքում, նրա գործողություններում, որ խաղը պետք էլայնորեն օգտագործել մանկավարժական պրոցեսում, մասնավորապես երեխայի ֆիզիկական բազմակողմանի դաստիարակության նպատակով:[1,էջ 6]

Շարժախաղերում երեխաները շատ ավելի ինքնուրույն և ակտիվ են, քան ֆիզիկական վարժություններ կատարելիս: Խաղն իր աշխուժությամբ և մրցակցական

պահերով նրանց մոտ առաջացնում է հետաքրքրություն, ուրախ տրամադրություն,

նրանք իրենց հուզերն արտահայտում են բացականչություններով, տեղում ցատկելով , ծափերով: Դաստիարակը պետք է հետևի, որ երեխաները պահպանեն կուլտուրական վարքագծի կանոնները:

Ընտրելով շարժախաղերը՝ անհրաժեշտ է պահպանել դրանց մատչելիությունը, հաջորդականությունը՝կատարելով աստիճանական անցումը պարզ բովանդակությունից, կանոններից, կազմակերպումից, դեպի ավելի բարդը:

Մեր երեխաներին հարկավոր են հրապուրիչ, հուզական խաղեր, որոնք հետաքրքիր կդարձնեն ոչ միայն ֆիզկուլտուրայի պարապմունքները, այլ նաև զբոսանքները, արշավները, տոնահանդեսները, երեխաները բովանդակալից կանցկացնեն իրենց հանգիստն օրվա ընթացքում, բակային հրապարակներում, ճամբարներում, արձակուրդներում:

Երեխաների շարժախաղերում իրենց ուրույն տեղն ունեն հատկապես ժողովրդական մանկական խաղերը, որոնք համարվում են մանկավարժության ավանդույթային միջոց և մատչելի են բոլոր տարիքի երեխաների համար, երեխաներին ծանոթացնում են մեր ազգային ավանդույթներին և մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիարակության հետ կազմելով մի ընդհանուր համալիր՝ ապահովում են նրանց համակողմանի, ներդաշնակ զարգացումը, հոգևոր հարստությունը, բարոյական մաքրությունը, ֆիզիկական կատարելությունը: Շարժախաղերն ունեն իրենց տարբերակները, որոնք ոչ միայն բազմազանություն են հաղորդում խաղերին և պահպանում հետաքրքրությունը խաղի նկատմամբ, այլև հնարավորություն տալիս ստեղծելու նոր խաղեր:

ԳԼՈՒԽ 2.1 ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում բոլոր տեսակի խաղերից ամենամեծ տեղը զբաղեցնում է շարժախաղը:

Շարժախաղ համարվում էյուրաքանչյուր խաղ, որն ունի կանոններ և որի ընթացքում դաստիարակության մյուս խնդիրների հետ միասին առաջին հերթին իրականացվում է երեխայի շարժումների զարգացման խնդիրը:

Խաղային գործունեությունն ինչպիսի ձև ուզում է ունենա , միշտ ուրախություն է պատճառում երեխային , իր անակնկալներով բարերար ներգործություն է ունենում երեխայի հոգեկանի վրա և նպաստում դաստիարակչական շատ խնդիրների իրականացմանը:

Ցանկացած խաղ ՝ ստեղծագործական , դիդակտիկ , երաժշտական , շարժախաղ հանդիսանում են յուրահատուկ միջոց ՝ երեխային շրջապատող միջավայրին ծանոթացնելու համար: Շարժախաղերի բովանդակությունն իր մեջ պարունակում է մի շարք ուսուցողական նյութեր , որոնք ընդլայնում են երեխայի մտահորիզոնը , ճշտում պատկերացումները :

Շարժախաղերի յուրահատուկ հատկանիշը համարվում է խաղացողների գործունեության շարժուն բնույթը, որոնք ուղղված են բացահայտելու նրանց առջև դրված նպատակը և պայմանավորված են որոշակի կանոններով:

Այդպիսի խաղերը հիմնականում կազմակերպվում են դաստիարակի կողմից ամբողջ խմբի կամ խմբի մեծ մասի հետ: Այդպիսի խաղերն անվանում են կոլեկտիվ շարժախաղեր կանոններով:

Կոլեկտիվ շարժախաղերը տարբերվում են իրենց բովանդակությամբ, դրանցից մի մասն ունի սյուժե, իսկ մյուսը՝ ոչ: [2, էջ 5]

Նախադպրոցական տարիքի երեխաներին շատ ավելի մոտ են սյուժե ունեցող խաղերը, որոնք իրենց բազմազանությամբ հրապուրում են երեխաներին:

Սյուժեով խաղերն ընդլայնում են երեխայի մտահորիզոնը, ճշտում պատկերացումները շրջապատող իրականության մասին: Այդ խաղերի թեման կազմում են մարդկանց կյանքի դրվագները, բնության երևույթները և կենդանիները:

(<<Փողոցում>>, <<Ինքնաթիռներ>>, <<Երկու սառնամանիք>>, <<Անձրև և արև>>, <<Կապիկները>>, <<Ծիտիներն ու ավտոմեքենան>>, <<Նապաստակներ>> և այլն)

Այդ խաղերում երեխան մեկ հանդես է գալիս օդաչուի, վարորդի, կապիկի, թռչունի, գայլի կերպարներում, որը և հնարավորություն է տալիս ծանոթանալու մարդկանց աշխատանքի ձևերին, կենդանիների առանձնահատկություններին(Կապիկները մագլցում են, թռչունները թռչում են, նապաստակները ոստոստում են) և երեխան իր շարժումները նմանաեցնում է այդ կենդանիների շարժումներին:

Սյուժե չունեցող խաղերի հիմքում ընկած են շարժողական խնդիրները, արագություն, հնարամտություն, դժվարությունը հաղթահարելու կարողություն և այլն: Սյուժե չունեցող խաղերում կա նաև մրցության տարր, որը և շահագրգռում է երեխաներին՝ ամեն գնով հասնել նպատակին(Հաղթահարել վախի զգացումը, դժվարությունը) : Մրցությունը լինում է նաև սյուժե ունեցող խաղերում, սակայն դրանցում եղած դերերի կատարումը որոշ չափով թուլացնում է մրցությունը և այն դարձնում երկրորդական:

Փոքրերի խմբում ավելի մեծ տեղ են գրավում սյուժե չունեցող խաղերը. <<Հասեք ինձ>>, <<Վազեք ինձ մոտ>>, <<Հասիր գնդակին>>: Դրանց հետ միասին տրվում են նաև պարզ սյուժե ունեցող խաղեր, օրինակ. <<Կատուն և մկները>>, <<Գնացք>> և այլն:

Ավագ խմբերում մրցակցական խաղերը գրավում են որոշակի տեղ. <<Արագ վերցրու, արագ դիր>>, <<Փոխիր առարկան>>, <<Ով ավելի արագ կգլորի օղակը>> և այլն:

Այդ խաղերի ճիշտ ընտրման և ղեկավարման դեպքում մրցությունն օգնում է դաստիարակելու լավագույն հատկութկուններ և կարողություններ՝ համառություն,լավ վազք, ճիշտ ցատկ, նետում, ուրախություն ընկերոջ հաջողության համար և այլն: Պետք է իմանալ, որ այդ խաղերի ոչ ճիշտ ընտրության և ղեկավարման դեպքում դրանք կարող են բացասաբար անդրադառնալ երեխայի դաստիարակության վրա, անվստահություն առաջացնել իր ուժերի նկատմամբ, վիրավորանք պատճառել և այլն: Բացի բովանդակությունից շարժախաղերն իրենց շարժողականությամբ նույնպես բաժանվում են խմբերի.

- Մեծ
- Միջին

- Փոքր շարժողականության խաղեր

Մեծ շարժողականության խաղեր - Դրանք այն խաղերն ոն ,որոնք ընդգրկում են հիմնական շարժումներ `վազք , ցատկ , մագլցում և խաղին մասնակցող բոլոր երեխաները ակտիվ շարժման մեջ են . օրինակ <<Ծիտիկները և ավտոմեքենան>> , <<Կատուն և մկները>> , <<Արջի մոտ անտառում>> , <<Գտիր քո գույնը>> , <<Բռնոցի>> , <<Սագեր- կարապներ>> , <<Արջը և մեղուները>> և այլն:

Միջին շարժողականության խաղեր - Ընդգրկում են վազք , ցատկ , բայց խաղին մասնակցողներից ակտիվ շարժման մեջ են լինում անհատ երեխաներ կամ խմբի մի մասը: Օրինակ ՝ <<Անցնենք առվակի վրայով>> , <<Ինքնաթիռ>> , <<Ով շուտ կհասնի դրոշակին>> , <<Գցիր օղակի մեջ>> և այլն:

Փոքր շարժողականության խաղեր-Կառուցված են քայլքից և խաղին մասնակցող երեխաներից շարժման մեջ կարող են լինել անհատներ կամ ամբողջ խումբը : Օրինակ՝ <<Գտիր որտեղ է թաքնված>> , <<Գտիր և լռիր>> , <<Ով գնաց>> և այլ խաղեր :[1, էջ 9]

ԳԼՈՒԽ 2.2 ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Շարժախաղերի հաջողությունը շատ բանով կախված է դրանց անցկացման մեթոդիկայից : Միևնույն խաղը ճիշտ կազմակերպելու դեպքում կարող է ունենալ մեծ հաջողություն և ընդհակառակը `ոչ ճիշտ կազմակերպելու դեպքում `չառաջացնել ոչ մի հետաքրքրություն:

Յուրաքանչյուր անգամ խաղը պլանավորելիս դաստիարակը պետք է լավ պատկերացնի այն խնդիրները , որոնք դրել է իր առջև . ինչպիսի ունակություններ և կարողություններ պետք է զարգացնի և ամրապնդի խաղի միջոցով , որովհետև մի խաղում երեխաները տիրապետում են վազքին, մյուսում ցատկին, մի խաղում զարգանում է զսպվածությունը, մյուսում՝ ճարպկությունը:

Դաստիարակը խաղերը պետք է հագեցնի հուզականությամբ: Նա պետք է հաշվի առնի երեխաների տարիքային առանձնահատկությունները, նրանց հետաքրքրասիրությունը, պատրաստվածությունը: Բացի այդ, խաղերը կազմակերպելիս պետք է հաշվի առնել տարվա եղանակը, օդի ջերմաստիճանը,

անցկացման վայրը: Կարևոր է ոչ միայն խաղերի ճիշտ ընտրությունը այլև երեխայի ճիշտ կազմակերպումը խաղում: Խաղերը պետք է այնպես կազմակերպել, որպեսզի դրանք նպաստեն երեխաների առողջության ամրապնդմանը, հոգեկան և ֆիզիկական կարողությունների զարգացմանը: Ելնելով խաղերի բովանդակությունից կարող են ակտիվ կերպով հանդես գալ խմբի բոլոր երեխաները:

Խաղերը պահանջում են զսպվածություն, համբերություն և կամքի ուժ: Եթե դաստիարակը խաղը ճիշտ չի կազմակերպում, այսինքն՝ երեխան երկար սպասում է , ապա նա հոգնում է, որի հետևանքով աստիճանաբար իջնում է հետաքրքրասիրությունը տվյալ խաղի նկատմամբ:

Խաղի ճիշտ կազմակերպման համար մեծ նշանակություն ունի նրա բովանդակության բացատրումը:

Որպեսզի խաղը հասկանալի լինի երեխաներին պետք է կարողանալ ճիշտ բացատրել բովանդակությունը և կանոնները: Բացատրությունը պետք է լինի պարզ, հակիրճ, հասկանալի, գրական լեզվով և հուզական: Եթե խաղը բարդ է, ապա մեկ անգամից չի կարելի բացատրել ամբողջ բովանդակությունը: Այն կարելի է զուգակցել ցուցադրման և դերերի բաշխման հետ:

Եթե խաղերը երեխաներին ծանոթ են կարելի է հիշեցնել կանոնները: Դա կնպաստի ոչ միայն հիշողության և ուշադրության, այլև խոսքի զարգացմանը:

Խաղերի բացատրման ժամանակ կարևոր դեր է խաղում դաստիարակի ձայնը, ինտոնացիան: Այն պետք է լինի կենդանի, աշխույժ ու հաճելի: Խաղերի հաջողությանը նպաստում են նաև ճիշտ ազդանշանները:

Դաստիարակչական մեծ նշանակություն ունեն խաղի կանոնները: Դրանցով է որոշվում խաղի ընթացքը, ինչը կարելի է անել, ինչը՝ ոչ, ինչը սկզբում, ինչը՝ վերջում: Այդ պահանջների կիրառումը կարգավորում է երեխայի գործունեությունը:

Կանոնների կատարումը պետք է պարտադիր լինի խաղին մասնակցող բոլոր երեխաների համար: Եթե որևէ երեխա խախտում է կանոնները, ապա դաստիարակն ընդհատում է խաղը և զգուշացնում երեխաներին, որպեսզի նորից սկսեն այն:

Մրցակցական խաղերում դաստիարակը օբյեկտիվ մոտեցում է դրսևորում հաղթանակի հարցում: Այն երեխան որը խախտել է խաղի կանոնը՝ հաղթող չի

ճանաչվում:

Խաղի կանոնները դաստիարակում են բարոյական այնպիսի հատկություններ, ինչպիսին են կարգապահությունը, ազնվությունը, ճշմարտասիրությունը, զսպվածությունը:

Խաղի կանոնները պետք է համապատասխանեն երեխայի տարիքին, որքան փոքր է երեխայի տարիքը, այնքան պարզ պետք է լինի խաղի կանոնը: Ավելի բարձր տարիքում կանոնների բարդացումը հետաքրքրություն է մտցնում խաղի մեջ: Չպետք է թույլ տալ, որ խաղի կանոնը խախտող երեխան ընդհանրապես զրկվի խաղից: Եվ եթե զրկվի էլ, ապա միայն ժամանակավորապես, հակառակ դեպքում տվյալ խաղի միջոցով իրականացվող ունակությունների և կարողությունների զարգացումն ու կատարելագործումը կկանխվի:Սխալ է նաև այն, որ կանոնը խախտող երեխային առաջարկվում է երգել, արտասանել, պարել: Շատ հաճախ երեխաները ցանկություն են ունենում պարելու, երգելու և դիտավորյալ խախտում են խաղի կանոնները:

Խաղերն ավելի բազմազան և հետաքրքիր դարձնելու համար՝ դրանք կարելի է աստիճանաբար բարդացնել, որտեղ երեխան պետք է կատարի ավելի բարդ գործողություններ: Այդ տարբերակների ընթացքում նույնպես կատարելագործվում են երեխայի շարժումները, զարգանում է ուշադրությունը և տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունը:

Խաղի հաջողությունը կախված է նաև այն բանից, թե ինչպես են բաշխվում դերերը: Մեծ մասամբ դերերի բաշխումը կատարում է դաստիարակը, հաշվի առնելով երեխաների պատրաստվածությունը և հնարավորությունները: Մի դեպքում այն կարելի է տալ խմբի աշխույժ երեխային, ցույց տալու համար, թե ինչպես կարելի է լինել համարձակ, ճարպիկ, մի այլ դեպքում՝ ամաչկոտ, երկչոտ երեխային՝ ավելի աշխուժացնելու և վստահություն ներշնչելու համար: Պետք է հասնել այն բանին, որ գլխավոր դերերում հանդես գան բոլոր երեխաները:

Մեծ նշանակություն ունի խաղի ճիշտ ավարտը: Բոլոր շարժումներն անկախ այն բանից, թե օրվա որ ժամին են կազմակերպվում, պետք է ավարտել քայլքով: Քայլքն իջեցնում է այն ծանրաբեռնվածությունը, որը երեխաներն ստացել են խաղի ընթացքում:

Շարժախաղերը կարող են հանդիսանալ դաստիարակչական հրաշալի միջոց, երբ դաստիարակը պահպանում է սիստեմատիկության և հաջորդականության սկզբունքները, կրկնում է դրանք հետաքրքիր ձևերով և միաժամանակ ապահովում ճիշտ ղեկավարությունը:

Շարժախաղերը ճիշտ ընտրելիս, կազմակերպելիս և ղեկավարելիս իրականացվում են հետևյալ խնդիրները

1. Շարժախաղերի հիգիենիկ նշանակությունը
2. Ճիշտ կեցվածքի մշակումը
3. Շարժումների զարգացումը
4. Շարժումների ամրապնդումը և կատարելագործումը
5. Շարժախաղերի հոգեկան և գեղագիտական նշանակությունը
6. Բարոյակամային նորմերի դաստիարակումը
7. Հասարակական վարքի կանոններին ծանոթացումը
8. Պարապմունքի որակի բարձրացումը[2, էջ 10]

Երեխայի առողջության, օրգանիզմի ամրապնդման, ֆիզիկական ներդաշնակ զարգացման համար մեծ նշանակություն ունեն շարժախաղերը, որոնց սյուժեն, կանոնները և դրանց հիմք հանդիսացող շարժումները ուսուցողական և դաստիարակչական ներգործություն են ունենում երեխայի վրա: Շարժախաղերի արժեքն այն է, որ դրանք գործողության մեջ են դնում ոչ թե առանձին մկաններ, այլ երեխայի ողջ օրգանիզմը: Հագեցված լինելով հուզականությամբ՝ բարձրացնում են նրա տրամադրությունը, աշխատունակությունը, ուրախություն և մեծ բավականություն պատճառում:

Շարժախաղերը, շնորհիվ իրենց բովանդակության և խաղային գործունեության, դրական ներգործունեություն են ունենում երեխայի օրգանիզմի և անհատի-անձի ձևավորման վրա, նպաստում են իրականացնելու մանկավարժական կարևոր և ֆիզիկական բազմաթիվ խնդիրներ: Մանկավարժությունը խաղը դիտում է որպես երեխայի վրա նպատակաուղղված մանկավարժական դաստիարակության և ներգործության կարևոր միջոց:

Ճիշտ ընտրված շարժախաղերը երեխաների օրգանիզմում առաջացն դրական էմոցիաներ: Հետաքրքիր անցկացված խաղը երեխաների մոտ նպաստում է լավ ինքնազգացողության, հույզերի, առույգության, կենսուրախ տրամդրության զարգացմանը: Շարժախաղերը հանդիսանում են հրաշալի միջոց մտավոր բեռնվածությունից հետո ակտիվ հանգիստ կազմակերպելու համար: Խաղալիքները և պիտույքները, որոնք օգտագործվում են երեխայի շարժախաղերում, պետք է համապատասխանեն հիգենիկ պահանջներին, պատրաստված լինեն այնպիսի նյութերից, որոնք հնարավոր է մաքրել, չունեն սուր կողմեր և չեն ժանգոտվում:

Շարժախաղերը տարբերվում են մյուս ֆիզիկական վարժություններից իրենց կազմակերպման ձևով, մասնակիցների ակտիվ շարժուն գործունեությամբ և ղեկավարությամբ:
Շարժախաղերն ունեն որոշակի հաստատուն կանոններ, գործողությունների կատարման հաջորդականություն, ազդանշաններ և դաստիարակության մյուս խնդիրների հետ միասին իրականացնում են շարժումների կատարելագործման և զարգացման խնդիրները: Ճիշտ կազմակերպված շարժախաղերը բարձրացնում են ֆիզկուլտուրայի պարապմունքի ծանրաբեռնումը, միաժամանակ զարգացնում երեխաների հետաքրքրությունը ոչ միայն ֆիզիկական վարժությունների, այլ նաև ֆիզկուլտուրայի պարապմունքի նկատմամբ:

Շարժախաղերը պահանջում են բոլոր մասնակիցների միաժամանակյա և ակտիվ գործունեություն, որն էլ իր հերթին բարձրացնում է պարապմունքի խտությունը: Բացի այդ պարապմունքում անցկացվող խաղերը նպաստում են դաստիարակի և երեխաների միջև մտերիմ հարաբերությունների ստեղծմանը:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Հետազոտական աշխատանքն իրականացվել է Վանաձորի թիվ 15 <<Սուրբ Մարիամ Աստվածածին մանկապարտեզի>> ավագ խմբում: Խաղի անվանումն է <<Սագեր (կարապներ)>>: Խաղին մասնակցում էին թվով քսան երեխա, որից մեկը սագարածն է , մեկը գայլը, մյուսները սագերը:

Խաղի կանոնները.

1. Երեխաները լսելով վերջին <<դեպի տուն>> բառերը, պետք է վազեն սագարածի մոտ:
2. Գայլը դուրս է գալիս իր որջից միայն <<բուն>> բառից հետո:
3. Գայլն իրավունք ունի բռնելու սագերին մինչև սահմանագիծը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԽԱՂԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կարելի է ընտրել երկու գայլ՝ խաղը հետաքրքիր դարձնելու համար:
2. Սագերի և գայլին տրվում է համապատասխան գլխարկներ:
3. Սկզբում սագարածի դերը կատարեցի ես՝ դաստիարակս
4. Նշեցի այն գայլին որը շատ սագեր է բռնել և այն սագերին, որոնք չեն բռնվել:
5. Մարգագետնի և տան հեռավորությունը պետք է լինի 10-12 մեր

Կարելի է աստիճանաբար տարածությունը մեծացնել:

Խաղը դաստիարակեց զսպվածություն, ազդանշանով գործելու կարողություն, արագություն, ճարպկություն, համարձակություն, երկխոսություն:

Կատարելով հետազոտական աշխատանք եկա այն եզրահանգման, որ նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման գործում էական դեր են կատարում շարժախաղերը, քանի որ դրանք նպաստում են ձեռքերի և ուսագոտու, ոտքերի մկաններիզարգացմանը, ամրանում են հոդակապերն ու ջլերը, բարելավվում է սրտի աշխատանքն ու շնչառությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ես հանգեցի այն եզրակացման, որ խաղն առաջնային դեր ունի նախադպրոցական երեխայի զարգացման, դաստիարակության, աշխարհընկալման գործում:

Խաղի միջոցով դրսևորվում են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են համարձակություն, վստահություն, խոսելու, շարժումները ղեկավարելու ունակություն, երևակայություն, միասնականություն, հրճվանք, ուրախություն և դրական լիցքեր:

Խաղի ընթացքում երեխաները պարտավորվում են ենթարկվել գործողություններին, սահմանված կանոններին:

Խաղն իր ուրույն տեղն է զբաղեցնում երեխայի հետագա զարգացման գործում:

Շարժախաղերումերեխաները գործում են միասին և կազմակերպված: Այդ ամենը դաստիարակում է երեխայի վարքը՝ կարգապահությունը, ինքնատիրապետումը: Խաղերում նա պետք է զսպի իրեն, օգնի ընկերոջը, հաղթահարի որոշ դժվարություններ: Խաղը՝ հատկապես շարժախաղը, որն իրենից ներկայացնում է ակտիվություն, մեծ նշանակություն ունի երեխայի կյանքում:

Շարժախաղերը նպաստում են երեխաների ներդաշնակ և համակողմանի դաստիարակմանը և զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռիմա Առաքելյան <<Շարժախաղեր նախադպրոցական 5-7 տարեկան երեխաների համար>> Երևան - 1975 թ. , 86 էջ
2. Ռիմա Առաքելյան <<Շարժախաղեր 5-6 տարեկան երեխաների համար>> Երևան - 2008 թ., 63 էջ
3. Ռիմա Առաքելյան <<Ֆիզկուլտուրայի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում(5-6 տարեկաններ)>> Երևան - 2008 թ., 47 էջ
4. Նախաշավիղ, Հասմիկ Մինասյան <<Շարժախաղերի կազմակերպումը մանկապարտեզի միջին և ավագ խմբերում>> 5.2012թ. , 64 էջ
5. Т. И. Осокина <<Физическая культура в детском саду>> Москва 1973г., 287ст.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽՈՍՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԶՈՒԼԱԼՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԳԹ Լ. ՄԻՐԱԲՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխայի համար լավ կապակցված խոսքը հաջող գրագիտության գրավականն է:

Խոսքի զարգացման հարցերը միշտ էլ հետաքրքրել են մարդկությանը: Խոսքի զարգացման հարցերը միշտ էլ հետաքրքրել են մարդկությանը: Մի ամբողջ բաժին է հատկացված մանկահասակ երեխաների դաստիարակության բովանդակության ու մեթոդիկայի խնդիրներին:

Խոսքի յուրացումը երեխային հնարավորություն է տալիս մտնել հասարակական հասարակական հարաբերությունների ոլորտ: Նա կարողանում է մտնել հասակակիցների և նեծահասակներիհաշխարհ, հաղորդակցվել, շփվել նրանց հետ: Ինչպես Ղ. Աղայանն է ասել <<Երեխայի խոսքի զարգացման միջոցներն են համարվում կյանքը բնությունը, շրջապատ , մանկական բանաստեղծությունները, առակները, հեքիաթները և այլն>>:

Չեխ մանկավարժ Յան Ամուս Կոմենսկին իր <<Մայրական դպրոց>> աշխատության մեջ նշել է երեխայի խոսքի ձևավորման մասին, և այդ գործընթացը բաժնել է տարիների: Նա առաջին երեք տարիները համարում է՝<<վաղ մանկություն>> և նշում, որ երեեխան այդ երեք տարիների ընթացում սովորում է խոսքի լիարժեք արտաբերմանը:

Հաջերդ երեք տարիներին՝ ըստ Կոմենսկու , երեխան առարկաների ընկալման հիման վրա, կարողանում է հարստացնել խոսքը: [3:237]

Ընտրածս թեման համարում եմ **արդիական** նրանով, որ մեր ժամանակներում խոսքի և լեզվի խանգարումները շատ տարածված են մինչև վեց տարեկան երեխաների մոտ: Լեզվական թերությունները կարող են խնդիր առաջացնել սոցիալական հմտությունների համար: Մեր խնդիրն է փորձել անդրադառնալ այդ թեմաներին հնարավորինս օգնել, հարկ եղած դեպքում ծնողի և հատուկ մասնագետի միջոցով շտկման միջոցներ գտնել:

Հետազոտության **նպատակն է**

Ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխայի հաղորդակցական կարողությունների առանձնահատկությունները և դրանց զարգացման մեթոդական սկզբունքները: Ուսումնասիրել գիտահետազոտական, գիտամեթոդական գրականություն, այլոց փորձը և կատարել հետազոտություն:

Խնդիրները .

1. Նկարագրել հնչյունային կուլտուրայի դաստիարակության գործընթացը նախադպրոցական տարիքում:
2. Բացահայտել խոսքի քերականական կառուցնածքի յուրացման առանձնահատկությունները:
3. Իրականացնել ծանոթացումը գեղագիտական գրականության որոշ նմուշներին:

Գլուխ1

Խոսքային հաղորդակցումը որպես նախադպրոցականի անձնավորության ձևավորման միջոց

Խոսքի միջոցով զարգանում է մանկական գործունեության բոլոր մյուս տեսակները՝ հաղորդակցությունը, ճանաչողությունը, ճանաչողական հետազոտությունը, խաղը:

Երեխաների խոսքի զարգացմանը նպաստող գործոններն են.

ա. Երեխայի հետ զգացմունքային շփումը

բ. Մեծահասակի և հասակակցի հետ համատեղ խաղերըը

գ. Երեխայի հետաքրքրության բավարարումը, նրա բոլոր < ինչու>> ների պատասխանը

դ. Գեղարվեստական գրականության ընթերցում

Երեխաների խոսքի զարգացումը կախված է նրանց անհատական առանձնահատկություններից: Երեխաների մի մասը ուշ է խոսում, ոմանք հասկանում են շրջապատի խոսքը, բայց չեն արտահայտվում: Երեխայի խոսքը ամենից առաջ զարգանում է շրջապատի հետ հաղորդակցման ընթացքում: Դրա համար պետք է երեխայի համար ստեղծել բնական հաղորդակցության ձևեր: Երեխային պետք է հնարավորեություն տալ խոսել, արտահայտվել անկաշկանդ, խրախուսել նրա հաղորդակցման ջորձերը, ընդգրկել նրան զրույցի, երկխոսության մեջ:[3:275] Նախադպրոցականի խոսքի զարգացման լավագույն մեթոդ է նաև խաղը: Հենց խաղի ժամանակ է երեխան սովորում ընդհանրացնել առարկաները, ճանաչել դրանք՝ ըստ ձևի, հատկանիշի: Խաղի միջոցով նաև նա ինքվադաստիարակվում է , խոսքերի միջոցով արտահայտում է իր զգացմունքներն ու հույզերը, անվախ է և ազատ իր խոսքերի ընտրության մեջ:

Երեխայի խոսքի զարգացման գործնական միջոցներից է նաև զրույցը: Դրա համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որ երեխան ցանկանա արտահայտվել և լսել դիմացինի մտքերը: Նաև թեման պետք է համապատասխանի երեխայի տարիքին, հետաքրքրի նրան: Զրույցի միջոցով մի շարք խնդիրներ են լուծվում.

-Հետաքրքիր թեման երեխային ստիպում է մտածել և արտահայտվել մտածածի մասին:[1:128]

-Երեխան նոր տեղեկություններ է ստանում իրեն շրջապատող աշխարհի և երևույթների վերաբերյալ:

-Զարգանում է նրա կապակցված խոսքը:

Քննարկումների միջոցով զարգանում են կշռադատելու, վերլուծելու, եզրահանգումներ կատարելու ունակությունները: Զրույցի ժամանակ դաստիարակի կողմից առաջարկվող հարցերը պետք է լինեն հասկանալի, հակիրճ, և պետք է երեխային հնարավորություն տալ պատասխանել հարցերին: Եթե երեխան կարկամում է, ապա դաստիարակը և հոգեբանորեն, և հմտորեն պետք է իրավիճակ ստեղծի ի օգուտ երեխայի, որպեսզի նա արտահայտվի ազատ և անկաշկանդ:

Երբեմն նախադպրոցականները դժվարանում են ազատ արտահայտել խոսքը՝ որոշ հնչյունների ոչ հստակ արտաբերելու պատճառով:[3:278]

Դիդակտիկ խաղերի կիրառումը կնպաստի երեխաների խոսքային խանգարումների կանխարգելմանը: Հարկավոր է ոչ միայն ուղղել սխալները, այլ երեխայի ուշադրությունը հրավիրել տվյալ երևույթի վրա, ստեղծել համապատասխան իրադրություններ՝ հնչեցնելով ճիշտ խոսքը:

Նախադպրոցական տարիքում հաչախ երեխաները լսողությամբ չեն տարբերում պայթաշփական (ձ,ջ, ղ), փայթական (բ, պ փ), ձայնորդ (լ,ր,ռ), շփական(շ,ս) հնչյունները և դրանք դժվարանում են արտաբերել: [2:12] Դիդակտիկ խաղերը և վարժությունները նպաստում են բառապաշարի հարստացմանն ու հնչարտաբերման խնդիրների լուծմանը, հնչյունային լսողության զարգացմանը: Օգնում են նաև շուրասելուկներ: Արժեքավոր են նաև երեխաներին ստեղծագործություններին ծանոթացնելը (հեքիաթներ, պատմվածքներ, առակներ, բանաստեղծություններ): ընթերցելուց հետո կատարվող քննարկումները, կռահումները , մեկնաբանությունները նույնպես նպաստում են երեխայի խոսքի ակտիվության զարգացմանը: Դաստիարակը երեխաներին տրամադրում է ուշադիր լսել ստեղծագործությունը, հետո հարցերով օգնում է հասկանալ կարևոր և երկրրդական մասերը և պատմել լսածը: Զարգանում է

երեխայի մտածական , խոսքային ունակությունը, հիշողությամբ պատմելու կարողությունը:

Գլուխ 1. 1

Կրտսեր հասակի երեխաների խոսքի զարգացումը

3-4 տարեկան երեխաների խոսքը զարգացնելու համար պետք է շատ խոսել և խոսեցնել, խրախուսել նրանց հարցացիրությունը, շրջապատով հետաքրքրվելու ցանկությունը: Երեխայի հետ ծոսելու ամենաարդյունավետ միջոցներն են զբոսանքները, խաղերը և պարապմունքները (դիդակտիկ նյութերով և խաղալիքներով): Զբոսանքների և դիտումների ժամանակ բնության նկարագրությունը (ծառեր, ծաղիկներ, թռչուններ), երեխայի համար տեղեկատվության, զրույցի թեմա է: Նրանք խաղալիս պատմում են իրենց տեսածի և լսածի մասին, երբեմն էլ՝ տիկնիկի հետ խաղալիս խոսում են հիմնականում օգտագործելով դաստիարակի կամ մեծահասակի խոսքում կամ կենցաղում հնչեցրած բառերը:

Երբեմն երեխան կարող է երկար ժամանակ խաղալ որևէ խաղալիքով և չիմանալ, թե այն ինչպես է կոչվում, քանի որ դրա անհրաժեշտությունը չկա: Այս դեպքում դաստիարակը պետք է երեխային ասի խաղալիքի անունը և խնդրի, որպեսզի նա արտասանի խաղալիքի անունը: Սա ևս հաղորդակցման մի տեսակ է մեծահասակի հետ և նպաստում է խոսքային ակտիվացման զարգացմանը:[1:4]

Կրտսեր նախադպրոցականների խոսքն ավելի բազմազան է դառնում,երբ նրանք դիմում են մեծերին, պատասխանում նրանց հարցերին, հաղորդում ինչ-որ տեղեկություններ: Սա նույնպես համարվում է խոսքի վարժեցման մեթոդիկա:

Ինչպես վերը նշեցի, խոսքի զարգացմանը նպաստում են նաև իրականացվող պարապմունքները: Երեխաները շատ են սիրում լսել հեքիաթներ, պատմություններ՝ հատկապես կենդանիների մասին: Այս դեպքում շատ կարևոր է, որ նյութը լինի հակիրճ, հետաքրքիր բովանդակությամբ և հասկանալի: Սովորաբար այս տարիքի երեխաները ավելիհեշտ հիշում են ոչ թե հեքիաթի ամբողջ բովանդակությունը, այլ փոքրիկ հատվածներ: Ուստի այդ հեքիաթը բաժանում ենք մի քանի տրամաբանական ավարտուն մասերի: Յուրաքանչյուր հատվածում պետք է լինեն <<բանալի>> բառեր,

որոնք կօգնեն երեխային վերականգնել այդ հատվածի բովանդակությունը: Այդ բառերի շուրջն էլ նրանք հյուսում են իրենց պատմությունները՝ երբեմն երևակայական, ավելի ցայտուն, վառ նրբերանգներով: 3-4 տարեկան նախադպրոցականի խոսքային բառապաշարի հարստացման համար կարելի է ստեղծել զարգացնող առարկայական միջավայր՝ խթանելով զրույցի, երկխոսության մեջ մտնելու մղումները, առաջարկել լրացնել, շարունակել նախադասությունը: Երեխան պետք է իմանա, որ խոսքն ունի որոշակի նշանակություն՝ ցույց է տալիս առարկաներ և երևույթներ:

Կրտսեր տարիքի երեխաների խոսքի զարգացման կարևորագույն խնդիրներից է ճիշտ հնչարտասանության ձևավորումը: Այդ տարիքի երեխաները դժվարանում են բազմավանկ բառեր արտասանել, երբեմն աղավաղում են հնչյունները: Այստեղ օգնության են գալիս հնչարտասանության ձևավորմանն ուղղված վարժությունները: նման վարժություններ պետք է անց կացնել պարբերաբար և անհրաժեշտ է , որ դրանք կրեն խաղային բնույթ և, կախված անհրաժեշտությունից, կատարել խմբակային և անհատական:

Պատմելու կամ արտասանելու ժամանակ պետք է ուշադրություն դարձնել երեխայի ձայնի բարձրությանը, խոսքի առոգանությանը, շնչառությանը, բառերի ճիշտ արտասանությանը: Շուտսելուկները միտված են արտասանական ապարատի շարժումների և հնչյունային կսողության զարգացմանը: դաստիարակը սկզբում արտասանում է մի քանի անգամ՝ ընդգծելով հաճախակի կրկնվող հնչյունը դանդաղ, հետո առաջարկում է երեխաներին կրկնել մի քանի անգամ: Խաղ-վարժությունները կարող ենք կիրառել ֆիզկուլտ դադարների ժամանակ: Կարևոր է կիրառել նաև մատնային վարժանքներ, որոնք խոսքի զարգացմանը խթանող արդյունավետ միջոցնե են: Կարևորություն ենք տալիս նաև ինտեգրված պարապմունքներին, որոնք հնարավորություն են տալիս կրճատելու երեխաների ծանրաբեռնվածությունը՝ տնտեսվող ժամանակը հատկացնելով զարգացնող խաղերին, զվարճանքներին: [1:5] Կրտսեր 2-րդ խմբի երեխաների կապակցված խոսքը զարգացնելու նպատակով իրականացնում ենք բազմաթիվ պարապմունքներ: Կներկայացնեմ զրույց-պարամունք հետևյալ թեմայով:

Թեմա <<Իմ ընտանիքը>>

Տեսակը՝ նկարի պատմում

Նպատակը՝ 1.Գաղափար տալ ընտանիքի մասին: Խորացնել պատկերացումները ընտանիքի անդամների մասին: Դաստիարակել սեր, հարգանք ընտանիքի հանդեպ:

Անհրաժեշտ նյութերը- <<Ընտանիքը երեկոյան>> նկար (փակցնել գրատախտակին):

Պարապմունքի ընթացքը.

Երեխաներին առաջարկեցի դիտել նկարը և ասել, թե ովքե՞ր են պատկերված այդ նկարում (տատիկ, պապիկ, հայրիկ, մայրիկ, քույր, եղբայր), և ինչով են զբաղված (տատիկը գործում է, հայրիկը թերթ է կարդում և այլն): Հետո առաջարկեցի երեխաներին՝ պատմել իրենց ընտանիքի մասին, թե ովքեր են ապրում իրենց հետ: Նրանցից շատերը իրենց զարմիկներին (հորեղբոր, մորեղբոր,, մորաքրոջ, հորաքրոջ երեխաներին), անվանում են քույր, եղբայր և համարում իրենց ընտանիքի անդամներ: Մի կողմից դա հասկանալի է, քանի որ դեռևս ռեալ չեն նրանց պատկերացումները իրենց ընտանիքի անդամների մասին, մյուս կողմից էլ գովելի է , որ նրանց վերաբերվում են հարազատորեն և համաարում իրենց ընտանիքի անդամ:

Եզրակացություն. այս պարապմունքի միջոցով ես իրականացրեցի հետևյալ խնդիրները.

1.Նպաստեցի կապակցված խոսքի, ստեղծագործ մտքի ձևավորմանը

2.Դաստիարակեցի սեր, հարգանք, բարյացակամ վերաբերմունք հարազատ մարդկանց նկատմամբ:

3. Լիարժեք պատկերացում տվեցի ընտանիքի մասին:

Գլուխ 1.2

Խոսքի զարգացումը միջին տարիքում

Կյանքի 4-5 տարեկանում ընդարձակվում է շրջապատող աշխարհի վերաբերյալ երեխայի փորձը, հարստանում բառապաշարը, կատարելագործվում են խոսքի հնչյունային, քերականական կողմերը, կապակցված խոսքը, զրուցելու, վերապատմելու կարողությունները: Երեխաները հաճախ նմանակոում են

կենդանիների, իրենց սիրած հեքիաթների հերոսների ձայները: Դաստիարակների աշխատանքը այս տարիքային խմբում բավականին շատ է: Պետք է օգնել երեխային ընդարձակել ակտիվ բառապաշարը, հասնել բառերի և հնչյունների մաքուր արտբերմանը, կատարելագործել հնչյունային կուլտուրան: Այս խմբում կազմակերպվում են երկխոսություն, խոսքային մշակույթի ձևավորման վարժություններ: Դաստիարակը զարգացնում է երեխայի ինքնուրույն, ակտիվ խոսքը, խրախուսում հասակակիցների , մեծահասակների հետ հաղորդակցումը: Երեխաների հետաքրքրության ձևավորմանը նպաստելու համար խոսքի զարգացման անկյունում կարելի է տեղադրել հետաքրքիր իրեր՝ բացիկներ, կենդանիներ, բույսեր, տրանսպորտի միջոցներ, տեսարժան վայրեր պատկերող նկարներ, գունավոր, նկարազարդ գրքեր: Զուգահեռաբար զրույցների միջոցով բավարարել նրանց պահանջը՝ առարկաների, երևույթների, իրադարձությունների մասին ստացված տեղեկությունների վերաբերյալ:[4:61]

Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակությունը շատ կարևոր է միջին տարիքի նախադպրոցականի համար: Պետք է ամրպնդել ձայնավոր և բաղաձայն հնչյունների ճիշտ արտաբերումը, զարգցնել հնչարտասանական ապարատը, կատարելագործել արտահայտիչ խոքը: Խոսքային խաղերի, վարժությունների ժամանակ պետք է պրակտիկորեեն ծնոթացնել <<բառ>>, <<հնչյուն>> տերմիններին, նաև ուշադրություն դարձնել բառի հնչողության տևողությանը (երկար, կարճ): Երեխաներին հնարավորություն պետք է տալ խոսել, արտահայտվել ազատ, համարձակ, օգնել համաձայնեցնել բառերը նախադասությունների մեջ թվով, դեմքով, ժամանակով: այս տարիքի երեխաների համար բավականին դժվար է կազմել քերականորեն ճիշտ, մաքուր և հստակ խոսք: Խաղ- վարժությունների, խաղային հնարքների միջոցով նրանք սովորում են օգտագործել բառերի տարբեր ձևեր միևնույն առարկայի անվանման ժամանակ (տուն-տնակ, ձու- ձվիկ և այլն), առարկա ցույց տվող բառեր, կարողանում են նկարագրել առարկայի որակը, չափը, գույնը: Երեխաները օգտգործում են նաև առարկաները ընդհանրացնող բառեր (կահույք, խաղալիքներ, բանջարեղեն, հագուստ և այլն): [4:63]

Միջին նախադպրոցականի դաստիարակության գործում մեծ տեղ է գրավում ծանոթացումը գեղարվեստական գրականությանը: Այն խորագույն ազդեցություն է

ունենում մտածողության, խոսքի զարգացման, արտաքին աշխարհի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման համար : Հնարավորինս պետք է կարդալ երեխաների համար: Պետք է սեր և հետաքրքրություն արթնացնել գրականության տարբեր ժանրերի հանդեպ (հեքիաթ, պատմվածք, հանելուկ, առակ, ոտանավոր), ծանոթացնել հայ գրողների, մանկագիրների նաև ժողովրդական ստեղծագործություններին:Սովորեցնել զգալ ստողծագործության տրամադրությունը, ըմբռնել իմաստն ու բովանդակությունը:Երեխաների խոսքի զարգացման առանձնահատուկ միջոց է ուսուցումը, որն իրականացվում է կազմկերպված պարապմունքների, խաղերի միջոցով: Պարապմունքների տեսակներն են.

1. Զրույց
2. Ոտանավորի ուսուցում
3. Դիդակտիկ խաղ
4. Վերապատմում
5. Պատմում՝ (նկարով, խաղալիքների նկարագրություն, կիսատ թողնված պատմություն և այլն)

Ստորև հնարավորինս կներկայացնեմ պարապմունքի այդ տեսակները՝ առանձին-առանձին:

Զրույցը նպաստում է նախադպրոցականի տրամաբանական մտածողությանը, ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնմանը: Այն կարելի է անց կացնել երկխոսության, մենախոսության միջոցով: Զրույցը հնարավորություն է տալիս երեխային ազատ արտահայտել իր մտքերը, զարգացնում է կապակցված խոսքը, նպաստում է ազատ կամքի դրսևորմանը:

Ոտանավորի ուսուցման նպատակն է՝ երեխայի մեջ սեր արթնացնել գեղարվեստական գրականության հանդեպ, զարգացնել գեղագիտական ճաշակը, մայրենի լեզվի գեղեցկության ընկալումն ու գնահատումը:

Դիդակտիկ խաղերի միջոցով զարգանում է կանոնավոր, սահուն խոսքը: Այս խաղերն ուղղված են երեխայի իմացական կարողությունների ձևավորմանը (<<Ի՞նչ է սա>>, <<Ասա Լ հնչյունով բառեր>>):

Վերապատմումների ընթացքում երեխաները կարողանում են տարբերակելգլխավորը՝ երկրորդականից, գնահատել հերոսների դրական և բացասական կողմերը:

Պատմում նկարներով պարապմունքի ընթացքում նախադպրոցականները սովորում են դիտել, հասկանալ,և վերարտադրել նկարի բովանդակությունը: Կիսատ թողնված պատմության շարունակությունը երեխաների ստեղծագործական երևակայության զարգացման լավագույն միջոցն է:

Կներկայացնեմ իմ կողմից իրականացված խաղ- պրապմունքը՝ հացի վերաբերյալ:

Թեմա <<Պատրաստում ենք բլիթներ>>

Տեսակը՝ խաղ- պարապմունք

Նպատակը՝ Ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները մարդկության ամենամեծ բարիքի՝ հացի վերաբերյալ: Սեր և հարգանք դաստիարակել հացթուխի աշխատանքի նկատմամբ: Խնամքով վերաբերմունք սերմանել սերմանել հացի յուրաքանչյուր փշուրի նկատմամբ:

Անհրաժեշտ նյութեր –Նկար, որտեղ պատկերված է ընտանիք՝ ճաշի սեղանի շուրջ նստած: Ոնենալ գոգնոցներ, գլխաշորեր, ցորենի հասկ, ափսեի մեջ՝ ալյուր և փափուկ կավ կամ պլաստիլին՝ որպես խմոր:

Նախապատրաստումը պարապմունքին.

Երեխաների հետ կատարեցինք էքսկուրսիա դեպի մոտակա հացի փուռը: Երեխաները մոտիկից ծանոթացան հացթուխի աշխատանքին, դիտեցին, թե ինչպես են խմորից հաց, բլիթներ պատրաստում, թխում: Հետո նրանց տրամադրեցին խմորի փոքրիկ գնդիկներ և երեխաները պատրաստեցին բլիթներ:

Պարապմունքի ընթացքը.

Դիտեցինք նկարը: Երեխաները պատմեցին, որ ընտանիքը պատրաստվում է ճաշել և նկատեցին , որ սեղանի կենտրոնում՝ մեծ ափսեի մեջ, դրված են հացի կտորներ և բլիթներ: Ցույց տվեցի ցորենի հասկը և բացատրեցի, որ ցորենից ստանում ենք ալյուր, իսկ ալյուրից՝ հաց: Ասացի, որ մենք այսօր կփորձենք պատրաստել այդպիսի բլիթներ

և նրանց հրավիրեցի սեղանի մոտ, որտեղ դրված են պլաստիլինի և կավի կտորները: Առաջարկեցի սկզբում գնդիկները տափակեցնել , որպեսզի հետո ծեփենք բլիթներ: Պատրաստի բլիթները տեղափոխեցինք ափսեների մեփ և կատարեցինք հյուրասիրություն՝ <<թեյի սեղանի շուրջ >>: Վերջում արտասանեցինք ոտանավոր բլիթների մասին և բոլորին հայտնեցինք շնորհակալություն: Նյութն առավել ամրապնդելու նպատակով բեմականացրեցին <<Ով աշխատի, նա կուտի>> հեքիաթը:[3:128]

Եզրակացություն.

Ներկայացված թեման հետապնդում է ճանաչողական, ուսուցողական և դաստիարակչական նպատակ: Երեխաները հասկացան հացի անհրաժեշտությունը և անգնահատելի դերի նշանակությունը մեր կյանքում:

Գլուխ 1.3

Խոսքի զարգացման նշանակությունը ավագ նախադպրոցականի կյանքում

Մեր երկրում 5-6 տարեկան նախադպրոցականը համարվում է դպրոցին նախապատրաստվող տարիք: Այս տարիքի երեխաներին դպրոցական ուսուցմանը նախապատրաստելը կարևոր պայմաններից մեկն է՝ դպրոցում հաջողության հասնելոու համար: Այս նպատակի համար իրականացվում է նախադպրոցական կրթադաստիարակչական հիմնադրույթներ, որոնք պահանջում են արմատական վերափոխումներ երեխաների դաստիարակության և ուսուցման բովանդակության, մեթոդների, երեխա- մանկավարժ փոխհարբերությունների նորացման ուղղությամբ: Այս տարիքում են ձևավորվում բարձրագույն հոգեկան գործունեության ծննդյան ակունքները, որոնց հասուն ձևերն ի հայտ կգան դպրոցական տարիքում: Կարևոր է լեզվամտածողության, գրաճանաչության զարգացումը: Նախադպրոցականի կարևոր ձեռքբերումներից է մայրենի լեզվին գրական տիրապետելը և, եթե մայրենի լեզվի որոշակի մակարդակ ձեռք չբերվի մինչև 5-6 տարեկան դառնալը, ավելի ուշ տարիքում բավականին դժվար կլինի: Հատուկ աշխատանք պետք է տարվի երեխաների բառապաշարի ճշտման, հղկման, հարստացման, կապակցված խոսք կառուցելու ունակության մշակման և զարգացման ուղղությամբ: Ավագ նախադպրոցականի այս

բոլոր գործառույթներն իրականացվում են պարապմունքների, խաղ-վարժությունների, շարժախաղերի միջոցով :[5:68] Ավագ խմբում խոսքի զարգացման բոլոր տեսակներին ավելանոում է նաև գրաճանաչությունը: Գրաճանաչության պարապմունքի ժամանակ դաստիարակը նախադպրոցականին սովորեցնում է նախադասությունը բառերի վերլուծելու, բառաշարքից բառն անջատելու, վանկերի բաժանելու, վանկերը հնչյունների վերլուծելու և այդ հնչյունների շարքից անհրաժեշտ հնչյունն առանձնցնելու ուղղությամբ: Գաղափար է տալիս հականիշ և հոմանիշ բառերի մասին (բարձր- ցածր, արագ- դանդաղ և այլն), սովորեցնում գուշակել հանելուկներ, առակներ:

Կներկայացնեմ խոսքի զարգացման մի պարապմունէ՝ ընկերասիրության մասին:

Թեմա՝ <<Ընկերների և ընկերասիրության մասին>>

Խնդիրները. Ձևավորել ընկերական փոխհարաբերություններ, միմյանց սատար կանգնելու ձգտում և սովորություն: Խթանել զրուցակցին լսելու , իր տեսակետն արտահայտելու կարողություն:

Նախապատրաստումը պարապմունքին.

Երեխաները դիտում են <<Ո՞վ է քո ընկերը>> հայկական մուլտֆիլմը, որը երկու ընկերների մասին է, նրանցից մեկը հարուստ է , իսկ մյուսը՝ աղքատ: Սակայն դա չի խանգարում նրանց հավատարիմ ընկերությանը:

Անհրժեշտ պարագաները- խաղալիք ծաղրածու

Պարապմունքի ընթացքը.

Ներս է մտնում ծաղրածուն, թռչկոտում է, ծիծաղում, ուրախ բարևում, հետո տխուր նայում է երեխաներին և ասում, որ բոլորն ընկեր ունեն, ինքը՝ ոչ:

Ծաղրածու – Ես չգիտեմ՝ ի՞նչ է ընկերը…

Դաստիարակ – Երեխաներ, ցանկանու՞մ եք ընկերանալ ծաղրածուի հետ: Եկեք փորձենք:

Երեխա – Ծաղրածու, դու պատրա՞ստ ես ընկերանալ մեզ հետ:

Ծաղրածու – Այո:

Դաստիարակ – Ինչպիսի՞ մարդու հետ կարելի է ընկերանալ:

- Ինչպե՞ս պետք է պահպանել ընկերությունը:

-Ի՞նչ եք զգում, երբ ձեր ընկերը ձեզ վատ է վերաբերվում:

Երեխաները պատասխանում են հարցերին և որոշում են ընկերանալ ծաղրածուի հետ:

Ֆիզկուլտդադար <<Ճոճանակ>>. Կանգնում են դեմ դիմաց՝ զույգերով, ծաղրախուն էլ երեխաների հետ, միմյանց ձեռքից բռնած և կատարում են տեքստին համապատասխան շարժումներ

-Այ ճոճանակ, ճոճանակ,

Գնա, արի շարունկ,

Իջիր ներքև, ելիր վեր,

Մեզ էլ քեզ հետ տար ու բեր:

Հետո բեմականացնում ենք Խ. Աբովյանի <<Վատ ընկեր>> հեքիաթը: Վերջում դաստիարակը ասում է .

-Իսկ հիմա երեխաներ եկեք ինձ մոտ: Ես ձեր բոլորի ընկերն եմ : Ես կպարզեմ ձեռքիս ափը և դուք մոտեցեք ինձ և իմ ափի մեջ ձեր ձեռքերը դրեք: Սա նշանակում է, որ մենք բոլորս ընկերներ ենք: Ժպտացեք միմյանց և ժպիտով էլ հեռացեք:[5:103]

Եզրակացություն. Այս պարապմունքը շատ դրական ազդեցություն է ունենում երեխաների մտածելակերպի վրա : Նրանք հասկնում են, թե ինչպիսին պետք է լինի ընկերը և պետք է գնահատել և պահպանել ընկերությունը:

Եվ առհասարակ պարապմունքի բոլոր տեսակները միտված են զարգացնել երեխաների ստեղծագործելու կարողությունները, հարստացնել բառապաշարը, մշակել խոսքի կուլտուրան:

Եզրակացություն

Ուսումնասիրելով գիտահետազոտական, մեթոդական, գիտամեթոդական գրականություն, այլոց փորձը, նև իմ փորձից ելնելով, կարող եմ հավաստի ասել, որ նախադպրոցականի խոսքը զարգացնելու համար, նախ պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա անհատ է՝ իր նախասիրություններով և առանձնահատկություններով: Այստեղ կարևոր է դաստիարակի և երեխայի շփման մակարդակն ու պայմանները: Որքան շատ երեխան շփվի մեծահասակների և հասակակիցների հետ, այնքան սովորելու և վերցնելու նյութ կունենա: Շատ կարևոր է շրջապատող մարդկանց գրագետ և ճիշտ խոսքը և մեր՝ մանկավարժներիս խնդիրն է , որ երեխայի հետ ստեղծենք այնպիսի միջավայր, որ նրանց խոսքը զարգանա ճիշտ և գրագետ: Սովորեցնք սիրել և պահպանել մայրենի լեզուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <<Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի կրտսեր 2րդ խմբում>> ուսումնական ձեռնարկ Երևան 2014թիվ
2. << Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի կրտսեր միջին խմբում>> ուսումնական ձեռնարկ Երևան 2013թիվ
3. <<Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա >> Երևան 2006թիվ
4. <<Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր>> Երևան 2011թիվ
5. <<Մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում>> ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2011թիվ
6. <<Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր>> Երևան 2007 թիվ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 2

Գլուխ1 ---------- 4

Գլուխ 1.1 ---------- 6

Գլուխ 1.2 ---------- 8

Գլուխ 1.3 ---------- 12

Եզրակացություն ---------- 15

Գրականություն ---------- 16

Բովանդակություն ---------- 17

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ***«Դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության միջոց »***

ԿԱՏԱՐՈՂ՝ ***Սուսաննա Մարգարյան***

ՂԵԿԱՎԱՐ՝ ***Գագիկ Էմինյան***

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ……..…….3
2. Գլուխ 1. Դիդակտիկ խաղերի պատմական ծագման մասին ……..…….6
3. Գլուխ 2. Դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության մեթոդ, դրանց նշանակությունը և առանձնահատկությունները ……..7
4. Փորձարարական մաս……..……..11
6. Եզրակացություն ……..……..14
7. Օգտագործված գրականության ցանկ……..15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը.

Թեման արդիական է, քանի որ, օգտագործելով դիդակտիկ խաղերի մեթոդը, հարստացնելով երեխաների զգայական փորձը, իրականացվում են կրթական, ուսուցողական և դաստիարակչական դխնդիրները:

Մանկապարտեզների հիմնախնդիրն է առողջ սերունդի դաստիարակությունը և նախապատրաստումը դպրոցին:

Հաշվի առնելով այն որ, այս տարիքում երեխաները առավել ակտիվ են ընկալում շրջակա աշխարհը հենց զգայարաններով, և օբյեկտների մասին ճիշտ պատկերացումը ավելի հեշտ են ձևավորվում նրանց հետ անմիջական գործողություն կատարելով, որոշել ենք ուսումնասիրել դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակությաան մեթոդ: Երեխան սովորում է տեսնելով, լսելով, շոշափելով և համտեսելով, այդ օբյեկտների հետ տարբեր տեսակի գործողություններ կատարելով:

Խաղը երեխաների համար հիմնական գործողությունն է և ամենասիրելի զբաղմունքն է: Խաղի ընթացքում երեխան ձեռք է բերում չափազանց կարևոր հմտություններ, գիտելիքներ և ունակություններ:

Խաղերի բոլոր տեսակները (շարժողական, թատերական, ստեղծագործական և այլն) շատ կարևոր են և կարող են լուծել որոշակի մանկավարժական խնդիրներ:

Ըստ հայ մեծ բանաստեղծ և ուսուցիչ Հ. Թումանյանի «Խաղը նրա, մանուկ մարդու, բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Խաղում է նրա մատաղ կյանքի ամեն մի մասնիկը, խաղում է նրա թրթռուն սիրտը ջահել կրծքի մեջ, ու կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, խաղով է քննում, խաղով է ճանաչում ու ընդունում: Դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամին բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում, առանց ձանձրանալու, առանց հոգնելու:»[1]

[1] Թումանյանի ԵԼԺ հ7.djvu/ 212 էջ

Առավել արդյունավետ կրթության և դաստիարակության խնդիրները միաժամանակ լուծելու միջոց ենք համարում հենց դիդակտիկ խաղերի օգտագործումը: Դա պայմանավորված է նրանով, որ նրանք ներդաշնակ համատեղում են կրթական և խաղային խնդիրները և երեխան սովորում է կարծելով թե միայն խաղում է: Խաղային գործունեությունը թույլ է տալիս հետաքրքրել երեխային, դրդել այն առաջադրանքի կատարման համար, որի իրականացման գործընթացում իրականացվում է ուսուցում և զարգացում:

Դիդակտիկ խաղերը հնարավորություն են տալիս օգտագործել նրանք ինչպես կազմակերպված ուսումնական պրոցեսում՝ պարապունքների ժամանակ, այնպես նաև երեխաների ինքնուրույն աշխատանքների ընթացքում:

Այս խաղերի արժեքը կայանում է նրանում, որ երեխան հնարավորություն է ստանում ինքնուրույն գործել, զգալ իր մտավոր և գործնական ջանքերի արդյունքները:

Այսպիսով, երեխաները պետք է խաղան որ զարգանան և սովորեն :

Մենք գիտենք, որ այն բանավոր գիտելիքները, որոնք չեն ապահովվում զգայական փորձով չտպավորվելով մոռացվում են և անցնում:

Դիդակտիկ խաղերը հնարավորություն են տալիս հիշել, տպավորվել, զգալ և սովորել, օգտագործելով մարդուն տրվաած զգայարանները: Նրանք առավել արդյունավետ են նախադպրոցական տարատարիք խմբերում, որոնցում ներգրավված են մի խմբում 3-ից 6-տարեկան երեխաներ: Դաստիարակը այստեղ բախվում է, ինչպես գիտեք, բազմաթիվ չմշակված կամ թույլ մշակված խնդիրների:

Գիտենք որ, փորձառու մասնագետները նշում են, որ դաստիարակը պետք է լինի շատ ճկույն և կարողանա կազմակերպի պարապմունքները տարբեր տարիքային առանձնահատկություններ ունեցող երեխաների համար միաժամանակ: Գոյություն ունեցող պարապմունքների ուսումնական ձեռնարկները չափորոշչահեն են, շատ հետաքրքիր են, չափազանց ծավալուն և մշակված կոնկրետ տարիքային խմբերի համար և գործնականում դժվար են իրականացվում տառատարիք խմբում: Ծանոթ ենք նաև այն տեսակետին, որ պետք է օգտագործել օրինակ փոքրերի ենթախումբը ինչ որ օժանդակ գործողություններ կատարելու համար, սակայն ի՞նչ անել եթե փոքրերի ենթախումբը և տարբեր խոսքի կամ վարքի խանգարումներ

ունեցող երեխաների թիվը կազմում է խմբի 50 %-ը: Ու այնուամենայնիվ պետք է պատշաջ կերպով զբաղեցնել և զարգացնել խոսքի և վարքի խանգարում ունեցող երեխաներին, նախապատրաստել ավագներին դպրոցին և աշխատել նորեկ փոքրիկների հետ, հաշվի առնելով բոլորի տարիքային և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:

Դիտումների արդյունքում պարզվեց, որ խառը խմբերում հենց դիդակտիկ խաղերն են առավել արդյունավետ և կոթական ծրագիր իրականացնելու և երեխաների ուրախ և երջանիկ առօրյա կազմակերպելու միջոց կամ մեթոդ:

Այսպիսով հաշվի առնելով ուսումնական պրոցեսում ծագող բազմաթիվ խնդիրները, որոշել ենք ուսումնասիրել դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության մեթոդ, որոնք հանդիսանում են խաղի և պարապմունքի ինքնատիպ միավորում:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության միջոց:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել դիդակտիկ խաղերի ծագման պատմական փաստերը
2. Ուսումնասիրել մանկական հոգեբանության առանձնահատկությունները աշխարհաընկալման վերաբերյալ
3. Ներկայացնել դիդակտիկ խաղերի էությունը և մանկավարժական նշանակությունը նրանց առանձնահատկոըթյունները
4. Ներկայացնել փորձարարական մաս գործնական պարապմունքներ-դիդակտիկ խաղերի միջոցով

Գլուխ 1. Դիդակտիկ խաղերի պատմական ծագման մասին

Նախադպրոցական մանկավարժության հիմնադիրն է Յան Ամոս Կոմենսկին, որն առաջինը իր «Մայրական դպրոց» գիտամեթոդական աշխատության մեջ ներկայացրեց նախադպրոցականի դաստիարակության մանկավարժական համակարգ:

Զգայական զարգացման խնդիրների ուսումնասիրության մեջ մեծ ներդրում է կատարվել մանկավարժության ոլորտում նշանավոր ուսուցիչներ Ֆ. Ֆրեբելի, Մ.Մոնտեսորիի կողմից:

Նախադպրոցական մանկավարժությունը գիտության առանձին ճյուղ առանձնացնելու գաղափարը պատկանում է հենց գերմանացի ուսուցիչ Ֆրիդրիխ Ֆրեբելին[2] (1782-1852): Ֆ. Ֆրեբելը նախադպրոցական կրթության առաջին համակարգի ստեղծողն է և մանկապարտեզների հիմնադիրը: Դրանից առաջ կային մանկատներ, որոնց հիմնախնդիրը փոքր երեխաների խնամքն էր, սակայն դրանք չէին զբաղվում այդ տարիքի երեխաների կրթությամբ:

Ֆրեբելը առաջիններից մեկն էր, ով հասարակության ուշադրությունը հրավիրեց մինչև յոթ տարեկան երեխաների հետ մանկավարժական աշխատանքի անհրաժեշտության վրա: Նրան է պատկանում նաև "մանկապարտեզ" տերմինը, որն ընդհանուր առմամբ ընդունված է դարձել ամբողջ աշխարհում: Մանկական հաստատության հենց անունով, ինչպես նաև այն փաստով, որ ֆրեբելը ուսուցչին կամ դաստիարակին անվանում էր" այգեպան", ֆրեբելի հատուկ վերաբերմունքը երեխայի նկատմամբ դրսևորվեց որպես ծաղիկ, որը պետք է խնամել և խնամքով աճեցվի ՝ առանց փոխելու նրա բնածին բնույթը:

20-րդ դարի առաջին կեսում իտալիացի հայտնի մանկավարժ և բժիշկ Մ.Մոնտեսսորի համակարգի համաձայն զգայական և շարժական զարգացման և դաստիարակության համար օգտագործվում են շրջակա միջավայրի օբյեկտների և

[2] Валасина A.tps://rodnaya-tropinka.ru/dary-frebelya/ 2013

երևույթների դիտարկումներ, խաղեր և վարժություններ հատուկ դիդակտիկ նյութերով, նկարչություն, ծեփ, կոնստրուկտավորում և մոդելավորում:

Մոնտեսսորիի մեթոդաբանության հիմքում այն է, որ յուրաքանչյուր երեխա եզակի է: Եվ նրան պետք օգնել որ ինքը ամեն ինչի հասնի ինքնուրույն:

Այսպիսով զգայական դաստիարակությունը և աշխարհաընկալումը դիդակտիկ խաղերի միջոցով տարածում գտավ ողջ աշխարհով մեկ: Ներկայումս լայնորեն հայտնի են և համընդհանուր օգտագործվում են դիդակտիկ խաղերը որպես նախադպրոցական տարիքի երեխաների զգայական կրթության և դաստիարակության համակարգ:

Գլուխ 2. Դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության մեթոդ, դրանց նշանակությունը և առանձնահատկությունները

Դիտակտիկ և շարժուն խաղերում երեխան գիտակցելով խաղի կանոնների կատարման անհրաժեշտությունը, աստիճանաբար տիրապետում է իր վարքագծին հաղորդակցական ունակություններին, համակեցության նորմերին: Դա դպրոց է տանում: [3]

Նախադպրոցաական տարիքում զգայական զարգացումը երեխայի ընդհանուր մտավոր զարգացման հիմքն է: Այս տարիքում երեխաները ունեն յուրահատուկ երևակայություն և առարկայական պատկերացում, բառերով ներկայացվող առարկաների և երևույթների վերաբերյալ: Հոգեբանները պնդում են, որ պարզ պատկերացնել անվանվող առարկանները առանց նկարի, խաղալիքի կամ իրական իրի երեխաները սկսում են միայն մոտավորապես 10 տարեկանից: Օրինակ՝ եթե մենք խոսում ենք ձմռան մասին և հասկանում ենք թե ինչ դա, ապա

[3] http://edu.nk.am/ Մասնագիտական եվ մեթոդական օգնության նախադպրցական ուսումնական հաստատություններին-Ստեփանակերտ, 2021

փոքրիկների դեպքում նրանց պետք է ցուց տալ ձյունը, տալ ձեռ տալ, թողնել որ խաղան ձյունով և այլն, որ հասկանան թե ինչ է ձմեռը, և ինչ է ձյունը:

Առողջ երեխան ունի 5 զգայարանի հնարավորություն իրեն շրջապատող աշխարհը ուսումնասիրելու համար ՝

- տեսողություն;
- լսողություն;
- հոտ;
- համ;
- հպում;

Երբեմն մենք ականաս ենք լինում դրան, որ երեխան փորձում է ատամներով դիդակտիկ նյութերից միրգ-բանջարեղենի խաղալիքները, չնայաց որ բազմիցս անգամ բացատրել ենք, որ դրանք ուտելու համար չեն: Սակայն պարզվում է, որ ասելը քիչ է, նա պետք է փորձի, որ հասկանա:

Երեխան ուսումնասիրում է նոր առարկան, դրա անունը, ձևը, գույնը, համը, հոտը, մակերեսի հատկանիշները և ուսումնասիրելով, հիշում է նրանք և սովորում:

Երեխան[4] կյանքում բախվում է առարկաների, մասնավորապես խաղալիքների և կենցաղային իրերի ձևերի, գույների և այլ հատկությունների բազմազանությանը: Նա ծանոթանում է նաև արվեստի գործերին ՝ երաժշտությանը, նկարչությանը, քանդակագործությանը: Եվ, իհարկե, յուրաքանչյուր երեխա, նույնիսկ առանց նպատակային դաստիարակության, այս կամ այն կերպ ընկալում է այս ամենը: Բայց եթե ուսուցումը տեղի է ունենում ինքնաբուխ, առանց մեծահասակների ողջամիտ մանկավարժական առաջնորդության, այն հաճախ պարզվում է, որ մակերեսային է, թերի:

Մենք չենք կարող խոսել երեխայի դաստիարակության և զարգացման մասին առանց այնպիսի մտավոր գործընթացների բավարար զարգացման, ինչպիսիք են

[4] Венгер Л.А. Воспитание сенсорной культуры ребенка от рождения до 6 лет: Кн. для воспитателя дет. сада - М.: Просвещение, 1988.-144 с: ил.-с. 4

ընկալումը, մտածողությունը, հիշողությունը, ուշադրությունը, որոնց զարգացումը կախված է առաջին հերթին շրջապատի առարկայական զգայական ընկալումից:

Դիդակտիկ խաղի միջոցով երեխաները սովորում են առարկաներին բնորոշ հատկանիշները, զարգանում են նրանց ստեղծագործական կարողությունները, նրանք սովորում են լուծել տարբեր խնդիրներ, սովորում են հաղորդակցվել, ստանում են նոր գիտելքներ և պարզապես ուրախանում են:

Խաղային մեթոդներից կրթելու ու դաստիարակելու լավագույն միջոց կամ մեթոդ ենք համարում դիդակտիկ խաղերը՝

- խաղը[5] նպաստում է գործունեության այլ ձևերի (աշխատանքային, ուսումնական) առանձնացմանը,
- խաղում ազատ, ինքնուրույն գործում են, ինքնարտահայտվում
- խաղը՝ որպես ստեղծագործական գործունեություն, նպաստում է երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը
- խաղը նպաստում է աշխարհաճանաչմանը, որպես իմացական գործունեություն
- խաղի ընթացքում զարգանում են բարոյակամային որակները և հուզազգացմունքային ոլորտը:
- *Խաղը երեխայի զարգացման և դաստիարակության լավագույն միջոցն է, նրա կենսագործունեության կազմակերպման կարևոր ձևը:*

Խաղային բնույթով պարապմունքների և խաղերի կազմակերպումը տանում են երեխային դեպի ակտիվ դիդակտիվ ուսումնարություն և դաստիարակություն:

Դիդակտիկ խաղը ունի խաղին բնորոշ կառուցվածքային բովանդակային ուղղվածություն երեխաների ճանաչողական և զգայական գործունեության զարգացման նկատմամբ:

Դիդակտիկ խաղերի դասակարգման վերաբերյալ մեթոդական գրականության մեջ կան իրարից տաբերվող ձևակերպումներ:

---

5 http://edu.nk.am/ Մասնագիտական եվ մեթոդական օգնության նախադպրցական ուսումնական հաստատություններին-Ստեփանակերտ, 2021

Դիտարկենք հետևյալ դիդակտիկ խաղերի տեսակները:[6]

1. **Խաղեր-առաջադրանքներ,** որոնք հիմնված են երեխաների հետաքրքրության վրա խաղալիքների և առարկաների հետ գործողությունների նկատմամբ ՝ ընտրել, ծալել և դնել, տեղադրել, լարել և այլն: Խաղի գործողությունն այստեղ տարրական է, իր բնույթով այն հաճախ համընկնում է առարկաների հետ գործնական գործողութԱան հետ:

2. **Թաքցնել և որոնել խաղեր**, որոնք հիմնված են երեխաների հետաքրքրության վրա առարկաների անսպասելի տեսքի և անհետացման, դրանց որոնման և գտնելու վրա:

3. **Խաղեր հանելուկով** և գուշակությամբ, որոնք երեխաներին գրավում են անհայտությամբ ՝ "Պարզեք", "Գուշակեք", " ինչ կա այստեղ.", "Ինչ է փոխվել.".

4. **Դերային դիդակտիկ խաղեր**, որոնց խաղային գործողությունը բաղկացած է կյանքի տարբեր իրավիճակների պատկերումից, մեծահասակների դերերի կատարումից ՝ վաճառող, գնորդ, հետիոտն, փոստատար կամ կենդանիներ ՝ գայլ, սագեր և այլն:

5. **Խաղեր-մրցույթներ**, որոնք հիմնված են խաղային արդյունքին ավելի արագ հասնելու ցանկության վրա, հաղթել ՝ "ով է առաջինը", "ով է ավելի արագ", "Ինչն է ավելի մեծ" և այլն:

6. Սեխանային տպագիր նյութերով խաղ

Այս խաղերը վարժեցնում են երեխայի մտածողությունը, ձեռքերի կոորդինացիան , աչքաչափը, ճկունությունը: Խաղ նկարի կտրվածքը, տարբեր առաջադրանքներով քարտեր, թվանշաններ և այլն:

7.Երաժշտական խաղերը տրվում են խաղ-զվարճալիքների, ինչ-որ բան սովորելու, ֆիզկուլտ դադարների ժամանակ երգելլու համար:

Շատ հետաքրքիր կարելի կազմակերպել դիդակտիկ խաղը օգտաագործելով համակարգիչ կամ հեռուստացույցի էկրանը:

---

[6] Поддьякова Н.Н., Аванесова В.Н. Сенсорное воспитание в детском саду. Пособие для воспитателей' - Москва: Просвещение, 1981 - с.192 с ил.

Դիդակտիկ խաղերը կառուցված են դիդակտիկ խնդիրներից, կանոնից և խաղային գործունեությունից: Դիդակտիկ խաղը ղեկավարելու համար պետք է կատարել հետևյալ քայլերը:

1. Նախապատրաստվել խաղի անցկացմանը
2. Խաղի անցկացում,
3. Ամփոփում, ստացած գիտելիքների ամրապնդում:

Դաստիարակը երեխաներին նախապատրաստում է խաղին՝ հարստացնելով երեխաների գիտելիքները, պատկերացումները կյանքի, շրջապատող առարկաների, երևույթների մասին, որոնք անհրաժեշտ են խաղային խնդիրներն լուծելու համար:

Անչափ կարևոր է, որ դաստիարակը հետևի խաղի կանոնների կատարմանը, պիտի կարևորի և բարձր գնահատի երեխաների մասնակցությունը խաղին: Թիմային խաղերի դեպքում մի թիմի մեջ պետք է ընգրկել տարբեր ունակություններ ունեցող երեխաներ: Պարտվելու դեպքում պետք է ոգեվորել երեխային, բացատրելով պարտության պատճառը:

Ըստ կազմակերպելու ձևի դիդակտիկ խաղերը լինում են **խմբային** և **անհատական**:

Անհատական խաղերի ընթացքում դաստիարակը ուղղորդում է և օգնում երեխային ինքնուրույն լուծել դրված խնդիրները:

Դիդակտիկակ խաղերի ղեկավարման հիմնական իմաստը դիդակտիկ խնդիրների լուծումն է և խաղի միջոցով ուսումնական և դաստիարակչական խնդիրների իրականացումն է:

Փորձարարական մաս

Դիտարկել և ուսումնասիրել ենք մի շարք պարապունքներ և երեխաների ինքնուրույն աշխատանքները՝

1. Պարապմունք դիդակտիկ խաղի մեթոդով

Պարապմունքը կարելի է ներկայացնել թեմատիկ պարապմունքների շարքում (2 շաբաթվա ընթացքում)

Թեմա՝ «Երթևեկության կանոններ»

Խթանման փուլին կարելի է դիտել մուլտֆիլմ-երգ «Светофор.» կամ «Дядя Степа-милиционер.» մուլտֆիլմի լուսակիրին վերաբերվող մասը: Դաստիարակը դիտելու ընթացքում բացատրում և թարգմանում է մուլտֆիլմի իմաստը:

Իմաստի ընկալման փուլին ներկայացվում են խաղի կանոնները, դաստիարակը պատմում է լուսակիրի նշանակության մասին, ցույց է տալիս, թե ինչպես է այն աշխատում, բացատրում է թե ինչքանով է դա կարեվոր փողոցում: Խաղում է երեխաների հետ բացատրելով երթևեկության կանոնները:

Կշռադատման փուլին դաստիարակը հետևում երեխաների խաղին: Երեխաները ազատ խաղում են, ստեղծելով սեփական խաղային իրավիճակներ: Օգտագործում են ձերք բերած գիտելիքները խաղի ընթացքում:

Նպատակները՝

- Երեխաները կծանոթանան երթևեկության կանոններին
- Կսովորեն լուսակիրի գույները և նրանց նշանակությունը
- Ձերք բերած գիտելիքները և փորձը կօգտագործեն իրական կյանքում

Նախապատրաստում՝ շինարարական կպչող ժապավենով գծել ճանապարհ երեխաներին առաջարկել կառուցել շենքեր (լեգոներից և փայտե մասնիկներից) խաղասենյակի հատակի վրա կառուցել փողոց, խաղալիքներ (ավտոմեքենաներ, տիկնիկներ), լուսակիր (փոքրիկ լապտերներ կամ հեռախոսի լապտեր լուսակիրը «զարդնեցնելու» համար)

Նշենք, որ այդ երկու շաբաթվա ընթացքում երեխաները առավոտյան խաղասենյակ մտնելուց, ընտրում էին հենց այս խաղը և խաղում՝ կառուցում հատակին շենքեր, տիկնիկների հետ անցնում ճանապարը կամ ավտոմեքենա վարում:

Արդյունքում, որոշ ժամանակ անց, ըստ ծնողների արձագանքների, երեխանների մեծ մասը հայտնվելով հետիոտնի կամ ուղևորի կարգավիճակում, տեսնելով լուսակիրը մեծ ոգևորությամբ և պատրաստականությումբ առաջարկում են մեծերին

իրենց օգնությունը: Օրինակ՝ ասում են «ես դա գիտեմ», «սպասիր ես քեզ ասեմ ինչ անենք»:

2. Դիդակտիկ խաղ – պարապունք «Երկրաչափական պատկերների և գույների իմացություն և ամրապնդում:»

   Նպատակները՝

   - Երեխաները կամրապնդեն ստացած գիտելիքները երկրաչափական պատկերների վերաբերյալ:
   - Նորեկ փոքրիկները կսովորեն գույները
   - Ստեղծել ուրախ տրամադրություն

Նախապատրաստում երկրաչափական պատկերներով քարտեր, A4 ֆորմատի թղթերի վրա սոսնձած և միևնույն գույնի նույն երկրաչափական պատկերից շղթա:

Խաղի ընթացքը և կանոնները՝ Խաղի մեջ ներգրավվում են խմբի բոլոր տարիքային ենթախմբերի երեխաները:

Նրանք հերթով հանում են երկրաչափական պատկերներից մեկը, ու համապատասխան երկրաչափական պատկերի շարքի երեխան մի քայլ առաջ է գալիս: Ով ավարտի շարքը, նա հաղթում է:

Խաղում են մեծ ոգեվորությամբ, բարձրաձայն անվանելով երկրաչափական պատկերները և գույնը:

Արդյունքում դաստիարակը հասնում է իր նպատակներին:

Անչափ հետաքրքիր և արդյունավետ են երեխաների անհատական խաղ-ստեղծագործությունները և կառուցումները, որոնք նպաստում են հմտության, մտածողության, տրամաբանության, հիշողության, երևակայության և ստեղծագործական միթքի զարգացմանը: Երեխաները անչափ աշխուժանում և ուրախանում երբ ստանում են անհատական աշխատանք առաջադրանք:

Առաջարկելով անհատական առաջադրանքներ խառը խմբում նրանք հնավորություն են ունենում դիտել ընկերների աշխատանքները և հարստացնել սեփական փորձը: Սակայն մեր դիտարկումներից ելնելով նշենք, որ այստեղ ի հայտ է գալիս մի խնդիր, որը անխուսափելի է: Տեսնելով մեծերի աշխատանքները փոքրերը երբեմն հրաժարվում են աշխատելուց, ասելով «ես չեմ կարողանում»: Ու այստեղ դաստիարակը պետք է կարողանա գնահատի ու խրախուսի բոլորի

աշխատանքները, հետևի, որ ոչ մեկի մոտ կձևավորվի անվստահություն սեփական ուժերի մեջ, որ բոլորը աշխատեն ազատ ու անկաշկանդ:

Այսպիսով, այս դեպքում պետք է օգնել բոլորին, բացատրելով երեխաներին, որ չարժե համեմատել աշխատանքները իրար հետ, քանի որ բոլոր աշխատանքները յուրահատուկ են ու անկրկնելի և մենք դեր բոլորս այսօր սովորում ենք, որ վաղը ավելի լավ ստացվի:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով երեխաների նախասիրությունները և հետաքրքրությունները, նրանց դիդակտիկ խաղերին մասնակցելու մեծ ձգտումը, եկել ենք այն եզրակացության, որ հենց դիդակտիկ խաղերի կիռարումն կնպաստի երեխաների ներդաշնակ զարգացմանը և դաստիարակությանը: Մենք հասկացանք, որ նախադպրոցական տարիքի երեխան ավելի լավ է սովորի, ինչ որ գործոխություն կատարելով, ակտիվացնելով զգայարանները և ընկալելով ամբողջ ուսումնական նյութը և խաղը, ոչ միայն լսելով ու դիտելով այլ և շոշափելով, փորձելով ակտիվ մասնակցելով և նոր խաղային դրվակներ ստեղծելով:

Զարգացնելով երեխաների զգայական փորձը, օգնում ենք նրանց, դաստիարակելով և կռթելով ուրախ և ակտիվ միջավայրում: Երեխաների սեփական փորձը, վերաբերմունքը, հմտությունները և սովորելու ոճն ազդում են նրանց ուսումնառության վրա:

Կատարելագործելով կրթական գործընթացը, գարգացնելով և բացահայտելով երեխաների ստեղծագործական մտածողությունը և ստեղծելու կարողությունը՝ այսօր կձևավորվեն բարենպաստ պայմաններ մեր երկրի ապագա զարգացման համար:

ԳՐԱԿԱՆՈւԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թումանյանի ԵԼԺ h7.djvu/ 212 էջ:
2. Венгер Л.А. Воспитание сенсорной культуры ребенка от рождения до 6 лет: Кн. для воспитателя дет. сада - М.: Просвещение, 1988.-144 с: ил.
3. Поддьякова Н.Н., Аванесова В.Н Сенсорное воспитание в детском саду. Пособие для воспитателей. - Москва: Просвещение, 1981 - с.192 с ил.
4. http://edu.nk.am/ Մասնագիտական եվ մեթոդական օգնության նախադպրցական ուսումնական հաստատություններին-Ստեփանակերտ, 2021:
5. tps://rodnaya-tropinka.ru/dary-frebelya/ А.Валасина, 2013

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ 41 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐԸ ՈՐՊԵՍ ԶԳԱՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ»

ԿԱՏԱՐՈՂ՝ Սուսաննա Ռատակյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.Գ.Թ Լուսինե Միրաքյան

Վանաձոր 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• **Ներածություն.....3**

• **Զգայական զարգացում.....4**

• **Դիդակտիկ խաղ, կառուցվածքը.....8**

• **Մեփական փորձի ներկայացում.....10**

• **Եզրակացություն.....16**

• **Օգտագործված գրականություն.....17**

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Թեմայի արդիականությունը</u>

«Դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության միջոց» թեման արդիական է: Հիմա ժամանակակից զարգացած, գիտատեխնիկական դարում անհրաժեշտ են ինտելեկտուալ զարգացած մարդիկ, իսկ զարգացման հիմքը վաղ տարիքից պետք է դրվի: Վաղ տարիքի երեխաներին բնորոշ է զգայական գործառույթների բուռն զարգացում, որոնք առաջանցիկ են շարժումների հետ համեմատությամբ: Զգայական գործընթացների առաջնային զարգացումն ապահովում է հուզական աշխարհճանաչումը և նպաստում առարկայական աշխարհի անմիջական ընկալմանը: Երեխայի զարգացման փորձի և զգացողությունների ձևավորումը, զգայական աշխարհընկալումը պետք է իրականացնել հատուկ կազմակերպված զգայական դաստիարակության միջոցով:

<u>Աշխատանքի նպատակը</u>

Ուսումնասիրել - «Դիդակտիկ խաղերը որպես զգայական դաստիարակության միջոց» թեման լուսաբանող գիտական գիտամեթոդական գրականություն:

Բացահայտել - Երեխայի զգայական զարգացման դաստիարակության կարևորությունը, դիդակտիկ խաղերի դերն ու նշանակությունը այդ գործընթացում:

Իրականացնել - Դիդակտիկ խաղեր (պարապմունքների ընթացքում), որոնք զարգացնում են երեխաների տեսողության, լսողության, համի, հոտի, շոշափելիքի զգայարանները: Վերլուծել դրանց արդյունքը:

<u>Աշխատանքի տեսական նշանակությունը</u>

Ծանոթանալ զգայական զարգացմանը վերաբերվող նոր տեսակետներին, դիդակտիկ խաղերին ու խաղալիքներին, խաղերի անցկացման նոր մեթոդներին: Յուրացնել այլոց փորձը՝ երեխաների հետ ավելի հետաքրքիր և բովանդակալից աշխատելու համար:

<u>Աշխատանքի գործնական նշանակությունը</u>

Համապատասխան նպատակով ընտրված դիդակտիկ խաղերի իրականացման միջոցով բացահայտել դրանց դերը երեխաների տեսողական, լսողական, համի և հոտի, շոշափելիքի զգայարանների զարգացման գործում:

<u>Աշխատանքի կառուցվածքը</u>

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք մասերից, եզրակացությունից և գրականության ցանկից:

2. ԶԳԱՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երեխայի զգայական զարգացումը առարկայի հատկությունների (ձևի, գույնի, մեծության, համի, հոտի) ընկալումն ու ձևավորումն է: Զգայական զարգացման դերն ու նշանակությունը դժվար է թերագնահատել: Հենց վաղ տարիքն է բարենպաստ զգայական զարգացման համար՝ արտաքին աշխարհի մասին պատկերացումներ կազմելու, ընկալելու համար: Հայտնի գիտնականներ Ֆ.Ֆրյոբելը, Օ. Դեկրոլին, Մ. Մոնտեսորին, Ա.Վ. Զապորոժեցը, Ա.Պ. Ուսովան, Ն.Պ. Սակուլինան և ուրիշները արդարացիորեն համարում են, որ զգայական դաստիարակությունը, որն ուղղված է լիարժեք զգայական զարգացմանը, համարվում է նախադպրոցական դաստիարակության հիմնական կողմերից մեկը: [4;3էջ]

Զգայական դաստիարակությունը մի կողմից համարվում է մտավոր զարգացման հիմքը, մյուս կողմից ունի ինքնուրույն նշանակություն, որովհետև լիարժեք ընկալումն անհրաժեշտ է երեխայի արդյունավետ ուսուցմանը մանկապարտեզում:

Առարկայի հատկությունների և բնության երևույթների ընկալումով սկսվում է ճանաչողական պրոցեսը: Յուրաքանչյուր տարիքում զգայական դաստիարակության առջև կանգնած են իր խնդիրները, որոնք ձևավորում են զգայական դաստիարակության որոշակի օղակ:

Կյանքի առաջին տարում հիմնական խնդիրն է երեխային տալ բավականին հարուստ ու բազմազան տպավորություններ, զարգացնել ուշադրությունը առարկայի հատկությունների հանդեպ:

Երբ երեխայի մոտ զարգանում է բռնելու գործողությունները, այդ խնդրին ավելանում է ևս մեկ խնդիր՝ օգնել երեխային հարմարեցնել բռնելու գործողությունը առարկայի ձևին, մեծությանը և տարածության մեջ նրա դիրքին: Հարմարեցնելը աստիճանաբար կբերի նրան, որ երեխայի մոտ կձևավորվի որոշակի նշանակության (փոքրը այն է, որ կարելի է բռնել մեկ ձեռքով, մեծը՝ երկու ձեռքով և այլն): Այդ շրջանում զգայական դաստիարակությունը համարվում է հիմնական:

Նոր տպավորությունների հոսք ապահովելով զգայական զարգացումն անհրաժեշտ է դառնում ոչ միայն զգայարանների զարգացման համար, այլև երեխայի նորմալ ֆիզիկական և հոգեբանական զարգացման համար:

Կյանքի 2-3-րդ տարում զգայական դաստիարակության խնդիրները բարդանում են: Այս տարիքում երեխայի մոտ կուտակվում են պատկերացումներ առարկայի գույնի, ձևի,

մեծության և ուրիշ հատկությունների մասին: Կարևոր է, որ այդ պատկերացումները լինեն բազմազան: Նշանակում է, որ երեխային անհրաժեշտ է ծանոթացնել գույներին: Առարկաների տարբեր հատկություններին ծանոթացնելով համեմատում ենք դրանք իրենց մեծության կամ այլ հատկանիշով (օրինակ.՝ կարմիր գնդակը մեծ է, իսկ կապույտը՝ փոքր և այլն):

Համեմատել առարկաները - սկզբում երեխաները դժվարանում են, որովհետև դեռ աչքաչափը լավ չէ զարգացած: Կարևոր է, որ երեխաները իրար մոտ դնեն, չափեն, զգան տարբերությունը: Այսպես համեմատելով է զարգանում աչքաչափը: Հետագայում նրանք կարողանում են համեմատել նաև այն առարկաները, որոնք հնարավոր չէ իրար մոտ դնել՝ տունը ցածր է, իսկ շենքը՝ բարձր և այլն:

Որքան շատ զգայական պրոցեսներ են ակտիվանում երեխաների մոտ դաստիարակության և ուսուցման գործընթացներում, այնքան արդյունավետ է ընթանում նրա զարգացումը: Զարգանում է երեխաների լսողությունը, հնչյունների ճիշտ արտաբերման ունակությունը: Լսողության զարգացման ցածր մակարդակը իջեցնում է երեխայի հաջող ուսուցման հնարավորությունը: Երեխայի զգայական զարգացումը համարվում է տարբեր ունակությունների ձևավորման և զարգացման հաջողության գրավականը: Այն պետք է սիստեմատիկորեն ուղեկցի երեխային կյանքի բոլոր փուլերում: Ժամանակակից կյանքի տեխնիկական հագեցվածությունը զգայական փորձի պակաս է առաջացնում, երեխաները ակամա տեղափոխվում են ուրիշ աշխարհ, հետո դժվար է լինում այդ երեխաներին հետ բերել իրական կյանք: Այդ պատճառով խիստ սահմանափակվում և արգելվում է երեխաներին հեռախոսներ և այլ տեխնիկական միջոցներ տրամադրել խաղալու համար:

Կան դաստիարակներ, որոնք խմբում ստեղծում են զգայական անկյուններ: Այն նպատակ ունի զարգացնել զգայական ընկալումները՝ տեսողությունը, լսողությունը, հոտառությունը, շոշափելու ունակությունը:

Տեսողության զարգացման համար ցանկալի է ունենալ բազմազան խաղալիքներ՝ նաև լուսային, գունավոր ժապավեններ, նկարներ («Նկար պահմտոցի», «Գտիր հինգ տարբերություն» և այլն), պատկերազարդ գրքեր, ավազի ժամացույց և այլն:

Լսողության զարգացման համար՝ տարբեր կենդանիների, թռչունների ձայների ձայնագրություններ, ծովի, գետի, անձրևի բնական ձայներ, տարբեր խաղալիք երաժշտական գործիքներ: Շատ կարևոր է, որ նախադպրոցական հասակում երեխան լսի դասական երաժշտություն:

Շոշափելիքի զգայարանը զարգացնելու համար ունենալ մորթու, մետաքսե, բրդյա, բամբակե կտորներ, տարբեր որակի թղթեր, ստվարաթղթեր, ուռուցիկ պատկերներ և այլն:

Հոտառության զարգացման համար ունենալ տարբեր տարաներ հոտերի պահպանման համար (նարնջի, մանդարինի, կիտրոնի կեղևներ, տարբեր համեմունքներ՝ մեխակ, ուրց, դարչին և այլն):

Համի զարգացման համար՝ ափսեներ, բաժակներ երեխաներին տարբեր մրգեր, հեղուկներ տալու համար:

Նախադպրոցական հասակի երեխաները ճանաչում են առարկաներն իրենց բնորոշ հատկություններով: Կամաց - կամաց նրանց մոտ ձևավորվում է զգայական էտալոն:

Ի՞նչ պետք է ճանաչի երեխան հինգ տարեկանում.

Գույն - Ծիածանի գույները, ցանկալի է նրբերանգներով:

Ձև - Երկրաչափական պատկերներ (շրջան, քառակուսի, ուղղանկյուն, օվալ, եռանկյուն):

Լսողություն - մայրենի լեզվի հնչյունները, երաժշտական նոտաները, կենդանիների և թռչունների ձայները:

Համ - Քաղցր, աղի, թթու, դառը, կծու և այլն :

Հոտ - Ծանր, թեթև, թարմ և այլն:

Թե՛ մանկավարժները և թե՛ ծնողները պետք է ուշադիր լինեն, հարմար իրավիճակում կրկնեն, որ երեխաների հիշողության մեջ ամրապնդվի այս բոլորը:

Երեխայի լիարժեք զարգացման ցուցանիշներից մեկը շոշափողական զգայարանի զարգացումն է: Այն սերտորեն կապված է մտածողության և զարգացման հետ: Մատները շատ զգայուն են ռեցեպտորներով հարուստ, որոնք ազդակներ են ուղարկում կենտրոնական նյարդային համակարգ (գլխուղեղ) և նպաստում օրգանիզմի կարևորագույն համակարգերի գործունեությանը: Գնդակներով, ընկույզներով վարժությունները հիանալի տոնուսավորող և բարելավող ազդեցություն են թողնում: Այդ վարժությունները թարմացնում են հիշողությունը, թուլացնում էմոցիոնալ լարվածությունը, կորդինացնում շարժումները: Խաղալու ընթացքում որոշ հնչյուններ ավելի պարզ են արտաբերում, ուրեմն այն նպաստում է նաև խոսքի զարգացմանը:

Երեխայի ձեռքի մատների շարժումների զարգացմանը նպաստում են առարկայական խաղերը, փազլները, բուրգերը, կոճակների կոճկումը, պտուտակների ամրացումը, ուլունքների շարումը և այլն: Շատ մայրիկներ և տատիկներ երեխաներին զրկում են ինքնուրույնությունից՝ հագուստի կոճակներն ու կոճգամն իրենք են կոճկում, երեխային փոքր համարելով կամ ուշանալու պատճառով: Սակայն այդ գործողությունները երբ երեխան ինքն է կատարում, զարգանում է ձեռքերի մատների մկանները, այդ գործողությունը կատարելու հմտությունը: Պետք է հիշել, որ ինքնասպասարկման զարգացումը շատ կարևոր է երեխայի համար: Մատների մկանները կարելի է զարգացնել հատուկ վարժությունների միջոցով, խաղերի ու կերպարվեստային

պարապմունքների միջոցով: Շատ արդյունավետ է կինետիկ ավազի հետ խաղալը, որը հանգստացնում է երեխաներին և կարգավորում է մանկական ագրեսիվությունը:

2-3 տարեկան հասակում զգայական պրոցեսները զարգանալով, զարգացնում է նաև երեխայի խոսքը: Վաղ տարիքը երեխայի երկրորդ ազդարարային համակարգի բուռն զարգացման շրջանն է [1.75էջ] ՍՍՀՄ Գ.Ա. ակադեմիկոս Ա.Պ. Պավլովը, ի թիվս այլ ուղղությունների, ուսումնասիրել է բարձրագույն նյարդային գործունեության, դրա տիպերի, նյարդային հիմնական պրոցեսների՝ դրդման և արգելակման գլխուղեղի կեղևում ֆունկցիաների տեղակայման հարցերը: Նա ապացուցել է, որ մարդու մոտ առաջին ազդարարային համակարգի հետ գործում է երկրորդ ազդարարային համակարգը: Խոսքը փոխարինում է իրական ազդակին. «Զգուշացի՛ր տաք է» արտահայտությունը առաջացնում է ձեռքի հեռացում տաք առարկայից մինչև դրան կպչելը: Թվում է, թե մաշկի ռեցեպտորները ստացել են համապատասխան ինֆորմացիա: Այս ուսմունքը նոր լույս սփռեց և հիմք հանդիսացավ այլ գիտությունների զարգացմանը: Այն երեխաների ճանաչողականության զարգացման մեջ մեծ դեր ունի:

Վաղ տարիքի ամենակարևոր ձեռքբերումը խոսքային հաղորդակցում է, որն արդյունք է խոսքի տիրապետման և մտածողության զարգացման: Հայտնի է որ խոսքի և մտածողության զարգացման գործընթացները փոխկապված են, որ խոսքը՝ մտածողության գործիքն է: [1;75էջ] Սակայն խոսքի զարգացումը ոչ բոլոր երեխաների մոտ է կատարվում: Կան երեխաներ, որոնք կա՛մ բնածին, կա՛մ որոշ հիվանդությունների, տրավմաների պատճառով կորցրել են զգայական ունակությունը կամ ունակությունները: Այս երեխաներին օգնելու համար գոյություն ունեն նեղ մասնագիտություններ և մասնագետներ, ովքեր տարբեր մեթոդների միջոցով օգնում են երեխաներին գրագիտություն ստանալ: Մեծ մանկավարժ Սուխոմլինսկին գտնում է, որ երեխաների խելքը գտնվում է մատների ծայրին: Ծոշափման միջոցով տարվում է տեսողությունը կորցրած երեխաների ուսուցումը: Լ.Ս. Վիգոտսկին գտնում է, որ երեխայի ուսուցումը պետք է առաջ վազի և իր ետևից տանի զարգացումը: Այս պնդումը աքսիոմա է դարձել մանկական հոգեբանության և մանկավարժության մեջ:

Նախադպրոցական հասակում զգայությունն ու զգայական ընկալումներն ընթանում են հետաքրքիր: Այդ գործընթացում մեծ դեր ունեն դիդակտիկ խաղերն ու վարժությունները:

3. ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐ

Դիդակտիկ խաղերը լայնորեն կիրառվում են նախադպրոցական դաստիարակության մեջ և անփոխարինելի դեր ունեն: Դիդակտիկ խաղերն ուսուցողական նշանակություն ունեն, որովհետև դրանց ընթացքում երեխաները ստանում են որոշակի գիտելիքներ և ունակություններ:

Երեխան իր կյանքի առաջին օրից ծանոթանում է շրջակա միջավայրին, ստանում տեղեկություններ, բայց միայն սեփական փորձով սովորելը լիարժեք չի լինի: Դիդակտիկ խաղերի միջոցով մենք օգնում ենք ճշտել սիստեմավորել և ամրապնդել երեխաների գիտելիքները: Դիդակտիկ խաղերի նպատակն է՝ սովորեցնել երեխաներին, զարգացնել նրանց մտավոր կարողությունները: Դիդակտիկ խաղերում խնդիրները ներդաշնակվում են երեխաների համար առավել հարմար գործողությունների հետ, այդ պատճառով էլ հանդիսանում են նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության առավել արդյունավետ միջոցներ: Մանկապարտեզում դիդակտիկ խաղերը գործածվում են պլանավորված ձևով և դաստիարակության , ուսուցման կարևոր օղակներից մեկն են հանդիսանում: Քանի որ դիդակտիկ խաղերի միջոցով կարող ենք նոր նյութ մատուցել, անցածը՝ ամրապնդել, դրանք դառնում են մանկապարտեզում տարվող պարապմունքների մի ձևը կամ որևէ պարապմունքի լրացուցիչ մասը:

Դիդակտիկ խաղերն ունեն հետևյալ կառուցվածքը. խնդիր, գործողություն, կանոն, արդյունք: Դիդակտիկ խաղի խնդիրը երեխայի մոտ հետաքրքրություն է առաջացնում, ուշադրություն է ակտիվացնում, հարստացնում է նոր գիտելիքներով: Շատ կարևոր է հիշել, որ դիդակտիկ խաղերի անցկացման ժամանակ խաղի խնդիրը համապատասխանի երեխաների տարիքային հնարավորություններին: Այն չպետք է լինի բարդ կամ հեշտ, որ խաղի նկատմամբ երեխաների հետաքրքրությունը չկորչի:

Դիդակտիկ խաղի գործողությունը ամենակարևոր մասն է: Խաղի խնդիրը լուծվում է հենց գործողության միջոցով և կազմակերպում երեխայի վարքը, հետաքրքրասիրություն է առաջացնում: Դիդակտիկ խաղի գործողությունը նպաստում է խնդրի լուծմանը և կատարում խաղի ուսուցողական նպատակը: Շատ կարևոր է, որ այն գրավիչ լինի մինչև խաղի ավարտը:

Դիդակտիկ խաղի կանոնները բացահայտում են խաղի բովանդակությունը, նշում խաղային գործունեության զարգացումը և այն ճանապարհը, որով պետք է իրագործվի խաղի նպատակը: Կանոնները կազմակերպչական նշանակություն ունեն և դրանք երեխաներից պահանջում են կարգապահություն և կամքի ուժ:

Դիդակտիկ խաղի արդյունքը խաղի եզրափակումն է, որը պետք է գնահատել, թե՛ երեխաների և թե՛ դաստիարակի տեսանկյունից:[2.5էջ] Շատ կարևոր է , որ երեխան

կատարի խաղի խնդիրը, կանոնը, գործողությունը և ստանա անհրաժեշտ արդյունք: Դիդակտիկ խաղերը կարող են օգտագործվել բոլոր մեթոդիկաների պարապմունքների ժամանակ, մատուցվող նյութի խնդիրներին համապատասխան:

Գիտության զարգացմանը զուգընթաց, մեծ տարածում ունեն համակարգչային դիդակտիկ խաղերը, որոնք շատ հետաքրքիր են: Սակայն այս ոլորտի խաղերը կարիք ունեն ուսումնասիրման և մշակման, թե՛ մանկավարժության և թե՛ բժշկական տեսանկյունից: Մեծ է դիդակտիկ խաղերի դերը որպես զգայական դաստիարակության միջոց: Այն կոչված է զարգացնելու երեխաների տեսողության, լսողության, համի, հոտի և շոշափելիքի զգայարանները, զգայական ընկալումները:

Հայտնի է, որ զգայական տպավորությունների հիման վրա է երեխան ճանաչում շրջակա աշխարհը: Հետազոտությունները, որ կատարել են Լ.Ա. Վենգերի ղեկավարությամբ, հիմք են հանդիսացել նախադպրոցական հասակի երեխաների համար դիդակտիկ խաղերի և վարժությունների շարք ստեղծել, որոց միջոցով կատարելագործվում է ճանաչողական գործընթացը, զարգանում են երեխաների զգայական ընկալումները:

Դիդակտիկ խաղերն ակտիվացնում և զարգացնում են երեխայի խոսքը, հարստացնում բառապաշարը, զարգացնում ճիշտ հնչարտաբերությունը:

Դիդակտիկ խաղերը լինում են՝

- Առարկայական
- Տպագիր սեղանային խաղեր
- Բանավոր խաղեր

4. ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Մանկապարտեզի առաջին եռամսյակի ծրագրում կարմիր թելի նման շարունակվում է «Աշուն» թեման: Այն իր արտացոլանքն է գտնում նաև դիդակտիկ խաղերում: Կարևոր է, որ երեխաների ստացած գիտելիքներն ամրապնդվեն խաղերի ընթացքում: Ձեզ եմ ներկայացնում դիդակտիկ խաղերի շարք, որը զարգացնում է երեխաների տեսողության, լսողության, համի, հոտի և շոշափելիքի զգայարանները, միաժամանակ ամրապնդում մրգերի և բանջարեղենների մասին գիտելիքները: Լսողության զարգացման համար դիտարկված խաղը բացառություն է կազմում, աշնան հետ կապ չունի:

<u>ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂ «Ի՞նչ է պատկերված նկարում»</u> <u>(սեփական փորձից)</u>

Դիդակտիկական խնդիր - անվանել նկարում պատկերված միրգը կամ բանջարեղենը: Զարգացնել ճանաչողությունը:

Խաղի կանոնները- Անվանել նկարը, դնել համապատասխան զամբյուղում: Ուշադիր լսել ընկերներին, չմիջամտել:

Խաղի գործողությունը - վերցնել նկարը, անվանել, որոշել միրգ կամ բանջարեղեն լինելը, դնել համապատասխան զամբյուղում:

Խաղի ընթացքը - երեխաներին բացատրել խաղի կանոնները. «Երեխաներ, հիմա աշուն է, այգիներում մրգերն են հավաքում, բանջարանոցներում՝ բանջարեղենը: Այս սեղանին կան նկարներ, դուք պետք է ճանաչեք, թե ի՞նչ է պատկերված նկարում, ասեք միրգ է, թե՝ բանջարեղեն: Մրգերը դրեք ձախ կողմի զամբյուղում, իսկ բանջարեղենները՝ աջ: Ո՞վ է ցանկանում մասնակցել խաղին»: Երեխաները հերթով վերցնում են նկարները, անվանում և տեղադրում համապատասխան զամբյուղում: Ճիշտ պատասխանողը արժանանում է ծափահարությունների:

Խաղի արդյունքը - Խաղի ընթացքում պարզվեց, որ երեխաներից շատերը մրգերի և բանջարեղենների որոշ անվանումները հայերեն տարբերակով չգիտեին, անվանում էին ոչ գրական հայերենով: Այդ իսկ պատճառով անվանումները կրկնում ենք նկարի ցուցադրմանը զուգընթաց, որպեսզի հիշողության մեջ ամրապնդվի մաքուր հայերենը:

Գնահատում – Հիանալի է, դուք նկարները զամբյուղում ճիշտ տեղադրեցիք: Հույսով եմ, որ մրգերի և բանջարեղենների անվանումները լավ կհիշեք:

Վերլուծություն- խաղի միջոցով ամրապնդվեց երեխաների պատկերացումները մրգերի և բանջարեղենների վերաբերյալ, ի հայտ եկան սխալ պատասխաններ, ուղղեցինք այդ սխալները: Պարապմունքը նպաստեց տեսողության, հիշողության զարգացմանը ,

բառապաշարը հարստացավ լոլիկ, կաղամբ, պղպեղ, բառերով: Խաղը հետաքրքիր էր երեխաների համար:

ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂ «Ճանաչիր համից և հոտից»

Դիդակտիկական խնդիր - Երեխայի համի և հոտի զգացողության միջոցով անվանել մրգերն ու բանջարեղենները: Զարգացնել հիշողությունը և ուշադրությունը:

Խաղի կանոնները - Աչքերը փակ վիճակում հոտ քաշել և համտեսել, անվանել, թե ինչ էր դա:

Խաղային գործողություն - փակել աչքերը, համտեսել, պատասխանելիս չշտապել, սխալվելու դեպքում ուրիշ կտոր էլ տալ, որ կարողանա համը տարբերել: Գուշակելուց հետո աչքերը բացել, ցույց տալ ամբողջական միրգը կամ բանջարեղենը :[3.38էջ] (փոփոխված)

Խաղի ընթացքը - պարապմունքը սկսում ենք երգով.

«Ջան, ջան,ջան աշուն է,
Տես , տես, տես նախշուն է,
Տանձ ու խնձոր ուտելու
Նա մեզ այգի է կանչում»:

Սեղանին դրված ե 2 սկուտեղ՝ մեկը ամբողջական մրգերով և բանջարեղեններով , մյուսը՝ նույն մրգերն ու բանջարեղենները կտրտած (խնձոր, տանձ , վարունգ, լոլիկ): Երեխան աչքերը փակ համտեսում է: Համտեսելուց հետո ասում է, թե ինչ էր, և ցույց է տալիս ամբողջական միրգը կամ բանջարեղենը: Խաղը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև որ բոլոր երեխաները համտեսեն և գուշակեն: Խաղի վերջում մասնատում ենք ամբողջական մրգերն ու բանջարեղենները, որպեսզի երեխաները համտեսեն այն ինչ որ ցանկանում են:

Խաղի գնահատում - «Կեցցեն իմ բալիկները, դուք ճանաչում եք մրգերն ու բանջարեղենները համի և հոտի միջոցով , իսկ ում դա չհաջողվեց թող առօրյայում ուշադիր լինի»:

Խաղի վերլուծություն - Պարզվեց, որ 2 երեխայից բացի, մյուսերը ճանաչում են մրգերն ու բանջարեղենները հոտի և համի միջոցով: Կային դեպքեր, որ վարունգն ու լոլիկը գրական չանվանեցին: Երեխաներից մի քանիսը խաղի սկզբում փորձում էին հուշել, բայց զգուշացումից հետո, որ իրենք կզրկվեն խաղին մասնակցելու հնարավորությունից՝ չշարունակեցին այդ վարքագիծը:

Խաղը նպաստեց երեխաների համի, հոտի զգացողության զարգացմանը, ճանաչողականությանը: Զարգացրեց երեխաների զսպվածությունը, կարգապահությունը:

ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂ «Ճանաչիր ձայնից»

Դիդակտիկական խնդիր - սովորեցնել երեխաներին տարբերել ձայները և անվանել: Զարգացնել ուշադրությունը, լսողական հիշողությունը, գուշակելու կարողությունը:

Խաղի կանոնները - Երեխան առանց տեսնելու պետք է որոշի, թե ո՞ր առարկայի ձայնն է լսել: Խաղի սկզբում բոլոր առարկաները ցուցադրվում են, անվանելով լսում են ձայնը :

Խաղի գործողությունը - Երեխան կանգնում է հակառակ ուղղությամբ, որպեսզի չտեսնի առարկաները: Ուշադիր լսում է ձայնը և շրջվելով ցույց է տալիս խաղալիքը:[3:73] (փոփոխված):

Խաղի ընթացքը- Երեխաներին ցուցադրում ենք դափը, չխչխկան խաղալիքը և թմբուկը:

-Երեխաներ, լսեք, թե այս խաղալիքներն ինչ ձայն են հանում, հիշե՛ք ձայնը, որ խաղի ժամանակ ճիշտ գուշակեք:

Երեխաները հերթով լսում են առարկայի ձայնը և գուշակում: Երեխաները դժվարությամբ էին պահպանում խաղի կանոնները, ցանկանում էին հուշելով օգնել: Զգուշացումից հետո պահպանեցին լռություն: Պարապմունքի ժամանակ ճիշտ պատասխանները շատ էին:

Գնահատում – Երեխաներ շատերդ ճիշտ գուշակեցիք , ապրեք, բայց խաղի սկզբում խանգարեցիք ձեր ընկերոջը: Հիշեք , որ հուշելով ոչ թե օգնում այլ շփոթեցնում եք պատասխանողին:

Վերլուծություն - Խաղը զարգացրեց երեխայի ուշադիր լսելու ունակությունը, ձայնի միջոցով առարկան որոշելու կարողությունը, հետաքրքրասիրությունը: Բառապաշարը հարստացավ դափ, թմբուկ բառերով:

ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂ - «Հրաշալի պարկ» (սեփական փորձ)

Դիդակտիկական խնդիր - Ճանաչել, թե ի՞նչ կա պարկում շոշափելու միջոցով: Զարգացնել շոշափելու ունակությունը, ճանաչողականությունը: Ամրապնդել մրգերի և բանջարեղենների մասին գիտելիքները:

Խաղի կանոնները - Խաղալիք մրգերն ու բանջարեղենները շոշափելով ասել, թե ինչ է դա: Չնայե՛լ պարկի մեջ:

Խաղի գործողությունը – Շոշափել առարկան և ձևից, գուշակել առարկայի անվանումը:

Խաղի ընթացքը- Սեղանին դրված են արհեստական մրգեր և բանջարեղեններ՝ դեղձ խնձոր, տանձ, նարինջ, մանդարին, խաղող, վարունգ, բազուկ, դդում, պղպեղ,գազար, շաքարի ճակնդեղ, լոլիկ և այլն:

- Երեխանե՛ր, այսօր մենք պետք է խաղանք «Հրաշալի պարկ» խաղը: Ուշադիր եղեք շոշափելիս, որպեսզի ճիշտ գուշակեք, հիշե՛ք, որ միայն անվանելուց հետո եք հանելու պարկից:

Երեխաները մոտենում են, նայում, շոշափում, մտապահում: Այնուհետև, բոլոր մրգերն ու բանջարեղենները լցնում ենք պարկը: Երեխաները հերթով մոտենում են պարկին, առանց նայելու շոշափում են պարկի մեջ գտնվող որևէ նմուշ և անվանելուց հետո միայն, դուրս բերում պարկից:

Ոչ բոլոր երեխաները կարողացան ճիշտ գուշակել:

Գնահատում - Երեխաներին գնահատում ենք խրախուսելով և գովեստի խոսքերով:

Վերլուծություն - Խաղի միջոցով երեխաների մոտ զարգացավ շոշափելու ունակությունը: Ոչ ճիշտ պատասխաններն էլ ինչ որ առումով ճիշտ էին, քանի որ շոշափելով տարբերել գնդաձև խնձորն և գնդաձև նարինջը մի քիչ դժվար է:

Խաղը զարգացրեց երեխաների շոշափելու, առարկայի ձևը որոշելու ունակությունը, ճանաչողականությունը :

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դիդակտիկ խաղերի միջոցով երեխաների զգայական դաստիարակության խնդիրները հաջողությամբ են իրականացվում, երեխան չի զգում, որ ինքը ուսուցման, դաստիարակության պրոցեսի մեջ է: Նա խաղում է, կատարում է խաղի կանոնները և միաժամանակ գիտելիքներ, տպավորություններ ստանում: Զարգանում է նրա զգայարանները, զգայական ընկալումները, ուշադրությունը, երևակայությունը, կարգապահությունը, բանավոր խոսքը և այլն: Շատ կարևոր է , որ խաղին հանգամանորեն նախապատրաստվեն, ընտրեն որակյալ , հետաքրքիր դիդակտիկ նյութեր, խաղն անցկացնեն հմտորեն և ուրախ մթնոլորտում, ուշադիր լինեն, որպեսզի բոլոր երեխաները մասնակցեն խաղին:

Հաշվի առնելով երեխաների զարգացման ու դաստիարակության գործում խաղերի ունեցած հսկայական նշանակությունը և այն, որ երեխաները խաղերի մեծ պահանջ ունեն, պետք է պայմաններ ստեղծել դիդակտիկ խաղերի անցկացման համար: Երեխաները պետք է խաղան և զարգանան միաժամանակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս.Ա Մարության Ա.Մ.Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն» Երևան 2008թ. 288 էջ

2. Լ. Սմբատյան «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում» Երևան 2014 151 էջ

3. А.К. БОНДАРЕНКО “Дидактические игры в детском саду”
Москва “Просвещение” 1985г. 176ст.

4. Под ред. Л.А Венгера “Воспитание сенсорной культуры ребенка”
Москва “Просвещение” 1988г. 144ст.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐՄԱՆ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էկոլոգիական կրթության հիմունքները նախադպրոցական տարիքում, թափոնների կառավարում և վերամշակում

Կատարող՝ Սուսաննա Սարգսյան

Ղեկավար՝ մ.գ.թ. Լուսինե Միրաբյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն	**3**
Գլուխ 1 Էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի կազմակերպումը	**5**
Գլուխ 2 Էկոլոգիական դաստիարակությանը նպաստող միջոցները	**7**
Գլուխ 3 Փորձարարական աշխատանք՝ թափոնների կառավարում	**8**
Եզրակացություն	**18**
Գրականություն	**19**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի կազմակերպման համար կարևոր է էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը, որը դրսևորվում է շրջակա միջավայրի և նրա ամբողջական պահպանման նկատմամբ երեխաների պատասխանատու վերաբերմունքի մեջ, որի հիմքում ընկած է հասարակության մեջ ընդունված բարոյական և իրավական նորմերը:

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը:

Այս թեմայի **արդիականությունը** կայանում է նրանում, որ այն միտված է օգնել երեխային ուշադիր լինել շրջակա միջավայրի նկատմամբ, խնամքով և հոգատարությամբ լցվել բնության ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների հանդեպ:

Հետազոտության նպատակը

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական դաստիարակությանը վերաբերվող գիտական, մեթոդական, գիտամեթոդական գրականություն, ուսումնասիրել այլոց փորձը և կատարել վերլուծություններ և եզրահանգումներ:

Հետազոտության խնդիրները

1. Նկարագրել էկոկրթության հիմունքները նախադպրոցական տարիքում
2. Բացահայտել էկոլոգիական դատիարակությանը նպաստող միջոցները
3. Իրականացնել հետազոտություն ծնողների և երեխաների շրջանում:

Մարդն իր կործանարար գործունեությամբ նույնպես կարող է խախտել էկոհամակարգի հավասարակշռությունը: Այսօր Երկիր մոլորակը կանգնած է էկոլոգիական աղետի եզրին և այն կարող ենք փրկել բոլորս միասին: Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը ներկայիս ժամանակներում գոյապահպանման պահանջ է:Պահպանելով բնությունը՝ մարդիկ պահպանում են իրենց գոյությունը:

Բնապահպանական կրթության կենտրոնական խնդիրը շրջակա միջավայրի պահպանությանն առընչվող հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացումն է: Այդպիսի հարցերից մեկն էլ թափոնների հիմնախնդիրն է, որի լուծման խնդիրն այսօր

Հայաստանում շատ արդիական է: Պատճառներից մեկն էլ աղբահավաքման տեսակավորման համընդհանուր համակարգի բացակայությունն է: Այդ իսկ պատճառով ես ընտրել եմ այս թեման, քանի որ էկոլոգիական գիտակցության ձևավորումը ն/դ կրթության կարևորագույն խնդիրներից մեկն է, որը ձևավորում է բարոյական մշակույթ և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա:

Թեմայի ընտրության հիմնական նպատակը՝ նախադպրոցականի էկոգիտակցության և մտածելակերպի, ինչպես նաև բնության հանդեպ հոգատար և պատասխանատու վերաբերմունքի ձևավորումն է:

Հետևաբար անհրաժեշտ է՝

- սովորեցնել շրջակա միջավայրի խնամքի կարևորությունն ու կանոնները:
- ծանոթացնել երեխաներին բնության հետ
- հոգատարություն սերմանել շրջակա միջավայրի՝ ծառերի, խոտերի կենդանիների և բնության մաս կազմող տարրի նկատմամբ:

Էկոլոգիական դաստիարակությունն առաջին հերթին ենթադրվում է՝

- իրեն զգալ բնության մի մասնիկ
- ձևավորել գեղեցիկը տեսնելու ընդունակություն
- ձևավորել և զարգացնել երեխաների ճանաչողական ընդունակությունները և բնապահպանական տարրական կարողությունները:

Մանկապարտեզում երեխաների էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրներն են ՝

- շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում
- բնաճանաչողական ընդունակությունների իմացական հետաքրքրությունների ձևավորում
- բնության երևույթների, բուսական և կենդանական աշխարհի փոխկապակցության վերաբերյալ պատկերացումների, հասկացությունների և գիտելիքների ձևավորում:
- բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման դրդապատճառների սովորույթների ու հմտությունների ձևավորում
- կենդանի բնության նկատմամբ ապրումակցման զգացմունքի ձևավորում:

Գլուխ 1

Էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի կազմակերպումը

Այս գործընթացը երեխայի կյանքում կազմակերպվում է մեծահասակների կողմից՝ ծնողների, դաստիարակների, ուսուցիչների կողմից և իրականացվում է մի շարք միջոցներով:

Երեխան դաստիարակի օգնությամբ ծանոթանում է բնության երևույթներին: Դիտարկումների, զբոսանքի ընթացքում ինքնուրույն հետևում է բնության մեջ տեղի ունեցող փոփոխություններին, առանձնացնում է կենդանի ու անկենդան բնության տարբերությունները, դրանց մեջ եղած կապը: Բնությունը երեխայի վրա ներազդելու հզոր միջոց է և դաստիարակելու լավագույն մեթոդ: Յուրաքանչյուր մանկավարժ պետք է դա քաջ գիտակցի:

Երեխային շրջապատող բնությունն ու կենդանական աշխարհը ոչ միայն անսահման գիտելիքներ են պարունակում իրենց մեջ այլև օգտակար են, անչափ հետաքրքիր, գրավիչ և սիրելի: Բնության մեջ երեխային պետք է ցույց տալ ամեն ինչ՝ ծառ ու ծաղիկ, արև ու երկինք, աստղեր ու ամպեր, շրջակա միջավայրում գտնվող ամեն տարր, առարկա, մասնիկ, նյութ:

«Էկոլոգիական դաստիարակությունը երեխայի էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի ձևավորման, էկոլոգիայի վարքագծի և մշակույթի դաստիարակության գործընթացն է:

էկոլոգիական դաստիարակության նպատակը վաղ տարիքից բնության հետ երեխայի միավորումն է, բնության հանդեպ պատասխանատու, հոգատար վերաբերմունքի ձևավորումը» (2.86 էջ)

Բնության մեջ կազմակերպված պարապմունքների, էքսկուրսիաների դիտումների, շրջապատի հետ շփման մեջ մտնելու շնորհիվ երեխան ձեռք է բերում անձնական փորձ, որը թույլ է տալիս նրան հասկանալ իր տեղը բնության մեջ, նրանում վարքի, նորմերի ճիշտ դրսևորման՝ ոչինչ չքանդելու, չապականելու, չտրորելու, այլ տնկելու ,ջրելու, խնամելու, կերակրելու անհրաժեշտություն: Այս հարցում շատ կարևոր է նաև էկոլոգիական բնույթի խաղերն ու մրցույթները:

էկոլոգիական դաստիարակությունը իրականացվում է նաև արվեստի միջոցով, քանի որ արվեստի բոլոր ձևերը էկոլոգիական դաստիարակության համար լայն հնարավորություններ են ընձեռում:

Կերպարվեստի, երաժշտության, գրականության, թատրոնի, քանդակագործության միջոցով երեխաները ծանոթանում են բնության երևույթներին: Երեխաների մեջ սեր, վստահություն, հարգանք է դրսևորվում բնության, հայրենիքի, իրենց շրջապատող մարդկանց նկատմամբ: Բնության մեջ կատարվող աշխատանքների շնորհիվ երեխան ձեռք է բերում այնպիսի կարևոր հատկություններ ինչպիսին են բնությանն օգնելու պատրաստակամությունը և սերը դեպի բնությունը:

էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացի կազմակերպումը

- խմբում երեխայի գործունեության էկոլոգիական ուղղվածություն
- զբոսանքների ժամանակ դիտումների անցկացում
- խմբի՝ բնության օրացույցում դիտումների գրանցում
- գրականության ընթերցում
- համապատասխան ֆիլմերի դիտում
- խաղերի կազմակերպում և անցկացում
- խմբերում էկոլոգիական դաստիարակության պայմանների ստեղծում՝ բնության անկյան առկայություն, լուսանկարներ, բնական նյութեր
- երեխաների հետ միասին համապատասխան բույսերի և կենդանիների թռչունների ընտրություն և խնամք
- աշխատանք ծնողների հետ:

Գլուխ 2

Էկոլոգիական դաստիարակությանը նպաստող միջոցները:

Էկոլոգիական դաստիարակության հաջորդ միջոցը մանկապարտեզում կազմակերպվող նպատակային պարապմունքն է:

«Նախապես պլանավորված պարապմունքների համակարգը նպաստում է Էկոլոգիական գիտելիքների յուրացմանը և սովորեցնում երեխաներին տարբերել Էկոլոգիական գիտելիքների ուղղվածությունը՝ դրանք հարկ եղած դեպքում կիրառելու նպատակով:

Էկոլոգիական գիտելիքները լինում են երեք ուղղվածության

- Կենսաբանական բնույթի՝ դրանք բնութագրում են կենդանի օրգանիզմների կենսակերպը
- Սոցիալական բնույթի՝ դրանք ներկայացնում են մարդ-բնություն փոխհարաբերությունը
- Կիրառական բնույթի, որոնք ուղղված են բնապահպան գործունեության գիտակցմանը» (2. 88 էջ)

Հատուկ կազմակերպված պարապմունքներից բացի Էկոլոգիական գիտելիքներ կարող են փոխանցվել խաղ-պարապմունքների, խաղ-վիկտորինաների ուսուցման այլ ձևերի միջոցով: Էկոլոգիական բնույթի միջոցառումները ՝ շաբաթօրյակները, ծառատունկը, միջավայրի բարեկարգումը ևս նպաստում են էկոլոգիական դաստիարակությանը:

«Բնության հավասարակշռության պահպանության համար երեխաները պետք է սովորեն ամենուրեք պահպանել առողջապահական մաքրություն՝ չաղտոտեն գետերը, լճերը, աղբյուրները, հողերը, մթնոլորտը, շրջակա միջավայրը, չկտրեն, չոչնչացնեն մատղաշ ծառերը, այգիները, անտառներում կրակ չվառեն»: (1. 386 էջ)

Այս հարցում իր մասնակցությունը պետք է ունենա նաև ընտանիքը, ողջ հասարակությունը: Էկոլոգիական պարապմունքների շրջանակում կարևոր է ճիշտ օգտագործել տարբեր ուսուցման մեթոդներ, որի արդյունքում հնարավոր է դաստիարակել էկոլոգիապես գրագետ և ազնիվ մարդ:

Գլուխ 3

Փորձարարական աշխատանք՝ Թափոնների կառավարում

Էկոլոգիական դաստիարակությունը շատ կարևոր է մոլորակի և մարդկության համար: Կենցաղային թափոններով շրջակա միջավայրի աղտոտումը մարդու վրա ազդում է օդի, ջրի, աղբով թունավորված հողում աճած բուսական ծագման սննդի միջոցով:

«Հասարակությունը կանգնած է աղետի առաջ, քանի որ բնությունը գնալով մահանում է, աղտոտվում տարբեր արդյունաբերական և տնտեսական թափոնների արդյունքում՝ մարդկությանը սպառնացող մի շարք հիվանդությունների պատճառ դառնալով»: (4. 28 էջ)

Այսօր մասնագետները՝ կարևորելով Էկոլոգիական կրթությունը կատարում են բազմաթիվ հետազոտություններ:

Կան մի շարք գործողություններ, որոնց միջոցով կարելի է խուսափել և նվազեցնել թափոնների քանակը: Վառ օրինակներից է այն, որ Հայաստանի մի քանի մարզերում, այդ թվում Լոռու մարզում գործում են պլաստիկի վերամշակման կետեր: Այդ նպատակով ամբողջ մարզում տեղադրված են հատուկ պլաստիկի համար նախատեսված արկղեր: Այս ամենը հնարավոր է դարձել միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ:

«Երեխաները թափոնների հիմնախնդրի մասին իրազեկության տեսանկյունից ամենակարևոր խմբերից մեկն են, քանի որ նրանք իրենց ծնողների և ընտանիքի մյուս անդամների վարքագծի ու վարվելակերպի վրա ազդող ամենաարդյունավետ գործոնն են, և նրանք են հանդիսանում երկրի ապագան կերտողները:

Մեր երկիրը, մեր շրջակա միջավայրը մաքուր պահելու խնդիրն է՝ իրականացնել և աջակցել թափոնների խնդրի մասին իրազեկության բարձրացման քարոզարշավներին»: (4. 14 էջ)

Էկոլոգիական կրթությունը մեծապես նպաստում է նման գիտակցության ձևավորմանը նախադպրոցական հաստատությունում:

Բնապահպանական կրթությունը սովորելու գործընթաց է, որի միջոցով ավելանում է երեխաների գիտելիքներն ու իրազեկությունը շրջակա միջավայրի և նրան առընչվող խնդիրների մասին:

Այսօր մարդկության առաջ խնդիր է ծառացել կարգավորելու, կայունացնելու, հավասարակշռելու իր հարաբերությունները բնության հետ, քանի որ ժամանակակից մարդը թափանցել է նորանոր միջավայրեր՝ շրջանցելով էկոլոգիական պահանջները, դրանով իսկ առաջացրել անցանկալի երևույթներ բնության ու մարդկության միջև և ստեղծել հարաբերությունների անհավասարակշռություն:

- Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից է բնության մեջ գոյություն ունեցող օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը:
- Պահպանելով բնությունը՝ մենք պաշտպանում ենք մեզ և մեր սերունդների շահերը:
- Մարդը բնության մի մասն է և իր կենսագործունեությամբ հազարավոր թելերով կապված է բնությանը:

- Բնության պահպանման համար կարևոր է, որ մարդկային հասարակության և բնության «փոխհարաբերությունները» լինեն կարգավորված:

Երեխաների էկոլոգիական դաստիարակության հիմքը

Երեխաների էկոլոգիական դաստիարակության հիմքը դրվում է ն/դ հաստատություններում: Այդ իսկ պատճառով կարևորվում է, որ նախադպրոցականը հենց այս տարիքից իմանա, թե ինչպես պետք է պահպանել բնությունը: Իսկ բնության պահպանության կարևորագույն միջոց է համարվում թափոնների այլընտրանքային/երկրորդային կիրառությունը՝ առաջնային համարելով երեխաների և նրանց միջոցով ծնողների ներգրավվածությունը շրջակա միջավայրի պահպանման գործում:

Էկոլոգիական կրթության խնդիրների իրականացման կարևոր միջոցը խաղն է, որը նպաստում է երեխաների ճանաչողական, իմացական ունակությունների ձևավորմանն ու ընկալման խորացմանը:

Երեխան հենց կրտսեր խմբից ծանոթանում է բնությանը և երբ սկսում է խնամել ծաղիկները, բույսերը, տեսնում է իր խնամքի արդյունքը, հետաքրքրություն և պատասխանատվություն է

ցուցաբերում բնության երևույթների նկատմամբ և ակամա դառնում է բնության պաշտպանը:

Մասնակցությունը վերապատրաստման *GIZ* ծրագրին, հնարավորություն տվեց մանկապարտեզում կազմակերպել տարբեր աշխատանքներ՝ ուղղված թափոնների երկրորդային կիրառությանը:

Կազմակերպված աշխատանքները մանկապարտեզի ավագ «Ա» խմբի հետ

- ✓ Զբոսանքներ
- ✓ Պարապմունքներ
- ✓ Խմբային աշխատանքներ
- ✓ Ոչ ուղղակի աշխատանք ծնողների հետ:
  Աշխատանքների կազմակերպումն իրականացվել է հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:

Զբոսանքի ընթացքում երեխաների ուշադրությունը հրավիրվել է այն հանգամանքի վրա, թե ինչպես են պլաստիկ շշերը, սննդի փաթեթավորման տուփերն ու մոմլաթե տոպրակներն աղտոտում բնությունն ու շրջակա միջավայրը: Նրանցից շատերը ցանկություն հայտնեցին հավաքել այդ թափոններն ու մաքրել մոտակա այգին, պուրակները:

Ավագ խմբերում անց են կացվել պարապմունքներ.

Թեմա՝ «Թափոնների կառավարում և վերամշակում»

Նպատակ՝

- Երեխաներին սովորեցնել՝ ինչ է նշանակում թափոն:
- Ծանոթացնել թափոնների տեսակներին:
- Երեխաներին զինել թափոնների կայուն կառավարման հմտություններով (հավաքել, տարանջատել, վերամշակել դրանք՝ նպատակ ունենալով ստանալ նոր հումք կամ չեզոք թափոն):

ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- *Իրազեկել երեխաներին թափոնների վատ հետևանքների մասին*
- *Երեխաների միջոցով ունենալ ոչ ուղղակի ազդեցություն ծնողների և ընտանիքի մյուս անդամների վրա*
- *Հոգատարություն դրսևորել բնության նկատմամբ*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝

Լուսանկարներ, ստվարաթուղթ,գունավոր թղթեր, պլաստմասե շշեր, գունավոր խցաններ, սիլիկոնե սոսինձ, գուաշ, ձող:

ԸՆԹԱՑՔԸ՝

Երեխան պարտավոր է նախադպրոցական տարիքից հասկանալ՝ ինչ է նշանակում թափոն և ինչ է նշանակում թափոնների կայուն կառավարում:

Պարապմունքի ընթացքում երեխաներին բացատրվել է, որ թափոններ ստեղծողը մարդն է, դրանք տեսանելի են և ամենուր: Սակայն դրանք կարող են ունենալ նաև այլընտրանքային օգտագործում, որի համար պարզապես պետք է փոխել որոշ սովորություններ:

Պարապմունքի ընթացքում պլաստիկ թափոնների խնդրից բացի անդրադարձ կատարվեց նաև այնպիսի հարցերի, ինչպիսիք են *այգեգործական թափոնները և թղթի վերամշակումը*: Երեխաներն իմացան, որ այգեգործական թափոններն առաջանում են այգիներում, զբոսայգիներում և այլ հասարակական կանաչ տարածքներում: Դրանց մեջ են մտնում կտրված խոտը, ծառերից կուտակված աշնանային տերևները և այլն: Քանի որ տերևները 100%-ով առանձնացվում են, դրանք համարվում են ամենից անվտանգ թափոնները: Սակայն դրանք դառնում են շատ վտանգավոր, երբ այրում են՝ հանգեցնելով օդի աղտոտմանը և ածխաթթու գազի արտանետմանը: Երեխաները պարտավորվեցին զգուշացնել հայրիկներին պապիկներին, որ չայրեն այգեգործական թափոնները, այլ այգու մի հատվածում կոմպոստացնեն՝ լցնեն դրա համար նախատեսված սարքավորման մեջ, քանի որ վերամշակման արդյունքում նրանից հիանալի պարարտանյութ է ստացվում: Այն շատ հարմար է ունենալ նաև մանկապարտեզի և դպրոցների բակերում, քանի որ շրջակայքը տերևներից մաքրելը կարող է նաև լավ ժամանց լինել ամբողջ խմբի կամ դասարանի համար:

Իրականացվեցին նաև խմբային աշխատանքներ՝ ուղղված թափոնների կիրառմմանը: Պարապմունքի ընթացքում թափոններից պատրաստվել են գեղեցիկ ծաղիկներ, զատիկներ, ձկներ, նապաստակներ:

Եզրակացություն

Իրականացման արդյունքում հանգեցի հետևյալ եզրակացությանը, որ թափոնների կառավարումը շատ արդիական է և աչքի է ընկնում իր դաստիարակչական և ուսումնական մեծ նշանակությամբ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նախադպրոցական տարիքում երեխան ընկալում և հասկանում է բնության մեջ գոյություն ունեցող բազմաբնույթ շղթայական կապերը, հետևաբար ընդունակ է պատկերացնելու բնության ամբողջականությունը: Երեխայի աշխարհճանաչումն սկսվում է բնաճանաչողությունից:

Մասնակցելելով վերապատրաստման ծրագրին, և կիրառելով այդ փորձը մանկապարտեզում համոզվեցի, որ եթե Հայաստանում այս թեման մտնի նախադպրոցական կրթական ծրագրի մեջ, ապա բոլորս միասին կարող ենք հասնել հիանալի արդյունքների, կնպաստի երեխաների ճանաչողական ընդունակությունների զարգացմանը և հոգատար վերաբերմունքի ձևավորմանը, շրջակա միջավայրի նկատմամբ նկատմամբ պատասխանատվության զարգացմանը:
Կատարածս հետազոտությունը ցույց է տալիս, որ մանկապարտեզում ձեռք բերված գիտելիքները և փորձը երեխաները փոխանցում են ծնողներին, ընտանիքի անդամներին: Դրանով իսկ ես հասա իմ առջև դրված նպատակին:

Հետազոտության ընթացքում նկատեցի, որ բնապահպանական դաստիարակության իրականացումն ավելի արդյունավետ է, երբ այն զուգակցվում է կերպարվեստի, երաժշտության, թատրոնի և համապատասխան ֆիլմերի կիրառմամբ:
Այս պրոցեսն ավելի արդյունավետ կլինի, երբ բոլոր մանկավարժները/ դատիարակները հնարավորություն ունենան մասնակցելու նմանատիպ վերապատրաստման, հնարավորություն ստանան մասնակցել փորձի փոխանակաման ծրագրերի, ինչպես նաև ծնողների համար ինֆորմացիոն երեկոներ կազմակերպվեն մանկապարտեզներում, դպրոցներում:

Գրականության ցանկ

1. Ա. Յու. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան
   Մանկավարժություն, Երևան 2005 թ., 455 էջ
2. Ս.Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան
   Նախադպրոցական մանկավարժություն Երևան 2005թ. 126 էջ
3. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում
   Մեթոդական ուղեցույց մանկապարտեզների դաստիարակների համար, Երևան 2007 թ. 77 էջ
4. Մարտին Գաբրիել
   Թափոնների կառավարում, Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ երկրորդ հրատարակություն 2018 թ. 54 էջ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՎԻԿՏՈՐԻԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ Գ. ԷՄԻՆՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ------5

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ----------8

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԱՀԵՏ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ----------12

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ----------15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցականների էկոլոգիական կրթության բովանդակություն ասելով՝ պետք է հասկանալ երեխայի ձեռք բերած էկոլոգիական գիտելիքների, կարողությունների համակարգը, որն ուղղված է նրա էկոլոգիական մշակույթի ձևավորմանը: Անձի էկոլոգիական մշակույթը դրսևորվում է բնության, շրջակա միջավայրի նկատմամբ նրա հուզական դրական հարաբերություններում և նրա կողմից որոշակի բարոյական նորմերի պահպանման մեջ:

Հարազատ բնության ազդեցությունը մեզանից յուրաքանչյուրը շատ կամ քիչ չափով զգացել է իր վրա և գիտի, որ այն հանդիսանում է առաջին հստակ գիտելիքների և ուրախության ապրումների աղբյուր, որոնք հաճախ չեն մոռացվում ամբողջ կյանքի ընթացքում:

Նախադպրոցական երեխաները միշտ և ամենուր այս կամ այն ձևով շփվում են բնության հետ: Կանաչ անտառները և մարգագետինները, գունավոր ծաղիկները, թիթեռները, բզեզները, թռչունները, գազանները, շարժվող ամպերը, թափվող ձյունը, գետերը, նույնիսկ ամառային անձրևից հետո ճահիճները գրավում են երեխաների ուշադրությունը, ուրախացնում են նրանց, նրանց զարգացման համար տալիս են հարուստ սնունդ:

Թեմայի արդիականությունը:

Մարդկային հասարակության զարգացումն ընթանում է շատ արագ և երկիր մոլորակը չի հասցնում շարժվել այդ ընթացքին զուգահեռ: Երկիր մոլորակի բնապահպանական ճգնաժամի հաղթահարման և ժամանակակից հասարակության բազմակողմանի զարգացման գործընթացում էական դեր ունի կրթական համակարգը: Այդ շղթայի առաջին օղակը նախադպրոցականների բնապահպանական կրթությունն է՝ նպատակաուղղված երեխաների գիտակցության, էկոլոգիական մշակույթի, շրջակա միջավայրի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի ձևավորմանը, բնության հետ շփման, բույսերի և կենդանիների հանդեպ սիրո ու հարգալից վերաբերմունքի դրսևորումների զարգացմանը:

Երեխան ստանում է բնության մասին հուզական տպավորություններ, զգացումներ, և արդեն իսկ այդ ընթացքում ձևավորվում են երեխայի

էկոլոգիական մտածողության, գիտակցության, էկոլոգիական մշակույթի նախահիմքերը:

Հետազոտության **նպատակն է՝** ուսումնասիրել և վերլուծել էկոլոգիական կրթության հիմունքները նախադպրոցական տարիքում:

Հետազոտության **խնդիրներ են՝**

- ✓ Ուսումնասիրել էկոլոգիական դաստիարակության վերաբերյալ գիտամանկավարժական գրքեր,
- ✓ Վերլուծել երեխաներին բնության հետ ծանոթացման համար նախադպրոցական տարիքի հոգեբանական բնութագրիչները,
- ✓ Բացահայտել նախադպրոցականների մտավոր, ֆիզիկական, գեղագիտական և աշխատանքային դաստիարակության մեջ բնության նշանակությունը:

1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից է բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը: Այդ հնարավորությունն է ընձեռում, էկոլոգիա գիտությունը: Պահպանելով բնությունը մենք պաշտպանում ենք մեզ և մեր սերունդների շահերը: Առողջ և մաքուր շրջակա միջավայր ունենալու խնդրով շահագրգռված են բոլորը, ուստի բնապահպանական խնդիրները վերաբերում են և փոքրերին և երիտասարդությանը, և մեծերին: Այս շղթայում առաջին օղակը նախադպրոցահասակ տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն է: Այն թերևս ամենակարևորն է, քանի որ ամենավաղ տարիքում են ձևավորվում և ամրապնդվում մարդու համար հիմնական արժեքները, բարոյական նորմերը, որոնք էլ հետագայում բնության և շրջապատի նկատմամբ պահվածքի հիմքերն են դառնալու:

Ասատրյան Լ.Թ., «Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքներ» ձեռնարկում անդրադարձել է **Ա.Ա. Նալչաջյանը և Ս.Շ. Մկրտչյանին,** որտեղ նրանք նշում են. «Յուրաքանչյուր անհատ դեռևս վաղ մանկության տարիներին նախնական տպավորություններ է ունենում բնության պատկերներից, որի հետևանքով նրա և տեղանքի առանձին հատվածների միջև հուզական կապեր են առաջանում»: [1; էջ 99] Էկոլոգիական դաստիարակությունը նպատակաուղղված գործընթաց է՝ ուղղված շրջապատող բնական աշխարհի, երևույթների, նրա օրենքների և օրինաչափությունների մասին գիտելիքների հաղորդմանը և պատկերացումների, բնաճանաչողական ընդունակությունների, իմացական հետաքրքրությունների բնապահպանական կարողությունների ձևավորմանը:

Մարդն ապրում է լայն սպառելով բնության օգտակարը և ոչնչացնելով վնասակարը, նշված գերակայության պայմաններում գնալով պակասում են և դժվարությամբ են վերականգնվում բնության բարիքները: Բնության հանդեպ սպառողական մտածելակերպին փոխարինելու է գալիս էկոկենտրոն

մտածելակերպը, որի համաձայն բնությունը միասնական համակարգ է, մարդը՝ նրա հավասար մասնիկը: Էկոլոգիական կրթության սկիզբը դրվում է նախադպրոցական տարիքում՝ հատուկ կազմակերպված էկոլոգիական կամ գոյապահպան դաստիարակության միջոցով: Բանդարենկոն «Դիդակտիկ խաղեր» գրքում գրում է, որ «Էկոլոգիական դաստիարակությունը երեխայի էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի ձևավորման, էկոլոգիական վարքագծի և մշակույթի դաստիարակության գործընթաց է»: [9; 41-42]:

Առօրյա կյանքում պարբերաբար իրականացվում են եղանակի դիտարկումներ, ամսվա մեկ շաբաթվա ընթացքում երեխաներն ամեն օր ուսումնասիրում են երկինքը, ճշտում են տեղումների բնույթը, քամիների առկայությունը կամ բացակայությունը, ըստ հագուստի որոշում ցրտի և ջերմության աստիճանը:

Յուրաքանչյուր դիտարկում ճանաչողական գործունեություն է, որը երեխաներից պահանջում է ուշադրություն, կենտրոնացում և մտավոր ակտիվություն, այդ պատճառով էլ երկարատև չի կարող լինել: Երեխաների հետ դաստիարակի շփումը ստանում է ճանաչողական երանգ, դաստիարակը հստակ, կոնկրետ հարցեր է ձևակերպում, որոնք կենտրոնացնում են երեխաներին տեղեկատվություն որոնելու համար, լսում են նրանց պատասխանները, բարյացակամ արձագանքում է յուրաքանչյուրին, և ամենակարևորը գովում է ճիշտ պատասխանի համար, գովասանքով խթանում տեղեկատվության հետագա որոնումը: Երեխաների հետ դաստիարակի ճանաչողական շփմամբ ուղեկցվող դիտարկման շրջանները երեխաների մեջ զարգացնում են դիտողականություն, բնության հանդեպ կայուն հետաքրքրություն, ինչպես նաև կենդանիների և բույսերի բազմաֆունկցիոնալ առանձնահատկությունների և բնակության միջավայրի հետ կապերի մասին հստակ պատկերացումներ:

Այսօր հատկապես մասնավոր նախադպրոցական հաստատություններում երեխաներին ուսուցանում են մաթեմատիկա, կերպարվեստ, օտար լեզու, սակայն շատ քիչ ուշադրություն է դարձվում էկոլոգիական գիտելիքներին: Մինչդեռ Բելավինան «Մոլորակը մեր տունն է» աշխատության մեջ նշում է, որ «նախադպրոցականների ուսուցման մեջ առաջին հերթին շեշտը պետք է դնել երեխաների՝ բնության նկատմամբ խնամքով և հուզական վերաբերմունքի, բնության

մեջ աշխատանք կատարելու կարողության դաստիարակման վրա՝ հիմք ունենալով երեխայի և բնության փոխհարաբերությունների առանձնահատկությունները: [7; 85-88]:

Նախադպրոցական հաստատություններում հարկավոր է ստեղծել այնպիսի միջավայր, որը կնպաստի.

- Երեխաների ճանաչողական ունակությունների զարգացմանը(պայմաններ՝ նոր ճանաչողական գործունեության, փորձարկումների, բնական նյութերով կենդանի և անկենդան բնության մեջ անընդմեջ դիտումների և նոր հարցադրումների կառուցման համար):
- Երեխաների գեղագիտական ունակությունների զարգացմանը (ուշադրությունը կենտրոնացնել շրջապատող բնության օբյեկտներին, բնության գեղեցկությանը, բազմատեսակ գույներն ու ձևերը տեսնելու կարողության զարգացման վրա):
- Երեխաների առողջության պահպանմանը(էկոլոգիապես անվտանգ նյութերի, խաղալիքների օգտագործում, խմբասենյակների, շենքի շրջապատի էկոլոգիական պայմանների գնահատում, տարածքի կանաչապատում, թարմ օդում պարապմունքների, էքսկուրսիաների համար պայմանների ստեղծում):
- Երեխաների բարոյական որակների ձևավորմանը(կենդանի օբյեկտների խնամքի և ամենօրյա շփման պայմանների ստեղծում, շրջապատող բնության օբյեկտների նկատմամբ հուզական վերաբերմունքի, շրջապատող միջավայրի պահպանության, պատասխանատվության դաստիարակում):
- Երեխաների էկոլոգիական գրագետ վարքի ձևավորմանը:
- Երեխաների գործունության տարբեր ձևերում բնական նյութերի օգտագործմանը(բնական նյութերով ինքնուրույն խաղերի համար պայմանների ստեղծում, բնական նյութերի օգտուսգործում պարապմունքներում և կերպարվեստային գործունության ժամանակ): [3,4,5,6 (տարիքային կրթական համալիր ծրագրեր)]

Նախադպրոցական հաստատություններում զարգացող բնական միջավայրի էկոլոգիան պետք է համապատասխանի նրա բովանդակության իրականացման բոլոր բաղադրիչներին:

2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Էկոլոգիական մտածելակերպի դաստիարակությունը ավագ սերնդի կողմից դաստիարակության, կրթության, բարոյական որակների ու հոգևոր այլ արժեքների փոխանցումն է, մատաղ սերնդին: Երեխան մեծահասակների օգնությամբ ծանոթանում է բնության երևույթներին, ինքնուրույն հետևում բնության մեջ տեղի ունեցող փոփոխություններին, առանձնացնում է կենդանի և անկենդան բնության տարբերությունները, դրանց մեջ եղած կապը:

Բոժովիչը իր «Անձի ձևավորումը նախադպրոցական տարիքում» գրքում գրում է, որ «նախադպրոցական հաստատությունում երեխաների հետ տարվող աշխատանքները կառուցվում են ամբողջական մոտեցման դիրքերից՝ ի տարբերություն դպրոցում ուսումնական պարապմունքների մեջ միառարկայնության գերակշռության մոտեցման»: [8; էջ 65-69]:

Առօրյա կյանքում նախադպրոցականների հետ կարելի է անցկացնել գործունեության տարբեր ձևերով հագեցած և հսկայական զարգացնող նշանակություն ունեցող բովանդակալից միջոցառումներ: Երեխաների համար օգտակար և հետաքրքիր են մոտակա շրջապատում բնության գրկում զբոսանքները: Դաստիարակը կարող է երեխաների հետ դուրս գալ կարճատև զբոսանքների, որոնք ունեն մեկ կոնկրետ նպատակ, և կարող է նաև կազմակերպել էքսկուրսիաներ, արշավներ:

Ասատրյանը գտնում է, որ Հստակ կազմակերպված դիտումների դեպքում ավագ նախադպրոցականները կարող են հետևել ու հասկանալ «բույսերի համակեցության ներսում առկա կենսացենոլոգիական կապերը»:[2; 45-47]:

Պարապմունքներ: Սա բնության հետ երեխաներին ծանոթացնելու կազմակերպման հիմնական ձևն է: Դրանք անցկացվում են որոշակի ժամանակահատվածում նախորոք մշակված պլանով, որը համաձայնեցվում է ծրագրի հետ: Պարապմունքների ժամանակ դաստիարակը ոչ միայն տեղեկացնում է երեխաներին նոր տեղեկությունները, այլ նաև պարզաբանում և ամրացնում է արդեն ունեցած գիտելիքները: Պարապմունքները այնպես են կառուցում, որպեսզի բնության

հետ ծանոթացնելու գործընթացում իրականացվի իմացական ունակությունների և երեխայի խոսքի զարգացումը, հարստանա իրենց բառապաշարը, դաստիարակվի բնության հանդեպ սեր և հետաքրքրություն:

Պարապմունքներում գլխավորը դա ծրագրային նյութի յուրացումն է բոլոր երեխաների կողմից: Դրա համար օգտագործում են տարբեր մեթոդներ՝ բնական օբյեկտների դիտում, մեծահասակների աշխատանք, դիդակտիկ խաղեր, աշխատանք նկարների հետ, գեղարվեստական ստեղծագործության ընթերցանություն, զրույցներ և այլն: Պարապմունքը սերտորեն կապված է աշխատանքի այլ ձևերի հետ: Այսպես, օրինակ, պարապմունքների ժամանակ երեխաների կողմից ստացված գիտելիքներն ու հմտությունները կիրառվում են ամենօրյա գործունեության մեջ (խաղում և աշխատանքում), իսկ զբոսանքների, աշխատանքների ժամանակ դիտումը պարզաբանվում և համակարգվում են պարապմունքների ժամանակ:

Նախապատրաստվելով պարապմունքներին, դաստիարակը ըստ ծրագրի ընդգծում է օբյեկտը, որի հետ պետք է ծանոթացնի երեխաներին: Որից հետո որոշում է մեթոդներն ու հնարքները, որոնք նպատակահարմար է կիրառել:

Էքսկուրսիաներ: Յուրաքանչյուր էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ պետք է հաշվի առնել, թե բացի գիտելիքների ուսուցումից այն լեզվական ինչ նպատակներ է հետապնդում, լեզվական տեսակետից ինչ նոր բան է տալու երեխաներին:

նախադպրոցականներն էքսկուրսիայի ընթացքում բազմաթիվ առարկաներ ու երևույթներ են տեսնում, որոնք լեզվի մեջ իրենց դրսևորումը գտնում են բառերի ու արտահայտությունների ձևով, ուստի յուրաքանչյուր նոր առարկա ու երևույթ ոչ միայն հարստացնում է նախադպրոցականի մտածողությունը, լայնացնում նրա աշխարհաճանաչողության շրջանակները, այլև ավագ նախադպրոցականի բառապաշարի մեջ նոր համալրում է բերում, երեխային նոր բառեր, դարձվածքներ ու արտահայտություններ է սովորեցնում: Էքսկուրսիայի ընթացքում երեխան ոչ միայն բազմաթիվ նոր բառեր է սովորում, այլև ճշտվում ու հղկվում է նրա ավելի վաղ սովորած բառապաշարը:

Էքսկուրսիաներն առանձնապես մեծ հնարավորություն են ընձեռում ավագ նախադպրոցականների մեջ պատմելու կարողություն մշակելու և զարգացնելու

տեսակետից: Տեսած, զգացած ու ապրած դեպքերի ու երևույթների մասին պատմելն նախադպրոցականների համար անհամեմատ ավելի հեշտ է, քան լսածի մասին: Այս նկատառումով երբեմն անհրաժեշտ կլինի էքսկուրսիայի ամփոփման ժամանակ կամ դրանից հետո երեխաներին պատմել տալ էքսկուրսիայի մասին՝ սկսած նրա նախապատրաստումից ու անցկացումից մինչև ավարտը, պատմել տալ ընդարձակ ու համառոտ կերպով, մասերով ու ամբողջովին, դեմքը, ժամանակը և կառուցվածքը փոփոխելով և այլն:

Էքսկուրսիաները կարևոր նշանակություն ունեն նաև դաստիարակչական տեսակետից: Էքսկուրսիաներն ընդլայնում են ավագ նախադպրոցականների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով, անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք նախադպրոցական հաստատություն բերել հնարավոր չէ:

Զբոսանքներ: Ամենօրյա զբոսանքները լայնորեն կիրառվում են բոլոր ավագ նախադպրոցական խմբերի երեխաներին բնության հետ ծանոթացնելու համար: Դրանք կարող են կրել ոչ մեծ էքսկուրսիաների բնույթ, որի ժամանակ դաստիարակը անցկացնում է բնության ինչ-որ հատվածի դիտարկում, կազմակերպում է եղանակի, սեզոնային փոփոխությունների դիտարկում, որոնք ինչպես կարող են փոխել բնության և կենդանիների կյանքում:

Զբոսանքների ժամանակ ըստ նշված պլանի, որը կազմվել է նախորոք ծրագրի համապատասխան և հաշվի է առնվել տեղանքի պայմանները, երեխաներին ծանոթացնում են բնության հետ: Պլանի ծրագրային բովանդակությունը իրականացվում է այն ժամանակ, երբ տեղի է ունեում բնության այս կամ այն երևույթը:

Դաստիարակը, զբոսանքների ժամանակ, կազմակերպում է խաղեր՝ օգտագործելով բնական նյութեր (ավազ, ձյուն, ջուր, տերև), խաղալիքներ, որոնք օգտագործվում են քամու շարժումը, ջրի հոսք ցույց տալու համար, որի ընթացքում երեխաները կուտակում են զգայական փորձ, ճանաչում են բնության առարկաների տարբեր որակները: Զբոսանքի ժամանակ խաղերի համար պետք է ունենալ ավազով լի արկղ, փոքրիկ ջրավազան, ջրի վրա լողացող խաղալիքներ:

Ամենօրյա զբոսանքների ժամանակ երեխաները մասնակցում են աշխատանքային գործընթացներին. հավաքում են աշնան չորացած տերևները, ճանապարհները մաքրում են ձյունից, պատրաստում են մարգեր, ջրում են բույսերը:

Աշխատանք հողակտորի վրա: Հողակտորի վրա երեխաները աշխատում են ցերեկային քնից հետո: Այս աշխատանքը համադրվում է դիտման հետ և աջակցում է բույսերի և կենդանիների մասին գիտելիքների կուտակմանը, կատարելագործում է աշխատանքային հմտություններն ու կարողությունները, դաստիարակում է աշխատասիրություն:

Պարապմունքի կազմակերպումը կապված է աշխատանքի ձևից, երեխաների տարիքից և եղանակից: Հողի հետ կատարվող որոշ աշխատանքներ կարելի է անցկացնել պարապմունքի տեսքով, որին մասնակցում է ամբողջ խումբը, աշխատանքային կարողությունների ու հմտությունների ձևավորման վրա ազդում է երեխաների ամենօրյա աշխատանքը: Երեխաներին տալիս են տարբեր տեսակի առաջադրանքներ: Ավագ նախադպրոցական խմբի երեխաներին հանձնարարում են հսկել ավելի փոքր խմբերի աշխատանքը, ովքեր աշխատում են ծաղկանոցներում և բանջարանոցներում:

Աշխատանք բնության անկյունում: Բնության անկյունում աշխատանքը անցկացնում են ամեն օր, որը դաստիարակները առանձնացնում են աշխատանքի համար: Ավագ նախադպրոցականները բույսերի և կենդանիների հանդեպ ցուցաբերում են հոգատար վերաբերմունք, սովորում են դրանք խնամել, տիրապետում են աշխատանքային էլեմենտար հմտություններին, սովորում են աշխատել մեծահասակների հետ և հենց իրենք էլ մասնակցում են այդ աշխատանքին: Աշխատանքի կազմակերպումը կախված է նրանց տարիքից: Ավագ նախադպրոցական խմբում աշխատանքներն արդեն իրականացնում են հենց երեխաները, որոնք հսկում են դաստիարակները: Երբեմն կազմակերպվում են բոլոր խմբերի հետ աշխատանքներ, այդ դեպքում մաքրում են շրջակա միջավայրը:

3. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԱՀԵՏ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Էկոլոգիական դաստիարակության գործընթացը կազմակերպվում է մեծահասակների կողմից ընտանիքում և մանկապարտեզում և իրականացվում է մի շարք միջոցներով և հմտություններով: Հիմնական միջոցը բնությունն է, բնության հետ շարունակական շփումը: Երեխայի մշտական կապը բնության հետ ապահովվում է մանկապարտեզի բնության անկյան և բնաճանաչողական պատի միջոցով:

Ողջ ուսումնական տարվա ընթացքում երեխաների հետ միասին խնամել ենք բնության անկյան բնակիչներին: Բույսերի ու կենդանիների համար էկոլոգիապես անհրաժեշտ պայմանների ստեղծումն ու պահպանումն առօրյա կյանքի կարևորագույն միջոցառումներն են: Առավտյան ժամերին երեխաներին ներգրավվել եմ համատեղ գործողությունների մեջ, որոնք տարբեր տարիքային խմբերում տարբեր կազմակերպչական ձևեր են ունենում (աշխատանքները իրականացվել են ավագ նախադպրոցական խմբում):

էկոլոգիական կենտրոնը զարգացնող առարկայական միջավայրի նոր տարրն է: Այդ միջավայրի անվանումը տարբեր նախադպրոցական հաստատություններում տարբեր է լինում, սակայն դրանց ֆունկցիաները նույնն են: Մեր մանկապարտզում օգտագործում ենք բնության կենտրոնը անվանումը:

Կարող եմ ասել, որ այն յուրահատուկ միջավայր է ստեղծում, առաջացնում է դրական էմոցիաներ, օգնում է հանգստանալ, թուլանալ: Այն միաժամանակ գեղեցկացնում է երեխաների գործունեությունը: Միայն այն, որ երեխան պետք է ընդհանուր խմբասենյակից գնա բնության կենտրոն, ազդում է նրա պարապմունքների հանդեպ ունեցած վերաբերմունքի վրա: Իհարկե ոչ բոլոր նախադպրոցական հաստատությունները կարող են տեղ հատկացնել բնության կենտրոնին, սակայն ցանկության դեպքում կարելի է ելք գտնել:

Բնության կենտրոնը նախատեսված է էկոլոգիական պարապմունքների անցկացման համար, հանգստանալու, բնության հավաքածուները դիտելու, ինքնուրույն դիտարկումներ կատարելու, կենդանի օբյեկտների մասին հոգ տանելու և

այլնի համար: Բնության կենտրոնի համար տեղ են հատկացնում պատուհանների մոտ, քանի որ ուսուցման այդ հատվածը պետք է լավ լուսավորված լինի, այդ իսկ պատճառով հատկացրել եմ փոքրիկ տարածք սեղաններ համար համար, որոնց շուրջ երեխաները կարող են նկարել կամ աշխատել:

Կարծում եմ, որ նման աննշան թվացող մանրուքը՝ ինչպիսին է կահույքի դիրքը, ազդում է երեխաների և դաստիարակի հարաբերությունների վրա: Սեղանները տեղակայված են շրջանով, այսինքն այնպես, որ ես կարողանամ աշխատել երեխաների հետ միասին: Սեղանների շուրջ երեխաները գտնվում են այն դեպքում, երբ որոշակի պրակտիկ աշխատանք են կատարում, իսկ այլ գործունեության դեպքում նստել են փափուկ աթոռների կամ հատակի՝ գորգի վրա: Երեխաների համար ստեղծել եմ հավաքածուների հատված, որը նախատեսված է երեխաներին բնության տարբեր օբյեկտների հետ ծանոթանացնելուն, և դասակարգելու կարողությունների ձևավորման համար: Հավաքածուները որպես տեսողական նյութ են հանդես գալիս: Հավաքածուները տեղադրված են հատուկ պահարաններում, որոնք հասանելի են երեխաների տեսողության համար: Նմուշները հավաքելիս հարկավոր է հաշվի առնել հետևյալ ոլորտները՝

Օբյեկտների հասանելիությունը.

Մանկապարտեզների հավաքածուները պետք է իրենց մեջ ներառեն այն նմուշները, որոնք երեխաները կարող են հավաքել իրենց ծնողների հետ՝ քարեր, բույսեր, սերմեր, չոր տերևներ, ճյուղեր, ծառերի, թփերի չոր կեղևներ, ավազի, գետային և ծովային խխունջներ և այլն: Կարևոր է, որ հավաքածուների հատվածում ներկայացված լինեն կենդանի և անկենդան բնության նմուշները:

Աշխարհագրական կողմ.

Հավաքածուները կարող են լրացվել այն նյութերով, որոնք բերվում են երեխաների կամ իրենց ծնողների կողմից տարբեր երկրներից կամ շրջաններից: Յուրաքանչյուր բերված օբյեկտ կարող է հիանալի առիթ դառնալ նոր երկրների, նրանց սովորույթների, բնության մասին խոսելու համար:

Բնապահպանական կողմ.

Հավաքածուի համար օբյեկտներ ընտրելիս հաշվի եմ առնում բնապահպանական կողմը, որը նպաստում է երեխաների մոտ էկոլոգիական

մտածողության հիմքերի ձևավորմանը: Դա կարևոր է էկոէթիկայի ձևավորման համար: Այդ իսկ պատճառով խորհուրդ չի տրվում երեխաների կամ նրանց ծնողների կողմից չորացված թիթեռների, բզեզների ներառումը հավաքածուների մեջ:

Բելավինան իր «Մոլորակը մեր տունն է» աձխատության մեջ պնդում է, որ «նախադպրոցականի մեջ կարող է և պետք է ձևավորվի էկոլոգիական տարրական գիտելիքների համակարգ, միայն թե դրանց բովանդակությունը պետք է բացատրվի նախադպրոցական յուրահատուկ գործունեության ձևերով՝ խաղով, աշխատանքով, էքսկուրսիաներով և գործնական այլ պարապմունքներով»: [7; 41-45]: Այսինքն՝ արդեն նախադպրոցական տարիքում երեխան պետք է ստանա գիտականորեն հավաստի տեղեկատվություն, որը, սակայն, գործնականում խախտվում է կամ չի իրականացվում դաստիարակների անբավարար էկոլոգիական պատրաստվածության պատճառով:

Անվտանգությունը.

Հավաքածուների ցանկացած օբյեկտ պետք է անվտանգ լինի երեխայի համար բոլոր տեսակի մեխանիկական վնասվածքների և առողջապահական տեսակետից: Գտնում եմ, որ քարերը, ավազի նմուշները, սերմերը, հարկավոր է հավաքել այն տեղերից, որոնք հեռու են կատուների և շների համար մատչելի վայրերից:

Բնության անկյունում տեղ եմ հատկացրել բույսերին, ակվարիումին, որն առաջին հերթին նախատեսված է երեխաների հանգստի, ինքնուրույն խաղերի և բույսերը խնամելու կարողությունների զարգացման համար: Տվյալ հատվածում ցանկալի չէ կենդանիներ պահել, բացի ակվարիումային ձկներից, քանի որ նրանք շեղում են երեխաներին պարապմունքներից: Հանգստյան գոտում առկա են նաև մշակված կոճղեր և տարբեր չափերի գերաններ, որոնք սեղանների և աթոռների դեր են կատարում:

Անվտանգությունը պահպանելու նպատակով օգտագործել եմ միայն բնական նյութեր, բացառել եմ արհեստական ծաղիկների և էկոլոգիապես վնասակար նյութերի օգտագործումը:

Հավաքածուները իրենց մեջ ներառում են՝ բույսերի և պտուղներ սերմերը, կոներ, կաղիններ, (որոնց հետ երեխաները կարող են խաղալ), լճակների խեցիներ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պարապմունք

Թեմա՝ «Սենյակային ծաղիկներ»

Պարապմուքն՝ էկոլոգիա

Սենյակային ծաղիկներ՝

Առաջարկել երեխաներին վերհիշել և անվանել խմբասենյակի բնության անկյան սենյակային ծաղիկների անվանումները, այնուհետև գրատախտակին փակցված մի շարք սենյակային ծաղիկների նկարներից գտնել և առանձնացնել ծաղիկների նկարները, որոնց խնամում են իրենք խմբասենյակի բնության անկյունում: Առաջարկեք ցույց տալ և անվանել, թե ինչ մասերից է կազմված ծաղիկը, որոնք են ծաղիկի անճման անհրաժեշտ գործոնները:

Թվարկել սենյակային այն ծաղիկների անվանումները, որոնք գտնվում են խմբասենյակի բնության անկյունում: Վերհիշենք բույսերի խնամքի համար անհրաժեշտ պայմանները՝

1. Սենյակային ծաղիկները պետք է դրվեն սենյակի առավել լուսավոր մասում
2. Ծաղկամանի հողը պետք է միշտ խոնավ լինի
3. Ծաղիկները չպետք է ջրվեն սառը ջրով, ջրի ջերմաստիճանը պետք է լինի սենյակային
4. Ամռանը ծաղիկները պետք է ջրել ամեն օր, իսկ ձմռան ամիսներին օրը մեջ:
5. Ծաղկամանի հողը պետք է փխրեցնել, քիչ անց՝ ջրել:
6. Պարբերաբար անհրաժեշը է լաթի փափուկ կտորով մաքրել տեևների վրայի փոշին:

Ծաղիկների խնամքը պահանջում է նաև այլ գիտելիքներ, որոնք կարելի է սովորել մեծերից:

Եզրակացություն

Այսպիսով, մեր կողմից կատարված հիմնահարցի շուրջ մասնագիտական գրականության վերլուծությունը և ուսումնասիրությունը հնարավորություն տվեցին կատարել հետևյալ եզրակացությունները.

- Երեխայի աշխարհճանաչումը սկսվում է բնաճանաչողությունից: նախադպրոցական տարիքում երեխան հասկանում է բնության մեջ գոյություն ունեցող բազմաբնույթ շղթայական կապերը, պատկերացնում է բնության ամբողջականությունը, հուզականորեն ընկալում է բնության գեղեցկությունը:

Էկոլոգիական կրթությունն իր ազդեցությունն է ունենում երեխայի իմացական, արժեքային, գործնական կարողությունների զարգացման գործընթացում:

- Դպրոցականի էկոլոգիական մշակույթ ասելով պետք է հասկանանք գիտելիքների այն համակարգը, որը նպաստում է բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորմանը, բնության գրկում վարքի ճիշտ կանոնների պահպանմանը:

Էկոլոգիական մշակույթի ամենաառաջին նպատակն է ձևավորել գիտելիքներ այն օրենքների մասին, որոնցով ապրում է բնությունը, ձևավորել կենդանի բնության սկզբունքների, գաղափարների և գործընթացների մասին հիմնարար հասկացությունների համակարգ:

- Իրականացրած ուսումնասիրության արդյունքներն վկայում են, որ նպատակամետ էկոլոգիական խաղերի կազմակերպումը նպաստում է նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական գիտելիքների և պատկերացումների ձևավորմանը, ինչն էլ հանդիսանում է էկոլոգիական մշակույթի տարրերի ձևավորման հիմքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Լ. Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները. Երևան 2006թ. -336 էջ

2. Ասատրյան Լ. Թ., Սարգսյան Փ. Ա., Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը, Երևան 2002թ.

3. Ս. Ա. Մարության, Ա. Հովհաննիսյան, Լ. Սմբատյն «Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների) կրթական համալիր ծրագիր»-Երևան 2011, էջ 168

4. Ս. Ա. Մարության, Լ. Սմբատյն և ուրիշներ «Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր»-Երևան 2011, էջ 168

5. Ս. Ա. Մարության, Լ. Սմբատյն, Հ. Հարությունյան «Մանկապարտեզի Կրտսեր առաջին խմբի (2-3 տարեկանների) կրթական համալիր ծրագիր»-Երևան 2012, էջ 169

6. Ս. Ա. Մարության, Կ. Ղազարյան, և ուրիշներ «Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր»-Երևան 208, էջ 142

7. Белавина И.Г., Найденская Н.Г. Планета наш дом. Мир вокруг нас: Методика проведения занятий по основам экологии для дошкольников и младших школьников И.Г. Беладина, Н.Г. Найденская. М.: Изд. «Лайда», 1995. - 96 с.

8. Божович Л.И. Личность и ее формирование в детском возрасте Л.И. Божович. М.: Просвещение, 1968. - 258 с.

9. Бондаренко А.К. Дидактические игры // Дошкольное воспитание, №7, 2005. - 160 с.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽԱՂԱԼԻՔԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՏԱԹԵՎԻԿ ՄԻՇԱՅԻ ԴԱՐՉԻՆՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԷՄԻՆՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն.....3
1. Խաղալիքները որպես երեխայի զարգացման գործոն 5
2. Խաղալիքի ազդեցությունը նախադպրոցական տարիքի երեխաների
գեղագիտական զարգացման վրա 6
3.Պարապմունքի պլան-կոնսպեկտ.....14
Եզրակացություն 18
Օգտագործված գրականության ցանկ 20

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Խաղալիքը երեխայի անփոխարինելի ուղեկիցն է ծնվելուց ընդամենը 1-2 ամիս անց: Այն մեծահասակները ստեղծում են հատուկ դաստիարակչական նպատակներով, որպեսզի փոքրիկին պատրաստեն հասարակական հարաբերություններ մուտք գործելուն: Խաղալիքը երեխայի համար ուրախության, զվարճանքի առարկա է եւ, միեւնույն ժամանակ այն երեխայի հոգեբանական զարգացման կարեւորագույն միջոցն է:

Կյանքի գրեթե հենց առաջին օրվանից ծնողները փորձում են խաղալիքի միջոցով շեղել երեխայի ուշադրությունը: Բացի երեխայի հետ խաղալիքով ուղղակի խաղալուց մեծահասակները նաեւ արտաբերում են բառեր, նախադասություններ, փոխում են դեմքի միմիկաները: Այսինքն խաղալիքի միջոցով մեծահասակը շփվում է երեխայի հետ: Ավելի ուշ, արդեն մոտ 5 ամսականում երեխան փորձում է վերցնել խաղալիքը, թափահարել, լսել նրա ձայները, կենտրոնացնել հայացքը: Ահա այսպես սկսվում է երեխայի հուզական եւ ֆիզիկական զարգացումը խաղալիքի օգնությամբ:

Խաղալիքի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրանում ներկայացված են առարկայի տիպիկ հատկությունները ընդհանրացված տեսքով: Այդ հատկությունների հիման վրա էլ երեխան վերարտադրում է այս կամ այն գործողությունները:

Այսպիսով խաղալիքը երեխայի համար բացի ընդհանուր ուսուցողական բնույթ կրելուց, այն նաեւ նպաստում է յուրաքանչյուր երեխայի անձի ներդաշնակ եւ բազմակողմանի զարգացմանը:

Թեմայի նպատակը. Ներկայացնել խաղալիքի տեղն ու դերը նախադպրոցականի գեղագիտական դաստիարակության մեջ:

Հետազոտության խնդիրները՝

1. Ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երխաների անձի զարգացման գործընթացում խաղալիքի նշանակությունը,
2. Մշակել և ներկայացնել խաղալիքներով պարապմունքի պլան կոնսպեկտ:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը. Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքում դրված է պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքը, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել իրադարձությունները ոչ թե առանձնացված, այլ ժամանակի և պատճառահետևանքային կապի մեջ: Աշխատանքում նաև օգտագործվել են պատմահամեմատական, պատմավերլուծական քննության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել արծարծված խնդիրները մեկ ամբողջական համակարգում:

1. Խաղալիքները որպես երեխայի զարգացման գործոն

Խաղալիքների մեծ դերը երեխաների կյանքում ընդգծել է Ն. Կ. Կրուպսկայան: Նա գրել է, «Մենք չենք կարող մանկական խաղալիքի հարցին վերաբերվել այն տեսանկյունից, թե ինչպիսի խաղալիք է դուր գալիս մեծահասակին: Մենք պետք է խաղալիքի հիմնախնդրին մոտենանք այն տեսանկյունից, թե ինչ է դուր գալիս երեխային եւ ինչ է նրան անհրաժեշտ»[1]:

Բավականին շատ հեղինակներ են անդրադարձել խաղալիքների անհրաժեշտության հիմնախնդրին, խաղալիքներն առանձնացրել են ըստ տեսակների, ըստ երեխաների տարիքային խմբերի:

Այսպիսով խաղալիքը մանակական գրքի հետ միասին արվեստի առաջին ստեղծագործությունն է, որը մտնում է փոքրիկի կյանք: Որպես համամարդկային մշակույթի մաս, այն ունի մանկավարժական մեծ արժեք, քանի որ նպաստում է յուրաքանչյուր երեխայի անձի բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացմանը:

Այնուամենայնիվ ինչպիսի՞ն պետք է լինի խաղալիքը:

Ե. Ա. Ֆլյորինան համարում է, որ «Խաղալիքը պետք է ընդլայնի երեխայի մտահորիզոնը, գրավի ժամանակակից իրականության կերպարներով»[2]:

Խաղալիքները օգնում են երեխաներին հաղթահարելու մի շարք հոգեբանական խնդիրներ, մասնավորապես վախեր, մենակություն: Խաղալիքների օգնությամբ ավելի հեշտ է դառնում մասնագետի համար բացահայտելու բուն հիմնախնդիրը, հասկանալու երեխայի հոգեվիճակը եւ այլն:

Խաղալիքների մեջ հատուկ տեղ են գրավում տիկնիկները, կենդանիների նախատիպով փափուկ խաղալիքները, մեքենաները եւ այլն:

Սկզբնական շրջանում երեխան տիկնիկի հետ կատարում է նույն այն գործողությունները, ինչ մայրը կատարել է իր հետ, այսինքն ընդօրինակման գործողություններ է կատարում՝ ընդօրինակում է մեծահասակին: Հետագայում մեծահասակը երեխային առաջարկում է խաղալիք-գազանիկներ, որպես

[1] Крупская Н. К. О дошкольном воспитании. М., 1973, էջ 47
[2] Флерина Е. А. Игра и игрушка. М., 1973. էջ 8

զգացմունքային շփման օբյեկտ: Երեխան սովորում է հոգ տանել խաղալիքի նկատմամբ[3]:

Երեխայի բարոյական եւ զգացմունքային զարգացման մեջ տիկնիկն ունի մեծ նշանակություն: Ելնելով երեխայի կամքից ու երևակայությունից տիկնիկն իրեն պահում է այնպես ինչպես նպատակահարմար է նրա փոքրիկ տիրոջը: երեխան իր տիկնիկի հետ ապրում է սեփական եւ ուրիշի բարոյական եւ զգացմունքային կյանքը: Տիկնիկը իդեալական ընկեր է, որն ամեն ինչ հասկանում է, խելոք է, լսող, երբեք չի դժգոհում:

Յուրաքանչյուր երեխայի մոտ իր տիկնիկի, գազանիկի կամ մեկ այլ խաղալիքի հետ հաստատվում է յուրահատուկ հարաբերություններ: Ապացուցված է, որ րեխաները սիրում եւ նախընտրում են խաղալ փափուկ եւ նուրբ խաղալիքներով, որովհետեւ նմանատիպ խաղալիքները առաջացնում են դրական զգացմունքներ:

Պարզվել է, որ մարմնի մասերի փոխհարաբերությունները երեխաների մոտ առաջացնում են որոշակի զգացմունքային վիճակ, օրինակ տիկնիկի դեմքի օվալությունը, գազանիկի դնչիկը, փոքրիկ քթիկը, մեծ աչքերը երեխաների մոտ առաջացնում են նուրբ զգացմունքների հոսք:

Այսպիսով պարզ է, որ խաղալիքները նպաստում են երեխաների զարգացմանը, սակայն գոյություն ունեն նաեւ երեխաների հոգեկան աշխարհի վրա բացասական ազդեցություն ունեցող խաղալիքներ: Ուղղակի ցանկացած խաղալիք ընտրելիս պետք է ավելի ուշադիր լինել եւ հետեւել մանկավարժների ու հոգեբանների որոշ խորհուրդներին:

2. Խաղալիքի ազդեցությունը նախադպրոցական տարիքի երեխաների գեղագիտական զարգացման վրա

Իսկ ինչպե՞ս սովորեցնել երեխային խաղալ: Շատ պարզ է, անհրաժեշտ է, որպեսզի ծնողները խաղան նրա հետ: Հենց ծնողներն էլ առաջին անգամ «կենդանացնում են» տիկնիկը կամ երեխայի սիրելի արջուկը: Ծնողն երեխային ցույց է տալիս, թե ինչպես գործել, ընդունել որոշակի դեր: Այս ամենը անհրաժեշտ է կատարել էմոցիոնալ կերպով, բնական կերպով և հաճույքով: Այսպիսի համտեղ

[3] Ауэрбах С. Правильные игры с правильными игрушками [Текст] – Минск.: Попурри. 2008. էջ 17

խաղերը օգնում են ծնողներին ու երեխաներին մտերմանալ, ինչպես նաև բարձրացնում են երեխաների մոտ ծնողների հեղինակությունը:

Խաղը սկսվում է այն բանից, երբ արջուկը կամ նապաստակը դառնում են կենդանի, խոսում են մարդկային ձայնով: Բնական է, որ դա մեծահասկաների ձայներն են: Միայն մեծ երեխաները կարող են կենդանացնել խաղալիքները և իրեն դարձնել ընկեր և խաղում գործող անձ[4]:

Այս տարիքի երեխաներին շատ դուր են գալիս մեծ խաղալիքներով խաղերը: Երեխան միաժամանակ կարող է հանդես գալ, որպես ռեժիսյոր և որպես դերի կատարող: Դրա համար անհրաժեշտ են խաղալիքներ, որոնք թույլ են տալիս կատարել այդպիսի գործողություններ: Առաջին հերթին դրանք տիկնիկներն են ու կենդանիները: Նրանք կարող են լինել ցանկացած նյութից, գլխավորն է, որ այն հարմարավետությամբ բռնվի ձեռքում:

Երեխայի համար կարևոր և անմիջական վերաբերմունք ունի ընտանիքի մասին սյուժեն, այդ իսկ պատճառով լավ է, եթե ունեցած տիկնիկներից հնարավոր լինի ստեղծել ընտանիք: Այդպսիսի խաղերում երեխան կարող է ցուցաբերել ուրախություն և տհաճ հույզեր, որոնք կապված են սեփական կյանքի հետ:

Այդպիսի խաղը ենթադրում է չափերով ու մանկական հնարավորություններով մանկական կահույք, ամանեղեն և հագուստ: Փոխադրման համար տիկնիկների համար անհրաժեշտ են մեքենաներ: Նաև անհրաժեշտ է խաղի համար որոշակի տարածությունը, որտեղ պետք է տեղի ունենա այս կամ այն սյուժեն:

Մեծ տիկնիկներով խաղերում հարմար է օգտագործել հատուկ խաղային դաշտ արտահայտված տնակով, արահետով, գետով, փոքրիկ կամրջակով և այլն: Դրանք անհրաժեշտ է գնել, վերցնել հին սեղանային խաղից կամ նկարել ինքնուրույն: Անհրաժեշտ չէ դրանք խիստ մանրամասնեցնել: Դաշտը պետք է հարմար լինի ցանկացած տեսակի սյուժետների համար, որոնք կարող են լինել կենցաղային ու հեքիաթային:

Խաղալիքը երեքից-չորս տարեկան երեխաների համար կարող է դառնալ ոչ միայն խաղի առարկա, այլ նաև շփման համար ընկեր: Հաճախ կարելի է տեսնել, թե

[4] Артамонов О. Предметно-пространственная среда: ее роль в развитие. 1995, стр. 102

ինչպես են մի քանի երեխաներ շփվում միմյանց հետ խաղալիքների միջոցով: այդ խաղալիքները կարող են լինել հասարակ տիկնիկները, զինվորիկները, կենդանիները և այլն:

Շատ լավ են նաև ձեռնոցային տիկնիկները: Հիմա վաճառքում գոյություն ունեն թեթև, փափուկ արջուկներ, շնիկներ և այլ կենդանիներ, ինչպես նաև տիկնիկներ: Դրանք շատ հարմարավետ են այդ տարիքի երեխաների համար: Այդպսիսի խաղալիքները շատ են դուր գալիս երեխաներին և դառնում են նրանց ցանկությունների և երևակայությունների իրականացման հիմնական աղբյուրը:

Սակայն երբ տիկնիկը կամ շնիկը սկսում է խոսել կամ ինչ-որ ձայներ հանել յուրաքանչյուր շփումից, ապա դա ընդհատում է երեխայի սեփական ակտիվությունը և երեխային հաճախ զրկում է տվյալ խաղալիքով խաղալու ցանկությունից:

Նախադպրոցական տարիքը շատ բարդ տարիք է երեխաների համար: Բացի զարգացման դրական կողմերից, ծնողները հաճապ բախվում են կամակորության և համառության հետ: Եվ բոլորովին էլ զարմանալի չէ, որ ցանկացած խաղալիք, որը «շփվում է» երեխայի հետ ունի մեծ ազդեցություն նրա վրա: Այն, ինչ երեխան չի ցանկանում անել մայրիկի խնդրանքով, նա մեծ հաճույքով կատարում է նապաստակի կամ արջուկի խնդրանքով, նրա հետ կամ նրա համար: Այդպիսի խաղը ունի մեծ դաստիարակչական հնարավորություն պահանջմունքների, գոյությունների հետ համեմատած:

Այս տարիքը այնպիսի ժամանակաշրջան է, երբ ամեն ինչ հեշտ չի անցնում, այնպիսի ժամանակշրջան է, երբ գրեթե նոր են հարմարվում կյանքի պայմաններին, երբ ամեն ինչ անծանոթ է ու վախենալու: Այստեղ նորից կարող է օգնության հասնել խաղալիքը:

Ծնողները հաճախ շատ են անհանգստանում , երբ նրանց երեխան կապված է

այս կամ այն խաղալիքի հետ: Սակայն այստեղ ոչինչ վախենալու չկա: Այդ բարդ ժամանակաշրջանում, երբ երեխաները կտրվում են տնից և դառնում են ավելի ինքնուրույն, նրանց պարզապես անհրաժեշտ է, որ իրենց պաշտպանված զգան: Խաղալիքը ինչ-որ հարազատ և ծանոթ բան է, հնարավորություն ինչ-որ մեկի մասին հոգ տանելու, ինչ-որ մեկի հետ շփվելու, երեխային ներկայացնում է պաշտպանություն[5]:

Դպրոցական մանկավարժությունը, նշելով խաղալիքների խաղալիքների ճանաչողական մեծ հնարավորությունների մասին, դիտում է այն որպես երեխայի դաստիարակման միջոց: Խաղալիքը ամենից առաջ զարմացնում է երեխային, իսկ այդ զգացումը, Ա. Մ. Գորկիի բառերով, հասկացության սկիզբն է և ճանաչողության ուղին:

Այսպիսով, խաղալիքը օգնում է երեխային ծանոթանալ շրջակա աշխարհի հետ, որի միջոցով նա ամրակայում և վերամշակում է փոխանցված տպավորությունները, բավարարում է իր պահանջմունքները: Խաղալիքները մեծ նշանակություն ունեն նախադպրոցական տարիքի երեխաների համար, քանի որ համարվում է խաղի հանդեպ խթան՝ իր կազմակերպչական սկզբով, տիկնիկով հակված են խաղալ դուստր-մայրիկ, ավտոմեքենայով՝ վարորդ: Խաղալիքից է խաղված խաղի բովանդակությունը, այն հիմք է հանդիսանում ստեղծագործական զարգացման համար: Խաղալիքում ճանաչելով ծանոթ առարկաներ, երեխան հնարվորություն է ստանում զուգակցել իր պատկերացումները, մշակել և ակտիվորեն յուրացնել նոր տպավորություններ:

[5] Артамонов О. Предметно-пространственная среда: ее роль в развитие. 1995, стр. 103

Ավելի խորը դաստիարակչական խաղը մեծ ազդեցություն է թողնում երեխաների վրա խաղալիքները, որոնք պատկերում են մարդիկ և իրական աշխարհի առարկաներ իր բոլոր բազմազանությամբ՝ կենդանիներ, թռչուններ, ձկներ, բնություն, տեխնիկայի առարկաներ, կենցաղ և այլն:

Կերպարային խաղալիքները օգնում են երեխաներին խաղալ տարբեր

բովանդակություններով խաղեր, դրանք օգնում են երեխաներին ստեղծել կերպարներ, մտնել դերի մեջ, իրականացնել մտածացը: Որպեսզի իրեն մայրիկ զգա, երեխային անհրաժեշտ է տիկնիկ, վարորդին կամ օդաչուին՝ մեքենա կամ ինքնաթիռ: Խաղալիքը օգնում է երեխաներին իրենց գործողությունները իրական դարձնել, ինչը կախված է խաղի հետաքրքիր հոգեբանության յուրահատկությունների հետ:

Խաղալիքը մեծ ազդեցություն է ցուցաբերում խաղալիքային կերպարների ստեղծման վրա: Ըստ զարգացվածության աստիճանի փոփոխվում է երեխայի վերաբերմունքը խաղալիքի հանդեպ: Նա սկսում է ընտրել նրանք, որոնք կօգնեն իրեն իրականացնել իր մտածացը: Սակայն խաղալիքը մտածացի իրականացման միջոց կարող է դառնալ միայն այն դեպքում, եթե երեխան ճիշտ է ընդունում իր կերպարը, եթե նա ունի առարկայի հանդեպ գիտելիքներ, եթե խաղալիքը խաղալու հետաքրքրություն և ցանկություն է առաջացնում: Ն. Կ. Կրուպսկայան ասում է. «Մենք պետք է դիտարկենք խաղալիքների մասին հարցին այն տեսանկյունից, թե ինչ է երեխային դուր գալիս և ինչ է նրան անհրաժեշտ... Անհրաժեշտ է հետևել,

թե ուր է ուղղված ինքնագործունեությունը, և տալ այն խաղալիքները, որոնք ընդգծում են նրա ինքնուրույնությունը»[6]:

«Մանկապարտեզում դաստիարակման ծրագիրը» նախադպրոցական երեխաների դաստիարակման հստակ խնդիրներ են դնում մանկավարժների առջև: Երեխան սկսում է յուրացնել և ընդունել ընտանիքում իրական աշխարհը: Սերը ծնողների ու մոտ մարդկանց հանդեպ ցուցաբերում է մեծ ազդեցություն երեխաների վրա և ցանկություն է առաջացնում դառնալ «այնպես, ինչպես մայրը», նման լինել հորը: Դա նաև սահմանում է խաղի թեմանտիկան: Այդ իսկ պատճառով նախադպրոցական տարիքի երեխաների մեծ հետաքրքրությունը տիկնիկ խաղալիքների հանդեպ, որոնք արտահայտում են տնային առարկաններ: Աստիճանաբար երեխաների ուշադրությունը սկսում են գրավել նաև շրջապատող միջավայրի այլ կողմեր: Մեծ հետաքրքրությամբ երեխան հետևում է տարբեր մասնագիտության տեր մարդկանց աշխատանքին՝ վարորդ, ոստիկան, բժիշկ, մեծ հետաքրքրությամբ հետևում են երթևեկությանը և այլն: Այս պատկերացումները անդրադառնում և ամրակայվում են խաղի մեջ, որոնց զարգացման համար նախադպրոցական տարիքի երեխաներին անհրաժեշտ է համապատասխան կերպարանային տիկնիկներ: Գեղարվեստական գրականության ստեղծագործությունները առաջացնում են պահանջմունքներ խաղալիքների հանդեպ, որոնք արտահայտում են սիրած հեքիաթների կերպարներին[7]:

Նախադպրոցական տարիքի երեխաների էմոցիոնալ զգացումների բարձրացումը պահանջում է խաղալիքների հատուկ գունավորում: Երեխայի մեծ ակտիվությունը դա շարժումների մշտական պահանջմունք է, գործողություններում առանձնացնում են խաղալիքների հանդեպ հատուկ վերաբերմունքը՝ այն պետք է լինի այպիսին, որպեսզի նրա հետ հնարավոր լիներ ակտիվ գործել, խաղալ իր դերը: Հատկապես երեխաների համար մեծ կարևորություն ունի հատուկ մասերով շարժվող խաղալիքները կամ խաղալիքները, որոնք կարելի է քանդել ու հավաքել: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել տարբեր տեսակի խաղալիքների մեծության ու քանակի վրա: Նախադպրոցական տարիքի երեխաների համար որոշ առումով հարմարավետ խաղալիքներ են համարվում մեքենաները, տիկնիկները, արջուկները և այն: Երեխան

[6] Григориева В.Н. “Игрушка для детского сада” М.1974, стр. 25
[7] Менджеренцкая А. “Воспетание о детском игре” М.1974, стр. 46

պարզապես չի խաղում խաղալիքների հետ: Նա ոգևորում է նրան, ընդունում է նրան որպես ընկեր, որի հետ կարելի է կիսվել իր ուրախություններով, փոքրիկ գաղտնիքներով, մտածմունքներով: Խաղալիքը ամբողջությամբ ենթակա է երեխային, նրա ֆանտազիաներին. այն կարող է ցանկացած երեխային կերպարանափոխել կամ արջուկի, կամ հեքիաթային հերոսի և այլն: Հաշվի առնելով մանկական խաղային գործունեության յուրահատկությունը ավելի նպատակահարմար է գրավել երեխաներին խաղային անկյունի ստեղծմամբ, առաջացնել նրանց մոտ ցանկություն կազմակերպել իրենց խաղալիքների «կյանքը»: Հայտնի է, որ շրջապատող իրականությունը դառնում է անձի զարգացման արդյունավետ գործոն այն ժամանակ, երբ մարդը ոչ թե պասիվ կերպով է յուրացնում նրա ազեցությունը, այլ մտնում է նրա հետ ակտիվ փոխներգործության մեջ: Այդ իսկ պատճառով դաստիարակի գլխավոր խնդիրն է ղեկավարել երեխաների հետաքրքրությունները, նրանց մեջ ձևավորել ցանկություն և պահանջմունքներ խաղալքիների հետ ստեղծագործական աշխատանքներ կատարել: Տարբեր խաղային իրավիճակներում մեկ խաղալիքը կրում է որոշակի հուզական և մտածողական գերլարվածություն, ունեն հին որոշակի նշանակություն, մյուսները բաժանվում են կախված իրենց բովանդակությունից:

Խաղալիքների տարբեր դերերը սահմանում են նրանց ավելացմաբ տարբեր միջոցները: Եթե դաստիարակը ծանոթացնում է երեխաներին առարկաների հետ, ապա նրա խնդիրը ամփոփվում է նրանով, որ ամրակայել այդ նշանակությունը, հիշեցնել իրավիճակը, որոնցում այս առարկաները կարելի է ընդունել: Եթե դաստիարակը մտցնում է խաղալիք, որի դերը լայն է ու բազմակողմանի, ապա անհրաժեշտ է օգնել երեխաներին ճիշտ ընդունել փոխանցվող կերպարը, ցույց տալ միևնույն առարկայի օգտագործման տարբեր տարբերակները, նրա հետ խաղալու հնարավորությունները:

Սակայն խաղերի զարգացումը նպաստում է ոչ միայն նոր առարկաների ներմուծմամբ, այլ նաև երեխաների կողմից առարկաների ու երևույթների մասին համապատասխան գիտելիքների ստացմամբ: Այդ իսկ պատճառով խաղալիքների մտցնումը պետք է իրականացնել խմբում դաստիարակչական-կրթական աշխատանքի հետ կապված: Անկյունների էսթետիկական ձևավորումը երեխաների մոտ ցանկություն է առաջացնում կարգուկանոն պահպանել: Երեխաներին

հեքիաթների նոր հերոսների հետ ծանոթացնելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նրանց պատկերացումների մակարդակը, որոնցից կախված է նրանց ֆանտազիան, խաղային մտորումների զարգացումը, խաղացողների միացումը, խաղային նպատակի իրականացման ժամանակ խաղալիքների զուգակցումը[8]:

Խաղալիքների ավելացման հաջորդ ընդունումը խաղային իրավիճակների ստեղծումն է, որը ենթադրում է դաստիարակի ակտիվ ղեկավարություն: Խաղային իրավիճակները երեխաների առաջ անհրաժեշտություն է դնում ինքնուրույն զուգակցել, իմպրովիզացնել, մտացածի իրականացման համար ընտրել խաղալիքներ:

Խաղալիքների ավելացման նպատակասլաց օգտագործումը օգնում է լուծել մի շարք խնդիրներ՝ խաղալիքների թատրոնը երեխաների մոտ առաջացնում է դրական էմոցաիաներ, ազդում է նրանց երևակայության վրա, խաղին տալիս է ճիշտ ուղղություն, ցույց է տալիս միևնույն խաղալիքի բազմազան օգտագործումը, մտացածի իրականացմամբ համար ընտրել խաղալիքներ, ցանկություն առաջացնել փնտրել իրավիճակներ, թե որտեղ կարելի է օգտագործել խաղալիքներ, ուսուցողական խաղերը օգնում են ամրակայել խաղալիքների ճիշտ օգտագործման կարողությունը, ինչպես նաև նրանց հետ գործողությունների միջոցները: Այսպես, խաղերում արտահայտվում են այն գիտելիքները և պատկերացումները, որոնք տրված էին երեխաներին, այն զգացումները, որոնք նրանց մոտ դաստիարակված էին , իսկ խաղալիքը իր հերթին, օգնում է ամրացնել այդ գիտելիքները, զարգացնել ու խորացնել զգացումները: Խաղալիքների ավելացման տարբեր ընդունելությունները մեծ ազդեցություն են ցուցաբերում խաղային մտքի զարգացման վրա: Իսկ եթե այս ընդունելությունները համապատասխանեցվի դաստիարակչական-կրթական աշխատանքի հետ, ապա խաղալիքը ունի կարևոր նշանակություն երեխայի կյանքում, նրա պատկերացումներին տալիս է մեծ հնարավորություն, զարգացնում է կազմակերպչական ընդունակությունները, ինքնուրույնությունը, առաջացնում է ակտիվություն, նպաստում է կոլեկտիվ վերաբերմունքի արտահայտմանը:

[8] Менджеренцкая А. “Воспетание о детском игре” М.1974, стр. 50

3.Պարապմունքի պլան-կոնսպեկտ

1.*Տարիքային խումբը*՝ ավագ

2.*Պարապմունքի տևողությունը*՝ 25-30րոպե

3.*Պարապմունքի թեման*՝ <<Անտառի բնակիչները>>

4.*Պարապմունքի նպատակը*՝ ծանոթացնելով գեղարվեստական ստեղծագործությանը, կենդանիների կենսակերպին, կարողանալ լուծել մի շարք խնդիրներ:

5.*Պարապմունքի խնդիրները*՝

- Կարողանալ բանաստեղծությունը այնքան պատկերավոր ներկայացնել, որ երեխաների մեջ տպավորվի յուրաքանչյուր հերոսի կերպարը, զարգանա նրանց գեղագիտական պատկերացումները բնության մասին
- Երեխաներն իրենք ցանկություն հայտնեն ստանձնել կենդանիների դերերը

6.*Անհրաժեշտ պարագաներ*՝ զամբյուղ, խաղալիք սկյուռ, արջ, աղվես, գայլ, նապաստակ, նամակ <<Անտառի բնակիչներից>>:

7.*Ընթացքը*.

Սկիզբ. Դաստիարակը նախնական զրույց է սկսում, դեռ 1-2 նախադասություն չարտաբերած, խմբասենյակի դուռը ծեծում են, դաստիարակը զարմացած բացում է դուռը, տեսնում դռան ետևում փոքրիկ զամբյուղ, որի մեջ դրված է խաղալիք սկյուռ, արջ, աղվես, գայլ, նապաստակ և մի նամակ: Դաստիարակը ներս է բերում զամբյուղը՝ շարժելով երեխաների հետաքրքրությունն ու զարմանքը: Այնուհետև բացում է նամակը և կարդում:

Ստորև ներկայացնում եմ նամակը, որն ինքս եմ գրել ավագ խմբի՝ <<Մանուշակների>> համար.

<<Բարևնե՛ր անտառի բնակիչներից փոքրիկ մանուշակներին: Իսկ գիտե՞ք, թե ինչու մանուշակներ, որովհետև ձեր խմբի անունն է այդպես: Լավ, ինչևէ, նախքան ձմեռը դիմավորելը, ցանկացանք ձեզ նամակ գրել: Կներեք, մենք հիմա չենք կարող գալ ձեր խմբասենյակ, որովհետև արջը պատրաստվում է ձմռան քուն մտնելուն,

սկյուռը ձմռան պաշար է հավաքում, բոլորս էլ զբաղված ենք: Բայց, փոխարենը, ձեզ ուղարկել ենք մեր տիկնիկները, որ դուք տեսնեք և հիշեք մեզ: Ուղարկում ենք նաև մեր հրա՛շք պատմությունը, որը ձեզ շա՛տ կհետաքրքրի: Լա՛վ հիշեք մեր պատմությունը, որովհետև, երբ Ամանորին Ձմեռ Պապիկի հետ ձեզ հյուր գանք, անպայման հարցնելու ենք ձեզ, և ով լավ հիշի, նվերներ ենք տալու>>:

Դաստիարակը ամփոփում է նամակի բովանդակությունը, այնուհետև անցնում բանաստեղծությունը կարդալուն.

Հեղինակ

– Հաստ արջուկը, գայլ մայրիկը,
Նապաստակը, սկյուռիկը
Եվ աղվեսը հավաքվեցին
Ու զրույց սկսեցին,
Թե ձմեռը ցուրտ անտառում
Ով ինչպես է դիմավորում:

Արջուկ

– Է՛, ինձ ի՞նչ կա,
Ինչքան կուզի
Թող շատ ձյուն գա,
Ես ուտելու կարիք չունեմ,
Ողջ ձմեռը պիտի քնեմ:
Դու՛, սկյուռի՛կ, սիրու՛ն քույրիկ:

Սկյուռիկ

– Ես չեմ նստում անգործ ու լուռ,
Հավաքում եմ մի քանի բուռ
Կաղին, ընկույզ, մի քիչ էլ թուզ:
Երբ իջնում է ձյունը փափուկ,
Փչակիս մեջ տաքուկ-տաքուկ,
Իմ ունեցած այդ պաշարով
Ապրում եմ լավ ու ապահով,
Մինչև նորից գարուն բացվի,

Անտառն անուշ մրգով լցվի,

Իսկ դու՞ ինչպես, պատմի՛ր, աղվե՛ս:

Աղվես

-Է՜հ, ի՞նչ պատմեմ, այդ մի բանում

Ես ինձ երբեք չեմ հավանում.

Չեմ հավաքում ձմռան պաշար,

Ինձ մնում է միայն մի ճար.

Գաղտագողի գյուղ եմ մտնում,

Թե հաջողվեց՝ հավ եմ գտնում,

Աշխարհն իմն է, ու ինձ համար

Միևնույնն են ձմեռ, ամառ:

Դու՞, սպիտա՛կ, ժի՛ր նապաստակ:

Նապաստակ

– Չէ՛, իմ կյանքը այնքան էլ վատ չէ,

Չարչարանքս էլ շատ չէ, ասենք,

Մերկ անտառում միշտ ցատկոտում,

Ծառի կեղևն եմ կրծոտում,

Բույս եմ հանում ձյան տակից,

Եվ այդպիսով պահում ինձ,

Մինչև նորից գարուն բացվի,

Անտառը թարմ խոտով լցվի:

Իսկ դու՞, գորշավու՛ն գայլ:

Գայլ

– Ես ի՞նչ ասեմ, գործս վատ է,

Կերս՝ պակաս, հոգսս շատ է,

Հոտն իջել է սարերից ցած,

Վրաս՝ բարակ, բերանս՝ բաց,

Դատարկ փորով ու թույլ ոտով,

Թե անցնում եմ գյուղի մոտով,

Մեկ հովիվն է հարայ տալիս,

Մեկ շներն են վրա տալիս,

Մեկ որսորդն է ինձ հալածում,

Դրանց ձեռքից չունեմ պրծում…

Սկյուռիկ

– Այդ քի՛չ է քեզ, հայրենակի՛ց,-

Երբ տալիս ես հոտին վնաս,

Ո՞վ կուզի, որ դու ողջ մնաս…

Զրույց՝ բանաստեղծության շուրջ

-Երեխանե՛ր, ո՞ր կենդանիներն են մասնակցում անտառային զրույցին: Ո՞վ ինչից է դժգոհում: Ինչպե՞ս են պատրաստվում ձմռանը:

/*ֆիզկուլտդադար*. Երեխաները նմանակում են բանաստեղծության մեջ նշված կենդանիների շարժումները, գայլի ձայն հանում/:

-Եկեք նորից լսենք յուրաքանչյուր կենդանու խոսքը: Ուշադի՛ր լսեք, որ հիշեք:

Դաստիարակը իրականացնում է ազատ երկխոսություն-զրույց, կրկնակի ընթերցումից հետո նա խնդրում է, որ երեխաները պատմություններ հյուսեն այն մասին, թե ինչպես են կենդանիները պատրաստվում ձմռանը:

Ներկայացում տիկնիկների միջոցով. Երբ երեխաները հստակ պատկերացնում են յուրաքանչյուր կենդանու դերը, դաստիարակն առաջարկում է երեխաներին այն թատերականացնել տիկնիկների միջոցով: Երեխաների ցանկությամբ ընտրվում են արջի, սկյուռի, նապաստակի, աղվեսի, գայլի դերեր, դաստիարակի օգնությամբ իրականանում է ներկայացումը: Դաստիարակը խրախուսում է երեխաների ստեղծագործական կարողությանը, թույլ տալիս նույնիսկ ինքնուրույն հորինել բառեր և շարժումներ՝ տվյալ դերին համապատասխան:

8.*Ամփոփում*. Դաստիարակն ամփոփում է, թե որ կենդանին ինչպես է պատրաստվում ձմռանը: Երեխաներին հարցնում իրենց տպավորությունների մասին:

Եզրակացություն

Խաղալիքը ծագել է մարդկության պատմության ընթացքում՝ որպես երեխային կյանքին նախապատրաստելու համար միջոց: Խաղալիքը առարկա է, որը ծառայում է երեխայի համար որպես հաճելի ժամանցի միջոց, բայց միաժամանակ նպաստում է երեխայի հոգեկանի զարգացմանը: Դեռևս նորածնության շրջանում երեխային խաղացնում են տարբեր ձայներ հանող խաղալիքներով, որոնք ազդում են նորածնի վարքի վրա: Երբ այդ խաղալիքը կախում են երեխայի օրորոցից, նա անընդհատ դիտում է այն, դրանով վարժեցվում է երեխայի ընկալման պրոցեսը, տեղի է ունենում ձայնի և գույնի տպավորության նկատմամբ կողմնորոշում և նախապատվություն: Խաղալիքով երեխան սովորում է հարաբերել և տարբերակել ձևը, չափը, գույնը:

Խաղալիք–ամանեղեն, խաղալիք–կահույք, խաղալիք–մեքենա և այլ նմանատիպ խաղալիքներով խաղալիս երեխան յուրացնում է առարկաների ֆունկցիոնալ նշանակությունը: Խաղալիքների միջոցով երեխաները ձեռք են բերում ընդհանուր որակներ: Երեխաները, բացի իրենց համար հատուկ պատրաստված խաղալիքներից, խաղում են նաև կենցաղային առարկաներով՝ դրանք դարձնելով խաղալիքներ, դրանով նրանք հնարավորություն են ունենում յուրացնելու փոխարինվող առարկաների ֆունկցիաները: Խաղալիքների մեջ հատուկ տեղ են գրավում տիկնիկները, կենդանիների նախատիպով փափուկ խաղալիքները, մեքենաները և այլն: Սկզբնական շրջանում երեխան տիկնիկի հետ կատարում է նույն այն գործողությունները, ինչ մայրը կատարել է իր հետ, այսինքն ընդօրինակման գործողություններ է կատարում՝ ընդօրինակում է մեծահասակին:

Հետագայում մեծահասակը երեխային առաջարկում է խաղալիք – գազանիկներ, որպես զգացմունքային շփման օբյեկտ: Երեխան սովորում է հոգ տանել խաղալիքի նկատմամբ: Երեխայի բարոյական և զգացմունքային զարգացման մեջ տիկնիկն ունի մեծ նշանակություն: Ելնելով երեխայի կամքից ու երևակայությունից տիկնիկն իրեն պահում է այնպես ինչպես նպատակահարմար է նրա փոքրիկ տիրոջը:

Երեխան իր տիկնիկի հետ ապրում է սեփական և ուրիշի բարոյական և զգացմունքային կյանքը: Տիկնիկը իդեալական ընկեր է, որն ամեն ինչ հասկանում է, խելոք է, լսող, երբեք չի դժգոհում: Յուրաքանչյուր երեխայի մոտ իր տիկնիկի,

գազանիկի կամ մեկ այլ խաղալիքի հետ հաստատվում է յուրահատուկ հարաբերություններ: Ապացուցված է, որ երեխաները սիրում և նախընտրում են խաղալ փափուկ և նուրբ խաղալիքներով, որովհետև նմանատիպ խաղալիքները առաջացնում են դրական զգացմունքներ: Պարզվել, որ մարմնի մասերի փոխհարաբերությունները երեխաների մոտ առաջացնում են որոշակի զգացմունքային վիճակ, օրինակ տիկնիկի դեմքի օվալությունը, գազանիկի դնչիկը, փոքրիկ քթիկը, մեծ աչքերը երեխաների մոտ առաջացնում են նուրբ զգացմունքների հոսք: Այն տիկնիկները որոնք նման են մեծահասկաներին (barby), խաղի մեջ տարբեր նշանակություն ունեն:

Հիմնականում երեխաները խաղալիքներին կնքում են իրենց հոգեհարազատ անուններով: Տգեղ տիկնիկները խաղի ընթացքում հանդես են գալիս բացասական դերերով: Տղաներին փոքր տարիքում հետաքրքրում են հիմնականում տարբեր տեսակի մեքենաները, զենքերը: 3 տարեկան երեխան իր նոր խաղալիքն անմիջապես ուզում է կոտրել, որպեսզի իմանա թե ինչ կա նրա մեջ: Սակայն հետագայում երեխան խաղալիքի նկատմամբ դրսևորում է հոգատար վերաբերմունք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Абраменкова В.В. Во что играют наши дети: Игрушка и антиигрушка [Текст] В.В. Абраменкова – Москва.: Яуза, Эксмо, Лепта Книга, 2006.
2. Артамонов О. Предметно-пространственная среда: ее роль в развитие. 1995
3. Ауэрбах С. Правильные игры с правильными игрушками [Текст] – Минск.: Попурри. 2008.
4. Берк Л.Е. Развитие ребенка [Текст] / Л.Е. Берк. – Москва.: Питер, 2015
5. Григориева В.Н. “Игрушка для детского сада” М.1974
6. Крупская Н. К. О дошкольном воспитании. М., 1973
7. Менджеренцкая А. “Воспетание о детском игре” М.1974
8. Флерина Е. А. Игра и игрушка. М., 1973.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱՁՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽԱՂԸ ՈՐՊԵՍ Ն/Դ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՏԱԹԵՎԻԿ ԲԱԽՇԻԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԷՄԻՆՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1. Խաղ-պարապմունքների մեթոդիկան և տեսակները վաղ տարիքում--------5

Գլուխ 2. Խաղ-պարապմունքների անցկացման մեթոդիկան----------11

Եզրակացություն----------19

Օգտագործված գրականության ցանկ----------20

<<Խաղը երեխայի ազատ գործունեությունն է…

Նրա մեջ ձևավորվում են մարդկային հոգու բոլոր կողմերը,

Նրա միտքը, նրա սիրտը, նրա կամքը>>:

Կ.Դ.Ուշինսկին

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով է պարապմուքը հագեցած խաղերով: Նախադպրոցական տարիքի երեխաների հիմնական գործունեությունը խաղն է ,և հենց այս տարիքն է բարենպաստ՝ մեզ շրջապատող աշխարհի մասին գաղափարներ կուտակելու համար: Նաև նրանց բնորոշ է խաղերի միջոցով առարկաների հատկություններին ծանոթանալը: Երեխաները փորձում են արտահայտել իրենց զգացմունքները, բարձրանում է ինքնագնահատականը, լուծվում ներքին կոնֆլիկտները: Խաղը նաև երեխայի ամենասիրելի զբաղմունքն է համարվում, որը թույլ է տալիս բավարարել շատ պահանջմունքներ, ինչպիսիք են՝ զվարճանքը, հետաքրքրությունը, հավաքված էներգիայի օգտագործումը և այլն: Այն երեխայից պահանջում է մի շարք որակներ, երենցից են շփվողականությունը, նախաձեռնող լինելը, իր գործողությունները հասակակիցների գործողությունների հետ կոորդինացնելու ունակությունը:Եթե երեխան ունի զարգացած ընդհանուր մոտորիկա (ձեռքերի և ոտքերի մանր մկանային համակարգ)՝ ունի զարգացած հիշողություն, ուշադրություն, կապակցված խոսք և տրամաբանություն, ապա նա կարողանում է հստակ կառավարել իր շարժումները: Ուստի երեխաների մտածողությունը զարգացնելու գործում շատ կարևոր է մանր մոտորիկայի դերի արժևորումը և դա է վկայում վերջին տարիների հետազոտությունների արդյունքներն այն մասին, որ երեխաները առօրյայում և ուսումնական գործընթացում շատ դժվարություններ ու խնդիրներ են ունենում: Դրա գլխավոր պատճառներից մեկն էլ այն է. որ զարգացած չէ նրանց մանր մոտորիկան, չէ՞ որ մանր մոտորիկայի զարգացումը ակտիվացնում է ուղեղի աշխատանքը, խթան է հանդիսանում խոսքի,մտածողության, տրամաբանության զարգացմանը:

Եվ հենց այստեղ պետք է փնտրել այն անհաջողությունների ակունքները, որոնց հանդիպում է մանկապարտեզից հետո դպրոց հաճախող առաջին դասարանցին, դպրոց շեմելու հենց առաջին պահից: Հետագա խնդիրներից խուսափելու համար, մոտորիկայի հետ կապված հարցերը հարկավոր է լուծել ժամանակին, քանի որ բացթողումները կարող են առաջացնել խնդիրներ:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել խաղի դերակատարումը երեխաների զարգացման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել թեմային համապատասխան գրականություն:
2. Բացահայտել խաղերի արդյունավետությունը նախադպրոցական տարիքում:
3. Ստեղծել զարգացնող միջավայր:
4. Վեր հանել երեխաների զարգացման խնդիրները :
5. Բացահայտել խաղի կարևորությունը՝ ուսուցման տարբեր գործընթացներում:

Գլուխ 1. Խաղ- պարապմունքների մեթոդիկան և տեսակները վաղ տարիքում

Պարապմունքներն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է այն զուգորդել խաղերի հետ համատեղ:

Վաղ տարիքում շեշտը դրվում է խոշոր և մանր մոտորիկաների զարգացման վրա , որը շատ կարևոր է երեխայի ընդհանուր զարգացման գործընթացում:

Իսկ ինչպե՞ս զարգացնել երեխայի ընդհանուր մոտորիկան և ո՞ր տարիքից: Երեխայի մոտորիկայի զարգացմամբ պետք է զբաղվել վաղ տարիքից, նույնիսկ՝ բարուրից: Նորածնին խնամելիս մայրիկը խաղում է նրա մատների հետ, մերսում դրանք: Սրանով նա ՝ նպաստում է երեխայի մանր մոտորիկայի զարգացմանը: Այդ աշխատանքները պետք է լինեն ոչ թե տարերային, այլ համակարգված,շարունակական և նպատակաուղղված: Մերսելով դաստակը, հատկապես մատների ծայրամասային հատվածը, խթանում ենք երեխայի ուղեղի < շարժման> կենտրոնի զարգացումը՝ ակտիվացնելով նաև հարևան կենտրոնների աշխատանքը: Մարդու գլխուղեղում խոսքի և ձեռքի մատների շարժումները կոորդինացնող կենտրոնները գտնվում են հարևանությամբ: Բոլոր շարժումները ղեկավարող կենտրոնի 1/3-ը զբաղեցնում է ձեռքի մատների շարժումների կենտրոնը: Գիտության կողմից հաստատված այս փաստը թույլ է տալիս ձեռքի դաստակը դիտարկելու որպես < խոսքի օրգան>, որի մարզումն ու վարժեցումը նույնքան կարևոր դեր է խաղում երեխայի խոսքի զարգացման գործընթացում, որքան

հնչարտաբերական ապարատը: Երեխայի ձեռքերի մատների վարժեցումը պարզապես անհրաժեշտ պայման է : Իսկ ո՞ր տարիքից սկսել զարգացնել մոտորիկան: Ճիշտ են նկատել գիտնականները.< Լավ է մեկ տարի շուտ, քան մեկ օր ուշ >: Հարց է ծագում, իսկ ինչպե՞ս են մարդիկ վաղ անցյալում զբաղեցրել ու զարգացրել իրենց երեխաներին: Չէ որ այդ ժամանակ չկային թանկարժեք խաղալիքներ: Այդ խնդիրը նրանք լուծել են պարզապես այն ամենով, ինչ ունեցել են ձեռքի տակ/ կենցաղային իրեր, ինքնաշեն խաղալիքներ, բազմաբնույթ խաղեր/: Այսպիսի միջոցներով զարգացրել են երեխաների մոտորիկան և ձևավորել կյանքի հմտություններ: Նրանք հետագայում ավելի հեշտությամբ են հաղթահարել դպրոցական դժվարությունները: Մանկավարժությանը հայտնի է, որ ուսուցման գործընթացում նյութի ակտիվ յուրացումը և մտապահումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ուսուցման գործընթացում զուգորդվում են մի քանի զգայարաններ-վերլուծիչներ՝ լսողական, տեսողական, շարժողական, որոնք իրենց ուրույն տեղն ունեն կառուցողական աշխատանքներում : Այդ գործընթացում զգացումը, պատկերացումը, միտքը, հանդես գալով միաժամանակ, ուսուցանվող նյութի յուրացումը դարձնում են զգայական, լսելի, տեսանելի, շարժողական, որոնք միասնության մեջ նպաստում են երեխաների ընդունակությունների, կարողությունների և հմտությունների համալիր զարգացմանը: Ուսուցման նման միջոցներից են՝ ձեռքի աշխատանքը, համալիր պարապմունքները, տիկնիկային, մատնային, ստվերային թատրոնը, մնջախաղը, մատների վարժությունները[1]: Մեծահասակները ոչ թե պետք է բավարարեն երեխաների բոլոր պահանջները, այլև դնեն նրան այնպիսի իրադրության մեջ, որ ինքը որոնի և գտնի իր պահանջմունքները բավարարելու միջոցներ:

Մանկավարժության մեջ տարբերում են **մանիպուլացված** (մինչև 3 տարեկանների), **սյուժետային** (դերային,թատերականացված,բեմականացված), **դիդակտիկ** և **շարժական** մանկական խաղեր:

Կրտսեր տարիքի երեխաներին խաղի ընթացքում սովորեցնում են առարկաներով գործողություններ կատարել, ծանոթացնում են դրանց ձևին, գույնին, նշանակությանը և այլն:

Նախադպրոցականների սյուժետային խաղերի համար հաճախ փոքրածավալ թեմաներ են ընտրվում գեղարվեստական գրքերից, ռադիո և հեռուստատեսային հաղորդումներից, մանկական ու ժողովրդական հեքիաթներից: Խաղն սկսվում է դերերի բաշխումով: Երեխաներին տրվում է կենդանու, մեքենայի, ծառի և այլ իրի դեր, խաղի մեջ են մտնում նաև կենցաղային առարկաներ, խաղալիքներ, գործիքներ: Խաղային իրադրությունը նպաստում է երեխաների գիտելիքների, մտածողության ու երևակայության զարգացմանը: Թատերականացված խաղերում երեխաները սովորաբար դերերը բաշխում են խաղալիքների միջև և գործում նրանց փոխարեն: Բեմականացված խաղերում նախադպրոցական և դպրոցական ցածր տարիքի երեխաները թատերականացված ձևով վերարտադրում են գրական ստեղծագործությունների բովանդակությունը: Երեխաներին դերի հետ միասին տրվում են խաղալիքներ, օգտագործվում է նաև տիկնիկային թատրոնը[2]:

Երեխաների, նամանավանդ նախադպրոցականների մտավոր դաստիարակության գործուն միջոցներից են դիդակտիկ խաղերը, որոնց նպատակն է նոր գիտելիքներ հաղորդել առարկաների, նրանց դասակարգման, նշանակության, հատկությունների, աշխատանքի տեսակների, բնության երևույթների և այլնի մասին: Լայն տարածում ունեն առանց խաղալիքի, բանավոր մանկական խաղերը՝ հանելուկները, վանկախաղերը և այլն: Հաճախ դիդակտիկ մանկական խաղերը կրում են ճանաչողական-մարզական խաղ-վարժությունների և խաղ-մրցույթների բնույթ:

Մի շարք խաղեր ունեն կանոններ: 4-5 տարեկանները խաղալով մրցում են վազքում, թռիչքում և այլ ձևերում: 5-6 տարեկանների մոտ ձեռքի խաղերը ստանում են մարզական բնույթ:

Շարժուն խաղը նախադպրոցական տարիքի երեխայի համակողմանի դաստիարակության կարևոր միջոցներից մեկն է և դրա առանձնահատկությունն ազդեցության կոմպլեկտայնությունն է երեխայի օրգանիզմի և նրա անձի բոլոր կողմերի վրա: *Ձեռքի խաղը երեխայի բարդ զգացմունքային գործողությունն է՝ հիմնված շարժումների և կանոնների առկայության վրա, որն ուղղված է լուծելու շարժողական խնդիրները:* Շարժախաղերը, ինչպես և այլ խաղի տեսակները հանդիսանում են երեխաների կյանքի կազմակերպման ձև, ունեն մեծ նշանակություն

փոխհարաբերությունների դաստիարակության մեջ: Այս խաղերում մեծմասամբ մասնակցում են ընդհանուր հետքրքրվածությամբ միավորված խմբեր:

Տարբերակվում են ձեռքի խաղերի **երեք** հիմնական տեսակներ, իրենց ենթատեսակներով: Դրանք են՝

- Անհատական կամ միայնակ,
- Ազատ կամ կամային,
- Կոլեկտիվ կամ խմբակային:

Անհատական կամ միայնակ շարժախաղերը ստեղծվում, կազմակերպվում և վարվում են մի երեխայի կողմից: Այս դեպքում երեխան կարող է ինքը որոշել խաղի իմաստը և բովանդակությունը, ժամանակային կանոնները, որոնք խաղի ընթացքում կարող են նույն երեխայի կողմից ձևափոխվել նպատակին առավել էֆեկտիվ հասնելու համար: Խաղի այս տեսակը հատուկ է առավելապես կրտսեր նախադպրոցական երեխաներին, ինչպես նաև կոլեկտիվ շփման մեջ այս կամ այն պատճառով սահմանափակվածություն ունեցող երեխաներին:

Նախադպրոցական և հազվադեպ կրտսեր դպրոցական տարիքի երեխաները նախընտրում են այսպես կոչված, **ազատ կամ կամային** խաղերը: Դրանք կայանում են նրանում, որ երեխաներն իրենք են հնարում են խաղը նպատակի առկայության և դրան հասնելու պարտադիր պայմանով: Նման խաղերը հիմնականում ունենում են սյուժետային բնույթ համապատասխան սյուժեի դերերի բաշխման, և հաճախ մանկավարժների կողմից օգտագործվում են հոգեբանական խնդիրներն ընդլայնելու համար:

Կոլեկտիվ կամ խմբակային ձեռքի խաղերն այդպես են անվանվում խաղում միաժամանակ կոնկրետ քանակությամբ խաղացողների մասնակցության պատճառով: Խաղի այս ձևն ավելի տարածված է երեխաների մեջ և առանձնանում է մեծ բազմազանությամբ: Կոլեկտիվ խաղերն իրենց հերթին ստորաբաժանվում են **թիմային** և **ոչ թիմային** խաղերի:

Ոչ թիմային խաղերն անցկացվում են **խաղավարի** և **առանց խաղավարի**: Գործառութային առումով **առանց խաղավարի** ոչ թիմային խաղերին հատուկ է,

պայմանավորված խաղի կանոններով, խաղացողների միջև անհատական մրցակցությունը խաղահրապարակում կամ խաղացողների շարքերում իրենց տեղի հաստատման համար, ինչպես նաև խմբակային գործողություններում կանոնների հետևման անհատական մուտեցումը: **Խաղավարի** առկայության դեպքում առաջանում է «հակամարտություն» խաղավարի հետ:

Թիմային խաղերը ստորաբաժանվում են այնպիսի խաղերի, որոնց ընթացքում, համապատասխան խաղի բովանդակության և կանոնների, մասնակիցները **ֆիզիկական շփման մեջ չեն մտնում** մրցակցի հետ, և այնպիսի խաղերի, որոնցում առկա է **ֆիզիկական հակամարտությունը** մասնակից-մրցակիցների հետ:

Մրցակիցների միջև **առանց ֆիզիկական շփման** խաղերում մասնակիցների գործառութային առումով առկա է համատեղ պայքարի ցուցաբերում իր թիմի համար ֆիզիկական փոխօգնության և նեցուկ հանդիսանալու ձևով:

Հակամարտող թիմերի մասնակիցների միջև **ֆիզիկական փոխազդեցությամբ** ձեռքի խաղերը մասնակիցների գործառութային առումով ենթադրում են անհատական պայքար իր թիմի համար, պայքար իր թիմի հետաքրքրությունների համար, բայց համատեղ պայքարի գործողությունների ամբողջության առկայությամբ. թիմակիցներին նեցուկ հանդիսանալը և միմյանց ֆիզիկական օգնությունը:

Մրցակցի հետ ֆիզիկական շփմամբ ձեռքի խաղեր կան, որոնք ունեն միջնորդավորված բնույթ: Օրինակ, պարանի քաշումը, որտեղ խաղը և նրա մասնակցիներին ընտրելիս անպայմանորեն հարկավոր է խուսափել պոտենցիալ վնասվածքների վտանգ պարունակող խաղերից:

Ընդհանուր առմամբ ցանկացած Ձեռքի խաղ խաղավարի և առանց խաղավարի անցկացվում է տարբեր տարիքային խմբերում, սակայն խաղավարի առկայությունը նպատակահարմար է համապատասխան երեխաների տարիքային շարժական հնարավորություններին, առանց խաղի կանոնների և բովանդակության բարդացման:

Երաժշտական ձեռքի խաղերում օգտագործվում են երկու տեսակի երաժշտություններ: Առաջինը հիմնված է շարժախաղի սյուժետային կողմի երաժշտական ձևակերպման վրա, ինչպես օրինակ, հեքիաթային ժանրը: Երկրորդ ձևը հիմնված է երաժշտության օգտագործման վրա, այն օգտագործելով որպես

երաժշտական ֆոն շարժախաղի բովանդակության համար, որը նպատակ ունի առավել բարձրացնել զգացմունքայնությունը:

Վերոհիշյալ խմբերի երեխաների տեսադաշտը փոքր է, ուշադրությունը կայուն չէ, այդ իսկ պատճառով նրանց համար խորհուրդ են տրվում խաղեր հասարակ և մատչելի սյուժեով, որտեղ գործող անձիք երեխաներին առօրյա կյանքից շատ լավ հայտնի են (շուն, կատու) կամ որոնց հետ նրանց հեշտությամբ կարելի է ծանոթացնել՝ օգտագործելով նկարներ, խաղալիքներ (արջ, աղվես): Այս խաղերում կանոնները շատ հասարակ են և անմիջականորեն կապված են սյուժեին:

Տարիքային այս խմբերում մեծ տեղ են զբաղեցնում խաղային վարժությունները, որոնց մեջ մտնում են հասարակ շարժողական վարժությունները, ինչպես օրինակ, բռնել գնդակը, զանգը տալ և այլն: Այս շարժումները երեխաներին ծանոթ են և հասանելի (վազք, քայլք և այլն):

Մեծ հետաքրքրություն են առաջացնում փոքրիկների մոտ շարժախաղերը, որոնց սյուժեում կատարվում են իրենց ծանոթ վարժությունները:

Մի խաղում երեխաները պետք է կարողանան շարժվել իրար ետևից կամ կոնկրետ ուղղությամբ, վարժությունն սկսել և վերջացնել կոնկրետ ազդանշանով, մյուսներում ինքնուրույն շարվել, շրջան կազմել և այլն: Նման կերպ նույն շարժումը կատարվում է տարբեր շարվածքներում և տարբեր իրավիճակներում: Սա մեծ նշանակություն ունի երեխաների՝ շարժումները կոորդինացնել կարողանալու համար, կարողանալ տեղորոշվել, նպաստում է ինքնուրույնության և ակտիվության դաստիարակմանը:

Գլուխ 2. Խաղ-պարապմունքների անցկացման մեթոդիկան

Խաղի անցկացման նախապատրաստումը: Անհրաժեշտ է նախօրոք ծանոթանալ խաղի կամ վարժության պայմաններին, առարկաներին, որոնք պետք է օգտագործվեն խաղում: Կանխավ նախապատրաստվածությունը որևէ գործողության ապահովում է երեխայի առավել ուրախ և ակտիվ մասնակցությունը, քանի որ նա սկսում է հասկանալ տվյալ խաղի/ վարժության իմաստն ու հիմնական կանոնները: Սա էական ազդեցություն է թողնում շարժողական ունակությունների և ընդունակությունների զարգացման մեջ: Այս իսկ պատճառով համապատասխան մանկավարժը պետք է մանրամասն նախապատրաստվի անցկացվող խաղ/ վարժությանը. հավաքել անհրաժեշտ առարկաներ, մտածել՝ որտեղ կլինեն տնակները և այլն, ով կխաղա գլխավոր դերը և այլ նման բաներ: Բացի այդ մանկավարժը պետք է լավ իմանա խաղի բովանդակությունը, ընթացքը, կանոնները և տեքստը:

Խաղի կանոնների կատարումը երեխաների մոտ զարգացնում է համակարգվածությունը, կազմակերպվածությունը, կարգապահությունը, անձնական գործողությունների ուղղումը կոլեկտիվ խնդիրներին, դրանց զսպումը, իմաստավորված գործելը: Այս տարիքի երխաների նկատմամբ հիմնական պահանջը գործել ազդանշանին համաձայն, իրար ետևից շարժվել, վարժությունը կատարելուց հետո վերադառնալ իր տեղը: Բացի այդ խաղի մեջ երեխան հաճախ պետք է կոնկրետ ձևով գործի, օրինակ, գնդակը գցել երկու ձեռքվ, սողալ չորեքթաթ և այլն: Քանի որ փոքրիկները բավականին դանդաղ են ըմբռնում մանրուքները, այդ իսկ պատճառով դաստիարակը կարող է նույն խաղը մի քանի անգամ կրկնել: Նպատակահարմար է խաղը կրկնել 2-3 անգամ, ապա երեխաներին նոր խաղ առաջարկել կամ էլ իրենց իմացածից, իսկ հետո նորից վերադառնալ նույնին[3]: Արդյունքում երեխաների մոտ ինքնուրույն կատարողականությունը մեծանում է, որն առավել մեծ հրճվանք է պարգևում նրանց և խաղի նկատմամբ հետաքրքրությունն առավել է մեծացնում: Խաղի կրկնության դեպքում, մանկավարժը պետք է ի նկատի ունենա յուրաքանչյուր երեխայի շարժողունակությունը և այն ուղղորդել (ժամանակին կանգնեցնել մեկին, մյուսին ակտիվացնել, երրորդին համապատասխան դեր տալ և այլն), պետք է ձգտել

նրան, որ երեխաները սիրեն շարժախաղերը[4]: Խաղի ընթացքում կարևոր է հետևել, որ փոքրիկները ուժասպառ չլինեն, չափից շատ կարմրածությունը կամ սփրթնածությունը, շնչասպառությունը, անտեղի ձայները հուշում են, որ երեխաներին հագիստ է պետք: Հանգստի ընթացքում կարելի է նրանց հետ զրուցել, օրինակ, ճշտել խաղի կանոնները, կրկնել բանաստեղծությունը:

Ձեռքի խաղերի դեպքում, հատկապես եթե ունեն որոշակի թեկուզ մանր սպորտային բնույթ, պետք է հաշվի առնել ֆիզիկական ծանրաբեռնավածությունը: Պետք է սկսել ոչ բարդ խաղից,վարժությունից, իսկ ապա ակտիվորեն ներքաշել դրա մեջ երեխաներին:

Խաղի վերահսկումը: 3 տարեկան երեխայի համար մեծ նշանակություն ունի անընդհատ շփումը մեծահասակների հետ: Փոքրիկները հաճույքով խաղում են, երբ մեծահասակները ակտիվ են, զգացմունքային, հետաքրքրություն են ցուցաբերում խաղերի նկատմամբ և իրենք էլ մասնակցում են: Դաստիարակի ուրախ և մեղմ ձայնը ներքաշում է երեխաներին խաղի մեջ և ուրախ տրամադրություն է հաղորդում: Նման դեպքում փոքրիկները ուշադիր լսում են դաստիարակին, կատարում են նրա պահանջները, կրկնում են խաղերը:

Դաստիարակը հաճախ պետք է իր կողմից խաղի ղեկավարումը զուգորդի գլխավոր դերակատարումը իր կողմից կատարելով, քանի որ 2-3 տարեկան փոքրիկների մոտ վերջինը լավ չի ստացվում: Երեխաներին չի շփոթեցնում, որ մեծահասակը ինքն է կատարում գլխավոր դերը, ցույց է տալիս իրենց ինչպես պետք է խաղան: Շատ կարևոր է, որ մանկավարժը, խաղին մասնակցելով, օրինակ ցույց տա, հուշի խաղի ընթացքը:

Խաղի բացատրումը: Խաղի բացատրումը շատ պատասխանատու պահ է, որն էլ ազդում է խաղի ընթացքի վրա: Փոքրիկներին խաղը պետք է բացատրել զգացմունքայնորեն, յուրաքանչյուր պերսոնաժի հատուկ բնութագրիչները ինտոնացիայով ընդգծել: Օրինակ, նապաստակների մասին խոսելիս կարելի է խոսել մեղմ, քնքուշ ձայնով, իսկ գայլը, որն ուզում է

.

նապաստակներին բռնել, ցածր և զգուշավոր, զգուշություն հաղորդելու համար:

Խաղի բացատրման ժամանակ պետք է հստակորեն ընդգծել ազդանշանները, որոնցով երեխաներն իրենց գործողությունները փոխելու են: Եթե որպես ազդանաշան ծառայում է տեքստի վերջին բառը, ապա այն պետք է ընդգծել ինտոնացիայով, բարձրաձայն արտահայտել:

Անընդհատ խոսակցական շփումը մեծահասակների հետ փոքրիկներին մեծ բերկրանք է բերում, բացի այդ այն զարգացնում է նրանց խոսքը:

Շատ կարևոր է ակտիվացնել և ուղղորդել նաև երեխաների միջև շփումը: Ուշադիր մոտեցման և տեղին, ժամանակին, տակտիկորեն հիշեցումը, միասին խաղալու, միմյանց օգնելը պահանջի դեպքում երեխաների մեջ լավ ընկերական փոխհարաբերություններ կարելի է ստեղծել:

Խաղի ընտրությունը: Խաղերը ընտրվում են համապատասխան դաստիարակության խնդիրների, երեխաների տարիքային առանձնահատկությունների, նրանց առողջական վիճակի, պատրաստվածության: Ի նկատի են առնվում խաղի անցկացման վայրը, օրվա ռեժիմը, տարվա եղանակը և այլն: Պետք է հաշվի առնել նաև երեխաների կազմակերպվածության և կարգապահվածության աստիճանը, եթե այն թերանում է, ապա սկզբից հարկավոր է կազմակերպել ավելի քիչ ձեռքի գործողություններ ընդգրկող խաղեր[5]:

Հետաքրքրության առաջացումը խաղի նկատմամբ: Մինչև խաղին անցնելը նախ պետք է երեխաների մոտ հետաքրքրվածություն առաջացնել խաղի նկատմամբ: Այդ դեպքում նրանք ավելի լավ են սովորում կանոնները, ավելի լավ են կատարում շարժումները: Օրինակ՝ կարելի է կարդալ բանաստեղծություն համապատասխան թեմայից, ցույց տալ նկարներ, առարկաներ, պատմել համապատասխան պատմություն: Կարելի է և հարցադրումով մոտենալ, օրինակ, «Ի՞նչ եք այսօր նկարել:

Խաղացողների կազմակերպումը, խաղի բացատրումը: Կարևոր է երեխաներին ճիշտ տեղավորել: Նախադպրոցական տարիքի երեխաներին հիմնականում կանգնեցնում են այնպես, ինչպես պահանջում է խաղը: Իսկ դաստիարակը պետք է կանգնի այնպես, որ երեխաները նրան բոլոր կողմերից տեսնեն:

Այս խմբի երեխաներին բացատրությունները, որպես կանոն, արվում են խաղի ընթացքում: Եթե երեխաներն արդեն ծանոթ են կանոններին, ապա նրանց ևս պետք է ներգրավել բացատրման մեջ: Բացատրությունը պետք է լինի կարճ, հստակ և զգացմունքային: Շարժումները կարելի ցույց տալ թե՛ մինչև խաղի սկսելը, թե՛ ընթացքում: Բացատրմանը հաճախ զուգորդվում է նաև ցույց տալը:

Խաղի հաջող անցկացումը մեծմասամբ կապված է դերերի ճիշտ բաշխումից, այդ իսկ պատճառով կարևոր է հաշվի առնել երեխաների անհատական-անձնային առանձնահատկությունները՝ ամաչկոտություն, աշխույժ և այլն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ չնայած ամաչկոտ կամ ոչ աշխույժ երեխաները միշտ չէ, որ կարող են գլխավոր և պատասխանատու դերերը լավ տանել, բայց նրանց անընդհատ դրդել դրանց անհրաժեշ է, մյուս կողմից նման դերերը պետք չէ միշտ նույն անձանց տալ, ցանկալի է, որ բոլորի մոտ էլ ստացվի այդ դերը:

Խաղի սկզբում դաստիարակն ինքն է իր վրա վերցենում գլխավոր դերը, իսկ ապա, երբ երեխաները ինտեգրվում և հարմարվում են խաղին, իրենց է հանձնարարում: Դեռ բացատրման ժամանակ ընտրում է վարողին և մնացածին կանգնեցնում է իրենց տեղերում, կարող է և վերջին նպատակի համար օգտագործել նաև պատահականության սկզբունքը:

Խաղահրապարակը ձևավորելը կարելի է կատարել կամ բացատրման ժամանակ կամ դրանից առաջ: Իսկ օգտագործվող առարկաները սովորաբար խաղից առաջ են բաշխվում, իսկ երբեմն երեխաներն իրենք են խաղի ընթացքում վերցնում:

Խաղի անցկացումը և ղեկավարումը: Խաղը ղեկավարում է դաստիարակը և նրա դերակատարումը կախված է խաղի բնույթից, խմբի տարիքային և քանակային թվից, մասնակիցների վարքագծից. որքան փոքր են այնքան մեծ է դաստիարակի դերակատարումը խաղի վարման մեջ: Այս տարիքային խմբերում դաստիարակը սկզբում իր վրա է վերցնում գլխավոր դերը, իսկ ապա այն հանձնում է մասնակիցներից որևէ մեկին: Դաստիարակը

մասնակցում է, երբ զույգ չի լինում, բացի այդ նրա մասնակցությունը որշակի հետաքրքրություն է առաջացնում խաղի նկատմամբ:

Դաստիարակը հրահանգներ տալիս է տեսողական կամ ձայնային ազդանշանների օգնությամբ: Վերջինները չպետք է լինեն շատ բարձր:

Դաստիարակը ուղղորդում է ինչպես խաղի ընթացքում, այնպես էլ այն կրկնելուց առաջ և գնահատում է երեխաների վարքագիծը: Սակայն պետք չէ չարաշահել դիտողությունները շարժումը ճիշտ չկատարելու համար: Դիտողությունները կարող են իջեցնել դրական էմոցիաները, որոնք առաջանում են խաղի ընթացքում: Դիտողություններները ավելի լավ է անել դրական ձևով, պահպանելով ուրախ տրամադրությունը, խրախուսելով ճարպկությունը, հնարամտությունը, հաստատակամությունը, սրանց և նման հատկությունների միջոցով երեխաների մոտ ավելի է բարձրանում շարժումը ճիշտ կատարելու ցանկությունը:

Դաստիարակը հուշում է, թե ինչպես է ավելի նպատակահարմար կատարել շարժումը, որևէ բան բռնել, ոչ բարձր կարդալ և այլն:

Դաստիարակը չպետք է թույլ տա, որ երեխաները երկար ժամանակ մի դիրքով մնան, որոնք կարող են վատ ազդել արյան շրջանառության վրա և ընդհանրապես երեխայի ինքնազգացողության վրա:

Դաստիարակը ղեկավարում է նաև ֆիզիկական ծանրաբեռնվածության աստիճանը, որը պետք է ավելանա աստիճանաբար:

Խաղի ավարտը և արդյունքների ամփոփումը: Նախադպրոցական տարիքի երեխաների խմբերում դաստիարակը շարժախաղն ավարտում է մեկ այլ ավելի հանգիստ բնույթ խաղի անցնելու առաջարկով:

Բոլոր տարիքի երխաների համար մեծ պահանջմունք է խաղը, որի մեջ շատ կարևոր են ձեռքի խաղերը կիրառել ոչ միայն շարժողական ունակությունները զարգացնելու, այլև երեխայի անհատականության բազմակողմանի դաստիարակության համար: Շարժախաղերի ճիշտ կիրառումը և ճիշտ մեթոդի կիրառումը նպաստում է երեխայի անհատական ունակությունների բացահայտմանը, օգնում են նրան դաստիարակել առողջ, կենսախինդ, ակտիվ:

Ստորև ներկայացնում եմ իմ կողմից կազմակերպված և անցկացրած ինտեգրված պարապմունքը:

Կառուցողական աշխատանք և խոսքի զարգացում

Ինտեգրված խաղ-պարապմունք ՝ենթախմբերով

Թեմա՝ Լայն և նեղ ճանապարհներ՝ փիսիկի համար

Նպատակը՝ ամրապնդել աղյուսներից լայն և նեղ ճանապարհներ կառուցելու կարողությունները: Հարստացնել երեխաների բառապաշարը, ամրակայել լայն ճանապարհ, նեղ ճանապարհ բառակապակցությունները:

Զնավորել հասակակիցների հետ համագործակցելու տարրական կարողություններ:

Սովորեցնել կատարել հստակ գործողություններ՝ ըստ դաստիարակի հրահանգի:

Անհրաժեշտ պարագաներ

- աղյուսներ՝ ծանոթ գույների

-թելերի կծիկներ կամ գնդակներ՝ երեխաների քանակին համապատասխան

-շինանյութը և խաղալիքը հավաքելու համար հարմար տուփեր

Պարապմունքի ընթացքը

Պարապմունքը սկսեցի հանելուկ-ոտանավորի ընթերցմամբ.

Ո՞վ արեց, ո՞վ արեց,

Տատիկի մոտ ո՞վ պարեց:

Ո՞վ գլորեց կծիկը

Տարավ գցեց խցիկը:

Նստեց մինչև առավոտ

Չար մկնիկի դռան մոտ:

-Երեխաներ ու՞մ մասին է այս հանելուկ-ոտանավորը(փիսիկի):Ո՞վ է սիրում խաղալ թելի կծիկի, գնդակի հետ:(Երեխաներին ցուցադրեցի կատվի նկարներ, պատմեցի, որ կատուները շատ են սիրում խաղալ գնդակների և կծիկների հետ): Մենք այսօր խաղալու ենք շատ հետաքրքիր խաղ՝ <<Փիսիկը և գնդակը>>: Խաղի համար մենք պետք է նախ և առաջ կառուցենք լայն և նեղ ճանապարհներ: Երեխաներ, տեսեք որքան շատ գնդակներ եմ բերել խաղի համար:

Նեղ ճանապարհ կառուցելու համար աղյուսները պետք է դնել երկարությամբ:Իսկ լայն ճանապարհի դեպքում՝ լայնությամբ: Երեխաները կառուցեցին ճանապարհները, ապա առաջարկեցի խաղալ:

Ես դարձա մայր կատուն, իսկ երեխաները փոքրիկ փիսիկներ:

Դե քանի որ բոլորս փիսիկներ ենք, սկսենք խաղը

-Փիսիկ Կամո, բռնիր քո գնդակը, Փիսիկ Լիկա, դու էլ բռնիր քոնը: Գնդակները գլորում ենք կառուցած ճանապարհներով, ապա սկսեցին նրանք մեկը մյուսին փոխանցել գնդակները:

Խաղի ընթացքում երեխաները բավականին աշխուժացան:

Վերջում ամփոփեցի պարապմունքը.

-ի՞նչ կառուցեցինք այսօր (ճանապարհ)

-ի՞նչ շինանյութ օգտագործեցինք (աղյուս)

-ում համար ճանապարհ կառուցեցինք(փիսիկների)


Поделиться
Изменить
Объектив
Удалить

Եզրակացություն

Վերը շարադրվածից ակնհայտ է, որ խաղերում երեխաները գործում են միասին և կազմակերպված: Այդ ամենը դաստիարակում է երեխայի վարքը՝ կարգապահությունը, ինքնատիրապետումը: Խաղերում նա պետք է զսպի իրեն, օգնի ընկերոջը, հաղթահարի որոշ դժվարություններ:

Վաղ տարիքի երեխան պետք է կարողանա ունկնդրել, շոշափել, ճանաչել, տարբերել առարկաները: Ինքնուրույն գործունեության մեջ գիտելիքների օգտագործման կարողությունը դառնում է մտավոր զարգացման գլխավոր ցուցանիշներից մեկը, պետք է երեխային սովորեցնել գործնականում օգտվել դրանցից: Խաղը զարգանում է մեծահասակների անմիջական ազդեցությամբ, ուսման և դաստիարակության միջոցով, առարկաների, խաղալիքների միջոցով: Սովորում են տարբերել առարկաների ձևը, մեծությունը և գույնը: Շարժումները զարգանում են սողանցում կատարելով, գնդակը գլորելով, մագլցելով սանդուղքի վրա, ծափերով, ոտքերի շարժումներով: Խաղի ընթացքում երեխաները ինքնըստինքյան պարտավորվում են ենթարկվել գործողություններին, սահմանված կանոններին:

Այսպիսով, խաղն առաջնային դեր ունի նախադպրոցական երեխայի զարգացման, դաստիարակության, աշխարհընկալման գործում: Դաստիարակը, օգտագործելով խաղի բովանդակությունը որպես դրական վերաբերմունք, զիջողականություն միմյանց նկատմամբ, սիրո առավելագույն զգացմունք դրսևորել իրար հանդեպ, կարողանում է երեխայի վրա ազդել:

Ի վերջո նման խնդիրների լուծման մեջ իր ուրույն դերակատարումն ունի շարժուն խաղը, որը դրականորեն նպաստում է երեխաների ներդաշնակ և համակողմանի դաստիարակմանը և զարգացմանը:

Խաղ-պարապմունքները ավելի հետաքրքիր է երեխաների համար, քան ավանդական պարապմունքները:Ավանդական պարապմունք կատարել եմ մեկ անգամ և զգացել եմ , որ երեխաները ավելի հաճույքով են մասնակցում խաղ-պարապմունքներին, քանի որ իրենք պարապմունքի ընթացքում պասիվ վիճակից անցնում են ակտիվ վիճակի

Օգտագործված գրականության ցանկ

1. Միտոյան Հ., և ուրիշներ- Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիր, 2-3տարեկաններ,ՀՀ Կրթության և գիտության նախարարություն ; Կրթության ազգային ինստիտուտ,-Երևան, 2012թ.
2. Շարժախաղերը նախակրթարանում; http://victoriamblog.wordpress.com/
3. Նալչաջյան Ա., <Ընդհանուր հոգեբանության հիմունքներ>-Երևան, 1990թ. , 259 էջ
4. Վարդումյան Ս., և ուրիշներ -<Հրաշք մատիկներ>- Երևան, 2006թ.
5. Սմբատյան Լ.,-Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում-Երևան,2014թ.
6. Нижегородцева Н., Шадриков В., <Психолого-педагогическая готовность ребенка к школе> Москва, 2001г.
7. *Сообщение "Сенсорно-двигательные игры для детей раннего и младшего дошкольного возраста"; http://nsportal.ru/detskii-sad/raznoe/soobshchenie-sensorno-dvigatelnye-igry-dlya-detei-rannego-i-mladshego-doshkolnogo*

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ «Ռեժիմը նախադպրոցական տարիքում»

ԿԱՏԱՐՈՂ՝ Քրիստինե Գևորգի Զալինյան

ՂԵԿԱՎԱՐ՝ մ. գ. թ. , Լ. Միրաբյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն.....2-3

Գլուխ 1 Նախադպրոցական տարիքի երեխաների օրվա ռեժիմի կարևորությունը տանը 4-6

1.1 Նախադպրոցական տարիքի երեխաների օրվա ռեժիմը մանկապարտեզի խառը խմբում 7-10

Գլուխ 2 Ֆիզիկական դաստիարակության կարևորությունը ՆՈՒՀ-ում 10-11

Փորձարարական մաս.....12-13

Եզրակացություն.....14

Գրականության ցանկ.....15

Ներածություն

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ այն մեծ կարևորություն ունի երեխայի առողջության և ֆիզիկական զարգացման համար:

Երեխայի ուրախ և միևնույն ժամանակ հավասարակշռված տրամադրությունը հիմնովին կախված է ռեժիմի խստիվ իրականացումից, իսկ խախտումը բացասական է ազդում երեխայի նյարդային համակարգի, քնի, ախորժակի, տրամադրության և հուզական աշխարհի վրա: Շատ կարևոր է պահպանել երխայի ճկուն առօրյան քանի որ ակտիվությունը երեխայի աճող մարմնի զարգացման հիմնական գործոնն է: Երեխայի մոտ պետք է ձևավորել կազմակերպվածության և կարգուկոնոնի սովորություն դեռևս նախադպրոցական տարիքից, սովորեցնել նաև հետևել առօրյային ճշգրիտ կազմակերպելով այն ռեժիմի հիմնական բաղադրիչներով՝ քնել, մաքուր օդում զբոսնել, խաղային իրավիճակներ, հիգիենա և այլն: Այս ամենը պետք է արվի աստիճանաբար, հետևողականորեն և ամեն օր: Նախադպրոցական ուսումնական ռեժիմը որքան մոտ լինի երեխայի անհատական առանձնահատկություններին(հաշվի առնել երեխայի քնի տևողությունը, նախասիրությունները, գործունեության տեմպը), այնքան նա ավելի հարմարավետ կզգա իրեն, լավ կլինի տրամադրությունը և բարձր գործունեությունը: Երեխայի առօրյա գործունեության և հանգստի բոլոր տեսակները ընտրելիս պետք է հաշվի առնել օրգանիզմի տարիքային առանձնահատկությունները, իսկ հանգիստը ապահովի մարմնի բոլոր ֆիզիոլոգիական համակարգերի ամբողջական վերականգնմանը: Երեխայի առողջ մեծանալու և ճիշտ զարգանալու համար պետք է ճիշտ կազմված առօրյա, իսկ տան համար բավական է ճիշտ արդիականացնել մանկապարտեզում նախատեսված առօրյան: Մանկական հոգեբանների կարծիքով առօրյան երեխային ավելի պատասխանատու և կարգապահ է դարձնում, բարձրացնում է ինքնագնահատականը մեծացնելով մտավոր կարողությունները:[4]

Հետազոտական աշխատանքի նպատակն է.

Ուսումնասիրել թեմային վերաբերող գիտական, գիտամեթոդական, մեթոդական առկա գրականություն, այլոց առաջավոր փորձը և կատարել եզրահանգումներ:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

- ա) նկարագրել նախադպրոցական տարիքի օրվա ռեժիմը մանկապարտեզի խառը խմբում:
- բ) բացահայտել նախադպրոցական տարիքի օրվա ռեժիմի և ֆիզիկական դաստիաակության կարևորությունը տանը և ՆՈՒՀ-ում
- գ) իրականացնել փորձարարական աշխատանք, կատարել եզրակացություն:

Աշխատանքի կառուցվածքը.

Աշխատանքը կազմված է ներածական մասից, 2 գլխից՝ առաջին մասը կազմված է 1 ենթագլխից, փորձարարական մասից, եզակացությունից և գրականության ցանկից: Ծավալը՝տպագիր 16 էջ:

Գլուխ 1 Նախադպրոցական տարիքի երեխաների օրվա ռեժիմի կարևորությունը տանը

Օրվա ռեժիմ ասելով հասկանում ենք, որ պետք է պլանավորել օրը: Բաշխելով և հաջորդելով առօրյա գործողությունները, ըստ պլանավորածի օրվա որոշակի ժամերին անել տարբեր գործողություններ:

Աղջիկ կամ տղա երեխաներին առօրյային ընտելացնեը պետք է լինի շատ վաղ տարիքից: Այս ամեենի շնորհիվ երեխաների մեջ կձևավորվի սովորություն որը նրանց մեջ կմնա ամբողջ կյանքի ընթացքում: Մինչև վեց տարեկան երեխաները հեշտ են հարմարվում ամենօրյա ռեժիմին, այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում այն ճիշտ կազմակերպել այդ տարիքից:

Տանը երեխայի առօրյան ունի շատ առավելություններ, որն էլ պետք է հաշվի առնել օրվա ռեժիմը կազմելիս:

Այս նկարի միջոցով երևում է երեխայի հագեցած առօրյան.

Առավել կարևոր է երեխայի սնունդը և քունը: Պետք է այնպիսի մթերքներ ընտրել սննդակարգի համար որոնք չվնասեն երեխայի մարսողության համակարգին: Նախադպրոցական տարիքի երեխաների համար շատ կարևոր է քունը առավել ևս ցերեկային քնի ժամը, մինչև հինգ տարեկան երեխաների համար խորհուրդ է տրվում ցերեկային քունը կազմակերպել երկուսից երեք ժամ: Շատ երեխաներ հրաժարվում են ցերեկային քնից և մեծահասակները պետք է կարողանան փոխարինել այն պասիվ գործողություններով. օրինակ՝ հեքիաթների ընթերցանությամբ, անկողնու վրա պառկելով և այլն: Ռեժիմի սովոր երեխան երբեք չի տրտնջա քնի ժամի համար, եթե օրինակ երեկոյան երեխան քնի իր ռեժիմին համապատասխան ժամին ապա կարթնանա առանց դժվարության և ուրախ: Ավելի հաճույքով կհագնվի, ավելի շատ ժամանակ կունենա լվացվելու նախաճաշելու և պատրաստվելու համար: Նախադպրոցական բոլոր հաստատություններում ռեժիմը խստորեն և հաճելիորեն պահպանվում է, ինչը հաճախ չի պահպանվում տանը անցկացրած հանգստյան օրերին: Նման դեպքերում երեխան շեղվելով սովորական առօրյայից երկուշաբթի իրեն այնքան էլ լավ չի զգում մանկապարտեզում, քանի որ խախտվել է նրա քնի և օրվա ռեժիմը:

«3 - 7 տարեկան երեխաների համար խորհուրդ է տրվում հետևյալ օրվա ռեժիմը երբ երեխաները գտնվում են տանը

7-7.30	Արթնացում, լվացվել, վարժություններ
8-8.30	Նախաճաշ
9-10.00	Զարգացնող գործողություններ, խաղեր
10.00	Երկրորդ նախաճաշ
10.20-12.00	Զբոսանք
12.30-13.00	Ճաշ
13.00-15.00	Ցերեկային քուն
15.00-15.30	Արթնացում, վարժանքներ
16.00-18.00	Դասեր,զբոսանք,զարգացնող խաղեր
18.30-19.00	Ընթրիք

19.00-19.30	Ազատ ժամանակ, խաղեր
21.00	Քնել

Այս ռեժիմը կարիք չկա պահպանել րոպեների ճշգրտությամբ,»[4] ծնողի հայեցողությամբ պետք է հարմարեցնել ըստ երեխաներ առողջական վիճակին և ցանկություններին:

1.1 <u>Նախադպրոցական տարիքի երեխաների օրվա ռեժիմը մանկապարտեզի խառը խմբում</u>

«մանկապարտեզի խառը խմբի օրվա ռեժիմն իր ներգործության հնարավորություններով պետք է նպաստի և ապահովի բոլոր երեխաների ներդաշնակ, համակողմանի զարգացումը: Տարատարիք խմբավորումները նպաստաավոր են երեխայի սոցիալական և ճանաչողական զարգացման տեսանկյաունից: Այդ փորձին օժանդակելու նպատակով հիմնվել ենք Վիգոտսկու՝ «Զարգացման մերձավոր գոտու» տեսության վրա, ըստ որի մեծահասակները և ավելի իրազեկ հասակակիցները կարող են օժանդակել, որ երեխան իր իմացածից և կարողացածից մի քիչ ավելին կարողանա անել, և որ ճանաչողական զարգացման լավագույն խթանը երեխաներին այնպիսի առաջադրանք տալն է, որը մի փոքր գերազանցում է նրանց զարգացման ներկա մակարդակից:»[3.էջ8]

Այսպիսով հասկանալի է այն, որ երեխայի համար առավել օգուտ է հասակակիցների հետ համագործակցությունը, երբ ընկերները ավելի տարիքով և իազեկ են: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում հասկանալի է դառնում, որ նախադպրոցական տարիքի տարատարիք խմբերում խաղերը ավելի բարդ են քան նույնատարիք խմբերում: Սա ենթադրում է, որ տարատարիք խմբերում կրտսեր երեխաները ավագ երեխաներից բազմաթիվ հմտություններ են ձեռք բերում: Այս խմբերում ավագ երեխաները հաճախ օգնում և առաջնորդում են կրտսեր ընկերներին, այն նաև դրական ազդեցություն կարող է ունենալ նվազ հասուն երեխայի խոսքի վրա:

«Ավագ երեխաները օգնելով կրտսեր երեխաներին ավելի լավ են դատում սեփական վարքի մասին և փորձում բարելավել այն:

Օրվա ռեժիմը բաժանվում է այնպիսի ժամանակահատվածների, որոնք երեխաներին հնարավորություն են տալիս ներգրավվելու ինտեգրված, ակտիվ, մասնակցային գործունեության մեջ: Օրը պետք է բնական ձևով կազմակեպել՝ ժամանակ ապահովելով մեծ ու փոքր խմբերով աշխատանքի, անհատական և բացօթյա աշխատանքների, ակտիվ և հանգիստ պահերի, զրույցի և վերլուծական փուլերի համար: Ռեժիմի շնորհիվ պետք է արտացոլվի խառը տարիքային խմբի երեխաների զարգացման առանձնահատկությունները:»[3.էջ10]

« Օրվա մոտավոր ռեժիմ՝ 8-ժամյա աշխատանքի դեպքում

կիրառելի է սահող ռեժիմ. ընդունելի են տևողության փոքր տատանումներ

	Կանոնակարգային պահեր	Ժամերը
1.	Երեխաների ընդունելություն, խաղեր, առավոտյանան մարմնամարզություն	9.00 - 10.00
2.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	10.00 - 10.30
3.	Պարապմունքի նախապատրաստում	10.30 – 10.40
4.	Առաջին պարապմունք	10.40 – 11.00
5.	Երկրորդ պարապմունք	11.10 – 11.30
6.	Երրորդ պարապմունք կամ ազատ խաղային գործունեություն	11.40 – 12.00
7.	Զբոսանք, խաղեր, դիումներ	12.00 – 12.30
8.	Վերադարձ զբոսանքից	12.30 – 12.35
9.	Ճաշի նախապատրաստում, ճաշ	12.35 – 13.05
10.	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	13.05 – 15.20
11.	Արթնացում, կոփման արարողություն	15.20 – 15.50
12.	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ Խաղեր	15.50 – 16.30

13.	Զբոսանք,այլ աշխատանք, տուն ճանապարհել	16.30 – 17.00

»[1]

Պարապմունքները շատ կարևոր դեր ունեն երեխայի օրվա կանոնակարգում:

«Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորը յուրացվում և ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում:» [3.էջ 11]

Պարապմունքները իրենց բովանդակությամբ և կազմակերպման ձևով պետք է շատ չտարբերվեն մյուս աշխատանքներից որոնք կազմակերպվում են երեխաների առօրյայում և շատ կարևոր է, որ այդ անցումները լինեն տրամաբանական, կանոնավոր և թեթև: Երեխաների հետ տարվող բոլոր աշխատանքները անկախ բնույթից շատ կարևոր են նրանց առօրյա զարգացման համար:

Պարապմունքները և խաղերը կազմում են ուսուցման հիմնական ձևերը: Խաղի միջոցով անցկացրած պարապմունքները ավելի գրավիչ են, այդ պատճառով պարապմունքների կառուցվածքային տարբեր մասերում պետք է օգտագործել տարբեր խաղային շարժառիթներ, որոնք կցրեն երեխայի հոգնածությունը, կօգնեն կենտրոնացնել ուշադրությունը և պահպանել հետաքրքրությունը ուսուցանվող նյութի նկատմամբ: Ուսուցանվող նյութը պետք է ուսուցանել ասիճանական բարդեցմամբ՝ առանց պարապմունքը դարձնելու ուսուցման գերիշխող ձև: Որպես ուսուցման հիմնակա ձև նախադպրոցական հաստատություններում ամրագրվել է դիդակտիկ խաղը: Այն իր մեջ ներառում է տարիքային զարգացման բոլոր հնարավերությունները: Դիդակտիկ խաղը իր մեջ միավորում է խաղը և պարապմունքը: Շատ պարապմունքներ իրականացվում են ինտեգրման ճանապարհով , օրինակ՝ խոսքի զարգացում+կերպարվեստ, ծանոթացում շրջակա միջավայրին+կառուցողական աշխատանք, մաթեմատիկա+երաժշտություն և այլն: Պարապմունքները հիմնականում կազմակերպվում են առավոտյան, բայց կախված տեսակից և բնույթից կարող է իրականացվել օրվա երկրորդ կեսին զբոսանքի ժամանակ:

«Պարապմունքների ժամանակ երեխաներին կարող ենք նստեցնել կիսաշրջանաձև «Ո» տառի տեսքով, եղևնու տեսքով դասավորված սեղանների շուրջ,

բացօթյա դիտարկումների ժամանակ խմբված դիտարկվող նյութի շուրջ, հեքիաթի ընթերցանության ժամանակ գորգին նստած դաստիարակի հետ և այլ շատ տարբերակներով, բայվ ոչ՝ «դպրոցական» ձևով:

Պարապմունքներն իրականացվում են շաբաթական տեղաբաշխմամբ գրաֆիկի և ռեժիմի համաձայն: Օվա կանոնակագը կարող է փոփոխվել ըստ օրվա տաք և ցուրտ եղանակների:

Խառը նախադպրոցական խմբերում լավագույն տարբերակը պարապմունքը անցկացնելու ենթախմբերով աշխատանքն է: Պարապմունքը սկսվում է ամբողջ խմբի հետ, խթանման փուլում խումբը բաժանվում է տարիքային ենթախմբերի և յուրաքանչյուր խմբի թեմայի շրջանակներում հանձնարարում է առաջադրանք ըստ տարիքային առանձնահատկությունների: Փոքրիկները կարող են առաջադրանքը ավարտել մի փոքր շուտ: Ընթացքում կազմակերպվում է թարմացվող վարժություններ:»[1]

« Խառը տարիքային խմբի շաբաթական պարապմունքների տեղաբաշխման օրինակելի տարբերակ

Շաբաթական 12 պարապմունք + 1՝ դաստիարակի հայեցողությամբ

Շաբաթվա օրեր	**Խոսքի զարգացում գեղարվեստական գրականություն**	**Ծանոթացում շրջակա միջավայրին**	**Մաթեմատիկա**	**Ծեփակերտում**	**Ապլիկացիա Կառուցողական աշխատանք**	**Երաժշտություն**	**Նկարչություն**	**Ֆիզ. դաստիարակություն**
Երկ.		1				1	1	
Երք.	1							1
Չրք.			1		1			
Հնգ.	1					1	1	
Ուրբ.				1				1
Ընդ.	**2**	**1**	**1**	**1**	**1**	**2**	**2**	**2**

Հնգօրյա աշխատանքային շաբաթով գործող նախադպրոցական ծառայությունների 3-6 տարեկանների խառը տարիքային խմբում շաբաթական 12 պարապմունքը բաժանվում է շաբաթվա օրերի վրա, ուստի երկուշաբթի և հինգշաբթի կազմակերպվում է երեքական պարապմունք, իսկ երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ՝ երկուական:»[3. էջ13]

<u>Գլուխ 2 Ֆիզիկական դաստիարակության կարևորությունը ՆՈՒՀ-ում</u>

Նախադպրոցական տարիքում հատուկ ուշադրություն պետք է հատկացնել երեխաների ֆզիկական դաստիարակությանը: Շատ մեծ նշանակություն ունի նաև երեխաների ֆիզիկական դաստիարակության պարապմունքների բացօթյա կազմակերպումը, որը շատ հարմար է կազմակերպել զբոսանքի վերջում կամ սկզբում: Առավոտյան մարմնամարզությունը նույնպես ցանկալի է անցկացնել բացօթյա, թարմ օդում, իսկ տարվա ցուրտ եղանակներին լավ օդափոխված սենյակում:

Ֆիզիկական դաստիարակության անհրաժեշտությունը առավել կարևոր է նախադպրոցական տարքում:

«Ֆիզիկական դաստիարակության կարգախոսը Ժ. Ժ. Ռուսոյի «Առողջ մաիմնում առողջ հոգի» հանրահայտ ձևակերպումն է:

Երեխայի ֆիզիկական զագացումն իրենից ներկայացնում է բնականոն կենսաբանական գործընթաց, որի ընթացքում.

-Կառուցում է երեխայի ֆիզիկական մարմինը

-Կոփում է օրգանիզմը և ամրապնդվում է առողջությունը

-Զարգանում են հիմնական շարժումները

-Ձևավովում են շարժողական կարողություններ ու հմտություններ

-Ձեռք են բերում ֆիզիկական հատկություններ որակներ

-Դրսևորվում է ֆիզիկական ակտիվություն և որոշակի կենսակերպ:»[2.էջ.45]

«Շարժառողական ռեժիմում շատ կարևոր է երեխաների ինքնուրույն շարժողական գործունեությանը, որտեղ երեխան ազատ է զբաղվելու գործունեության տարբեր ձևերով: Որի շնորհիվ երեխան ձեռք է բերում ինքնահաստատման, ինքնաճանաչման հնարավորություն:»[1. էջ22]

Երեխաների լիարժեք ֆիզիկական զարգացումը կախված է ճիշտ դաստիարակությունից և ուսուցումից, որի պայմանները ստեղծում են մեծահասակները, սակայն իր դերն ունի նաև ժառանգական գործոնը:

ֆիզիկական զարգացման շնորհիվ ձևավորվում է առողջ ապրելակերպի, առողջության պահպանման և ամրապնդման գիտակցում ու այս ամենը դաստիարակվում է նախադպրոցական տարիքից: Ֆիզիկական զագացման ընթացքում կրթվում է ոչ միայն մարմինը այլև հոգին, այդ պատճառով էլ երեխաներից պահանջվում է լարված նպատակասլաց աշխատանք: Ֆիզիկական կրթվածության շնորհիվ դրսևորվում է հպարտ, ինքնավստահ կեցվածք և երեխայի անձնային հատկությունների ձևավորում: Ֆիզիկական դաստիարակության շնորհիվ հնարավորություն է տրվում մատուցել ֆիզիկական կառուցվածքի առավելությունները և թաքցնել թերությունները:

Այսպիսով ռեժիմի կարևորագուն մասերից է ֆիզիկական դաստիարակություը, նախադպրոցական տարիքի երեխաների առաօրյայում պետք է գերակշռի կոփման վարժանքները, շարժախաղերը և այլն:

«Պ.Ֆ Լեսգաֆտը առանձնահատուկ կարևորելով շարժախաղի դերը երեխայի դաստիարակության գործում, նշում էր, որ «շարժախաղը վարժություն է, որը նախապատրաստում է երեխային ապագա կյանքին» » [2. էջ 46]

Ռեժիմը չի կարելի պարտադրել երեխաներին, այն կրում է անհատական բնույթ և պետք է կազմակերպել այնպես, որ նպաստի երեխայի ֆիզիկական զարգացմանը և առողջությանը:

«Օրվա ռեժիմը՝ սննդի, քնի և արթուն վիճակի ռացիոնալ հերթափոխում է, որը որոշոկի հաջորդկանությամբ կրկնվում է ամեն օր:»[2. էջ 49]

Երեխան մեծանալու և դաստիարակվելու գործընթացում պետք է արժևորի սեփական անձի նկատմամբ հարգանքը, ուժերի մեջ վստահ լինելու կարողությունը, գեղեցիկ, առողջ ու կատարյալ լինելու ցանկությունը:

«Ն.Ն. Կոժուխովայի, Ս.Ե. Շուկշինայի տվյալների համաձայն, նախադպրոցական տարիքում շտկվում են ֆիզիկական զարգացման առանձին թերություններ՝ կեցվածքի, քայլվածքի, մարմնի այլ կառուցվածքային շեղումներ:»[2. էջ50]

Փորձարարական մաս.

<u>Առավոտյան հանդիպում</u>

1. Երեխաների ընդունելություն, զրույց ծնողների հետ, ազատ զրույց երեխայի հետ նրանց տրամադրության մասին (երեխաները հաճախում են մանկապարտեզ մեծ հաճույքով և ոգևորությամբ),

- Առավոտյան մարմնամարզություն, որը շատ կարևոր է հենաշարժողական համակարգի ձևավորման համար,
- Ընդհանուր զարգացմանը նպաստող վարժություններ երաժշտության ուղեկցությամբ,

✓ ԵԴ՝ հիմնական կանգ. 1 հաշվին ձեռքերը բարձրացնել կողմ, 2 ծափ տալ վերևում, 3 ձեռքերը տանել կողմ, 4 ընդունել ելման դրություն (կատարել 3-4 անգամ)

✓ ԵԴ՝ ոտքերը ուսերի լայնությամբ զատած 1 հաշվին իրանը թեքել առաջ, ձեռքերով դիպչել ոտքերին, 2 հաշվին ուղղվել, ընդունել ելման դրություն (կատարել 3-4 անգամ)

✓ ԵԴ՝ ոտքերը քիչ կողմ զատած 1.2.3. հաշիվներին կատարել կքանիստ, ամեն անգամ ավելի խորը կքանստել, 4-ին ընդունել ելման դրություն (կատարել 3-4 անգամ)

✓ ԵԴ՝ ոտքերը քիչ կողմ զատած 1 հաշվին ուղիղ բարձրացնել աջ ոտքը , 2 ընդունել ելման դրություն, 3 բարձրացնել ձախ ոտքը, 4 ընդունել ելման դրություն (կատարել 3-4 անգամ)

✓ ԵԴ՝ հիմնական կանգ, ձեռքերը գոտկատեղին 1 հաշվին ցատկել, ոտքերը տանել կողմ, ծափ տալ գլխավերևում, 2 ընդունել ելման դրություն (կատարել 3-4 անգամ):

2. Նախաճաշ,
3. Պարապմունքի նախապատրաստում (ազատ խաղեր ըստ ցանկության),
4. Պարապմունքներ(պարապմունքների ընթացքում ընդմիջում 15-20 րոպե)
5. Խաղ-զբոսանք, դիտումներ, ստեղծել պայմաններ որպեսզի երեխաները ստեղծագործեն և իրենց մտահաղացմամբ խաղան խաղեր:

- Հետևել երեխաների խաղին, երեխաների խոսքին անհրաժեշտության դեպքում միջամտել:
- Հետևել, որպեսզի երեխաները իրենց խաղում լինեն հանգիստ, միասնական և համախմբված:
- Խաղի մեջ ընդգրկել բոլոր երեխաներին(առանձնահատուկ ուշադրություն դարձնել պասիվ երեխաներին):
- Հետևել, որպեսզի երեխաները խոսեն գրագետ, խաղի մեջ օգտագործեն հրաշագործ բառերը՝ խնդրում եմ, շնորհակալություն, կներես և այլն, հարստացնել երեխաների բառապաշարը:

Ապա՝

6. Ճաշում ենք.
7. Քնում

<u>Օրվա երկրորդ կես</u>

8. Արթնացում, կոփման վարժությունների կատարում,
    - Հետճաշիկ
    - Խաղեր, դիտումներ, կրկնություն

    Զբոսնել մոտակա պուրակում, տեսնել բնության գեղեցկությունները:

    Կազմակերպել շարժախաղեր:

    Երեխային սովորեցնել կատարել մեծահասակների կողմից տրվող պարզագույն հանձնարարություններ՝ խաղալուց հետո հավաքել խաղալիքները, կառուցողական նյութերը և այլ:
    - Այլ աշխատանք
    - Տուն ճանապարհել:

Այսպիսով երեխաները հաճախում են մանկապատեզ մեծ ցանկությամբ: Մանկապարտեզում իրականացվող ռեժիմը օգտակար է երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման համար:

Եզրակացություն

Սույն հետազոտական աշխատանքի արդյունքում հանգեցի այն եզրակացությանը, որ ռեժիմը շատ կարևոր դեր ունի նախադպրցական երեխայի կյանքում: Շատ կարևոր է երեխայի օրվա ընթացքում կատարած գործողությունները՝ խաղերը, մարզումները, սնունդը, քունը և զբոսանքը, այս ամենի ճիշտ իրականացումից մենք կարող ենք երեխային դարձնել ավելի ուշադիր, առողջ, աշխույժ և կենսուրախ:

Այսպիսով երեխայի զարգացումը կարող է լիարժեք կատարվել միայն այն դեպքում երբ առօրյայի կազմակերպումը համապատասխանում է երեխայի տարիքին: Պարզ է դառնում նաև, որ ֆիզիկական զարգացման ամուր հիմքերը դրվում են նախադպրոցական տարիքում և երեխաները հնարավորություն են ստանում կոփել մարմինը, ապրել առողջ, ունենալ ֆիզիկապես կայուն կեցվածք:

Երեխայի առողջ ու ճիշտ զարգանալու համար հարկավոր է ճիշտ կազմակորպված առօրյա, որը կպահպանվի նաև տանը:

Իրականացրեցի փորձարարական աշխատանք որի արդյունքում պարզ է դառնում երեխաների հագեցած օրվա ռեժիմի կարևորությունը ՆՈՒՀ-ում:

Ինչպես նաև, որ ինչքան շատ նպաստենք երեխայի Ֆիզիկական ակտիվությանը, այնքան երեխան կլինի՝ առողջ, առույգ, ֆիզիկապես զարգացած:

Գրականություն

1. Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների) կրթական համալիր ծրագիր Երևան 2011

2. Ս.Ա. Մուրադյան Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական Մանկավարժություն» Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես դասագիրք մանկավարժական բուհերի ուսանողների համար 126 էջ

3. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպում այլընտրանքային մոդելներով «Դաստիարակի ուղեցույց» 196 էջ Երևան 2018

4. https://magazinalsu.ru/hy/rezhim-dnya-doshkolnika-primernyi-rezhim-dnya-znachenie-rezhima-dnya-v-zhizni.html?fbclid=IwAR1jhR8A6BJxO3ap__jC4_X5PSG_dzUih-f_gNd6QIZzVsxsI0y_yCzzrvo

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Խաղը որպես ն/դպ առաջատար գործունեություն

Դաստիարակ՝ Քրիստինե Սմբատի Պապինյան

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……3
2. Գլուխ 1. Ուսումնասիրել խաղը որպես ն/դպ տարիքի երեխայի գործունեության առաջատար ձև……..……5
3. Գլուխ 2. Խաղի տեսակները……6
4. Փորձարարական մաս……..……11
5. Եզրակացություն……..……..15
6. Օգտագործված գրականության ցանկ……..……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Խաղը մարդկային գործունեության հետաքրքիր ձևերից է, որը սկսվում է մանկության տարիներից և ուղեկցում է մարդուն ողջ կյանքի ընթացքում: Ն/դպ տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության համակարգում կարևոր նշանակություն ունեն խաղերը: Քանի որ երեխաները զարգանում, ուսուցանվում ու դաստիարակվում են խաղերի միջոցով, այդ պատճառով որքան էլ ուսումնասիրված լինի խաղային գործունեությունը՝ խաղը եղել ու մնում է արդիական: Մանկապարտեզներում երեխաները ունեն բազմաթիվ զբաղմունքներ, սակայն խաղային գործունեությունը համարվում է հիմնականը, քանի որ մանկապարտեզներում ուսուցումը հիմնականում տարվում է խաղային մեթոդներով: Խաղային գործունեությունը բացարձակ անփոխարինելի է նախադպրոցականների կյանքում: Խաղի բացառիկ նշանակությունը նախադպրոցականների կյանքում կարևորել են անցյալի նշանավոր մանկավարժներ: Մի քանի մեջբերում նրանց մտքերից.

«Խաղը մանուկ մարդու բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա ուղղությունը: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում. դա նրա ձևն է, նրա մեթոդն է: ԵՎ ամեն բան, ինչ-որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու»: [1,24 էջ]

Հ. Թումանյան

«Ամեն լավ բանի ակունք ընկած է խաղի մեջ և դուրս է գալիս նրանից:Խաղը դատարկ զբաղմունք չէ, այն ունի բարձր միտք և խորը իմաստ»: [1,24 էջ]

Ֆ. Ֆրոյբել

«Խաղը երեխայի զարգացման աղբյուրն է: Այն ստեղծում է մարդու մոտակա զարգացման տիրույթները»: [1,22 էջ]

Լ. Ս. Վիգոտսկի

Ուսումնասիրելով նշանավոր մանկավարժների խոսքերը խաղի մասին, պարզ է դառնում, որ երեխան խաղում է և սովորում: Խաղալով երեխան գիտելիքն ավելի հեշտ է ընդունում: Խաղի ժամանակ, երբ երեխան ազատ է լինում, շատ հեշտ բացահայտվում է նրա սովորություններն ու հակումները: Պարզ է դառնում, որ առանց խաղերի չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում:

Հետազոտության նպատակը –ներկայացնել խաղի դերը նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և զարգացման գործում:

Հետազոտության խնդիրները –ուսումնասիրել խաղի տեսակները,

ներկայացնել պարապմունքներ խաղերի միջոցով,

բացահայտել խաղի կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և զարգացման գործում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԽԱՂԸ ՈՐՊԵՍ Ն/ԴՊ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՁԵՎ

Խաղը նախադպրոցական տարիքի երեխաների առաջնային գործունեություն է, որը մեծ ու անփոխարինելի ազդեցություն ունի նրանց զարգացման ու դաստիարակության գործում: Խաղը երեխայի ամենասիրած զբաղմունքն է, նրանք խաղում են միշտ և ցանկացած պահի ձեռք բերում նոր գիտելիքներ: Այս տարիքի երեխաների խոսքի ձևավորման ամենամատչելի միջոցը խաղն է: Երեխաները խոսում են նույնիսկ այն ժամանակ, երբ միայնակ են խաղում և խաղալով էլ կարողանում են աշխարհը ճանաչել:

Խաղի ժամանակ կարևորվում է նաև դաստիարակչական կողմը, քանի որ երեխաները ավելի մոտիկից են առնչվում, մրցակցում, վիճում, իրար օգնում, դառնում ավելի ինքնուրույն ու ընկերասեր:

Խաղի դերն առանձնապես մեծ է պասիվ երեխաների ունակությունների ձևավորման ու զարգացման գործում: Խաղը զարգացնում է երեխայի երևակայությունը, արագորեն լուծումներ գտնելու կարողությոնը, մտածողությունը:

Եթե ինչ որ խնդիրներ են լինում երեխաների մեջ, ապա խաղի ժամանակ աննկատելիորեն վերանում են այդ խնդիրները և մենք ունենում ենք հրաշալի արդյունք երեխաների միջանձնային հարաբերությունների կարգավորման մեջ: Որպեսզի խաղերն ավելի արդյունավետ լինեն, մեզ անհրաժեշտ է ճիշտ և մատչելի ներկայացնել խաղը և նրա կանոնները, իսկ բովանդակությունը համապատասխանի երեխաների տարիքին:

Խաղը երեխայի կյանքի անբաժանելի մասն է: Այն հնարավորություն է տալիս հարուստ տեղեկություններ ստանալ ինչպես իր, այնպես էլ շրջապատող մարդկանց մասին:

Խաղը երեխայի առաջատար գործունեություն է, որը երեխայի զարգացման համար ունի անհրաժեշտ բոլոր նախադրյալները:

Խաղային գործունեության ընթացքում շատ կարևոր է խոսքը, քանի որ ունի կազմակերպող ֆունկցիա, և նպաստում է երեխայի շփմանը ընկերների և շրջապատող միջավայրի հետ :

Խաղային գործունեությունը ձևավորվում և զարգանում է մեծահասակների օգնությամբ: Նախադպրոցականի խաղային գործունեությունը պահանջում է խելացի և գրագետ ղեկավարում:

ԽԱՂԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Խաղերի դասակարգման ժամանակակից տարբերակողները (Ս.Լ.Նովոսյոլովան) ներկայացնում են խաղերի 3 տեսակ խումբ.

1) Ստեղծագործական խաղեր, որոնք նախաձեռնում են երեխաները(սյուժետա-դերային, խաղ-թատերացումներ, խաղ-փորձարկումներ)
2) Խաղեր, որոնց նախաձեռնողը մեծերն են: Այդ խաղերն ունեն մանկավարժական-ուսուցողական ուղղվածություն (դիդակտիկ և ինտելեկտուալ խաղեր, շարժախաղեր, խաղ-զվարճանքներ)
3) Ժողովրդական խաղեր, որոնք ավանդաբար փոխանցվում են սերնդե-սերունդ:

Ս.Կոզլովան և Տ.Կուլիկովան առաջարկում են խաղերի 2 տեսակ.[2,101էջ]

I. Ստեղծագործական

II. Կանոններով կամ նպատակաուղված



Ստեղծագործական խաղերի ժամանակ երեխաներն իրենք են ստեղծում խաղը, և խաղային գործունեությունը կրում է ստեղծագործական բնույթ: Ստեղծագործական խաղում երեխաները հորինում են կերպարներ ու հավատալովիրենց հորինած կերպարներին՝ կատարում այդ դերերը:

Ստեղծագործական խաղը հիմնականում խմբային է: Խաղին մասնակցող երեխաները կատարում են իրենց դերերը, իսկ մյուս երեխաները հանդես են գալիս որպես դիտորդներ: Ստեղծագործական խաղերի նպատակը, բովանդակությունը և ընթացքը որոշում են մասնակցող երեխաները:

Ռեժիսորական խաղերում երեխան հանդես է գալիս խաղ բեմադրողի դերում: Ինքնուրույն ընտրում է թեման, սյուժեն: Ռեժիսորական խաղում երեխան մենակ է հանդես գալիս, իսկ մյուս մասնակիցները իր սիրելի խաղալիքներն են հանդես գալիս: Այս խաղերի առավելությունը, դաստիարակող հատկությունը այն է, որ երեխան ինքն էկազմակերպում խաղը և զարգացնում իր հետաքրքրությունը: Ռեժիսորական խաղերը նպաստում են երեխայի սոցիալական փորձի հարստացմանն ու խոսքի զարգացմանը, բառապաշարի հարստացմանը:

Սյուժետադերային խաղերի նպատակն է երեխաներին ճանաչել տալ սեռադերային պարտականությունները, սովորեցնել ինքնուրույն ընտրել խաղի թեման, զարգացնել սյուժեն: Սյուժետադերային խաղը նպաստում է երեխաների սեռադերային փորձի ձեռքբերմանը: Այս խաղի ընթացքում արժեվորվում են վարքի ձևերը, որոնք բնութագրում են ինչպես տղաներին, այնպես էլ աղջիկներին: [5,էջ45]:

Սյուժետադերային խաղերի ժամանակ երեխաների մոտ ի հայտ են գալիս ինքնաճանաչման արժևորումներ: Այս խաղում երեխաները ձեռք են բերում նաևվարվեցողության անհրաժեշտ փորձ:

Խաղ-թատերացումների միջոցով երեխան վերարտադրում է իր երազած իրականությունը, ձգտում է նմանվել սիրելիհերոսներին: Այս խաղի հիմքում ընկած են մանկական գեղարվեստական ստեղծագործությունները որտեղ երեխան հանդես է գալիս տարբեր դերերում: Այս խաղը համարվում է գեղարվեստական գործունեության ձև: Խաղ-թատերացումը բառապաշարի հարստացման ինչպես նաև գրական խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Կառուցողական խաղերի ժամանակ զարգանում է մանր և միջին մոտորիկան և մարզվում է երևակայական մտածողությունը: Այսինքն՝ երեխան պետք է պատկերացում կազմի, թե ի՞նչ է ուզում կառուցել, և հետո իրականացնի այն: Այս խաղում երեխաները յուրացնում են մի շատ կարևոր բան ևս. ծանոթանում են երկրաչափական մարմիններին, կարողանում են տարածության մեջ կողմնորոշվել:

Կառուցողական խաղերի ժամանակ սկզբում երեխաները սովորում են կառուցել ըստ նմուշի և այս տեսակը նրանք շատ են սիրում: Կամաց կամաց կառուցողական խաղի տեսակը բարդանում է երեխաների մոտ, երբ նրանց արդեն հանձնարարում ենք կառուցել կամ մոդելով, կամ առաջադրված թեմայով և պայմանով: Մտահղացմամբ

կառուցելու ժամանակ երեխաները դառնում են ավելի ինքնուրույն, որովհետև իրենք են ընտրում ինչ պետք է և ինչպես պետք է կառուցեն: Կառուցողական խաղերի բոլոր տեսակներն էլ օգնում են բացահայտել երեխաների հետաքրքրությունները, նախասիրությունները, ինչպես նաև անհատական առանձնահատկությունները:

Կանոններով խաղերը այն խաղերն ենորոնց բովանդակությունը պատրաստի է ու մշակված:

Կանոնավոր խաղերը բաժանվում են երկու մեծ խմբի.

- Դիդակտիկ խաղեր,
- Շարժախաղեր:

Դիդակտիկ խաղերը ոչ միայն ուսուցողական են, այլ նաև ունեն ճանաչողական նշանակություն ևտարածված են ողջ աշխարհով մեկ: Այս խաղերն ունեն իրենց տարատեսակները՝

- Առարկաներով ու խաղալիքներով,
- Խոսքային (հոմանիշներով ու հականիշներով)
- Սեղանային նյութերով,
- Երաժշտական դիդակտիկ խաղեր,
- Մաթեմատիկական դիդակտիկ խաղեր,
- Բնագիտական դիդակտիկ խաղեր:

Դիդակտիկ խաղերն ունեն **խնդիր, գործողություն, հստակ կանոններ և արդյունք**: [5,էջ4]

Դիդակտիկ խաղերի հիմնական խնդիրը ուսուցողական խնդիրն է, որի լուծման համար երեխան պետք է արագ մտածի, համեմատի առարկաներն ու երևույթները, վերլուծի, համադրի դրանք և ինքնուրույն որոշակի եզրակացության գա: Դիդակտիկ խաղի ամենամեծ առավելությունն այն է, որ ուսուցողական խնդիրը լուծվում է անկախ երեխայի կամքից ու գիտակցությունից: Երեխան անգամ չի էլ գիտակցում, որ խաղալով սովորում է:

Գործողությունը դիդակտիկ խաղի ամենաէական մասն է: Առանց գործողության ընդհանրապես հնարավոր չէ խոսել խաղի մասին:Խաղի գործողությունը խաղ-խնդրի լուծման միակ միջոցն է: Այն պետք է լինի զբաղեցնող և գրավիչ մինչև խաղի վերջը: Եթե խաղը գրավիչ ու զբաղեցնող չեղավ, մենք արդյունքի չենք հասնի:

Կանոնը դիդակտիկ խաղը կազմակերպող ազդակն է: Խաղի կանոնին վերագրվում է ոչ միայն այն, ինչ խաղի ընթացքում պետք է անեն երեխաները, այլև այն, ինչը չպետք է անեն: Երեխաներից պահանջվում է կարգապահություն և կամքի ուժ:

Խաղի արդյունքը դիդակտիկ խաղի եզրափակումն է, որի ժամանակխաղի արդյունքը գնահատում են և երեխաները և դաստիարակները : Անընդհատ առնչվելով դիդակտիկ խաղերին կարող ենք փաստել, որ այս խաղերը նպաստում են երեխայի՝ մայրենի լեզվի, ուշադրության, հիշողության, կռահունակության զարգացմանը, բարոյական և անվտանգ վարքագծի դաստիարակմանը: Դիդակտիկ խաղերը բոլոր խմբերում էլ կիրառվում են պլանավորված ձևով, ու այդ պատճառով էլ դրանք դառնում են դաստիարակության և ուսուցման կարևոր օղակներից մեկը: Քանի որ այս խաղերն օգնում են նոր նյութի յուրացմանը, անցած նյութի ամրապնդմանը, գիտելիքների ստուգմանը, ուստի դրանք համարվում են պարապունքի մի ձև:

Քանի որ նախադպրոցական տարիքում դրսևորվում է երեխաների մոտ շարժման ուժեղ պահանջ և նրանք չեն կարող երկար ժամանակ մի տեղում նստած կամ կանգնած մնալ և օրվա ընթացքում էլ առողջ երեխաները բավականին վազում, քայլում, ցատկում են, այս պատճառով էլ շարժախաղերի ճիշտ կազմակերպումը դրական ազդեցություն է ունենում նրանց բազմակողմանի, ներդաշնակ ու ֆիզիկական զարգացման վրա:Շարժախաղերը ընդգրկում են հիմնական շարժումների բոլոր ձևերը (վազք, քայլք, ցատկ, մագլցում, սողանցում): Շարժախաղերում գործի է դրվում հենաշարժողական ապարատի ողջ համակարգը, օրգանիզմի բոլոր մկանները և մկանային խմբերը: Այս խաղերում ևս երեխաները գործում են բոլորը միասին, կազմակերպված և ենթարկվում են պարտադիր կանոններին: Շարժախաղերի ընթացքում երեխաները կատարում են մտքերի փոխանակություն, արտասանում են կարճ ոտանավորներ, այս բոլորն էլ նպաստում են երեխաների խոսքի զարգացմանը:

Շարժախաղերը ըստ իրենց բովանդակությամբ բաժանվում են երկու խմբի՝

1) Սյուժեով խաղեր,
2) Սյուժե չունեցող խաղեր [3,6էջ]

Սյուժե ունեցող խաղերի ժամանակ երեխաները պատկերացումներ են կազմում շրջապատող իրականության մասին: Այս խաղերի ժամանակ երեխաները հանդես են գալիս,օրինակ՝ օդաչուի, հրշեջի, թռչունների, կենդանիների և այլ կերպարներում:

Սյուժե չունեցող խաղերի ժամանակ երեխաները ձեռք են բերում ճարպկություն ինչպես նաև դժվարությունները հաղթահարելու կարողություն: Շարժախաղերը հանդիսանում են երեխաների ակտիվ հանգիստը կազմակերպելու միջոց: Շարժախաղերը կազմակերպելու ժամանակ պետք է հաշվի առնենք օրվա ժամերը, պարապմունքի ձևերը, ինչպես նաև տարվա եղանակներն ու տեղի պայմանները: Օրինակ՝ ցուրտ եղանակներին երեխաների հետ պետք է կազմակերպել մեծ շարժողականության խաղեր որպեսզի բոլոր երեխաները լինեն ակտիվ շարժման մեջ:

Նախաճաշից հետո, երբ անց են կացվում տարբեր պարապմունքներ, որոնք երեխաներից պահանջում են ուշադրության կենտրոնացում, ուժերի լարում, հաճախ է երեխաների մոտ նկատվում գրգռվածություն, ալարկոտություն, հոգնածություն, այդ ժամանակ մեզ օգնության են գալիս շարժախաղերը:

Շարժախաղերը առանձնահատուկ նշանակություն ունեն երեխաների ֆիզիկական դաստիարակության գործում:

Այսպիսով՝ խաղերի բոլոր տեսակները կարևոր են նախադպրոցականի ուսուցման, դաստիարակության և զարգացման գործում:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Փորձարարական մասում ներկայացնում եմ իմ պարապմունքներից մի քանիսը խաղի միջոցով;

Մեզ ծանոթ մրգերն ու բանջարեղենները

Խաղի նախապատրաստական փուլում երեխաների հետ անց եմ կացրել զրույց բանջարեղենների և մրգերի մասին: Զրույցի ընթացքում երեխաները հիշեցին իրենց ծանոթ մրգերի ու բանջարեղենների անունները: Միասին կրկին անգամ ասացինք, թե որտեղ են աճում մրգերը, իսկ որտեղ բանջարեղենները: Մի քանի երեխա արտասանեցին բանաստեղծություններ մրգերի ու բանջարեղենների մասին: Մեր անցած պարապմունքներից հիշեցինք ու բացատրեցինք, թե որքան են դրանք կարևոր մեր առողջության համար: Այնուհետև երգեցինք «Ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն աշուն է» երգը:

Հաջորդ փուլում բաժանեցի մատիտներ, որպեսզի երեխաները նկարեն իրենց սիրած միրգը կամ բանջարեղենը: Նկարելը վերջացնելուց հետո խումբը բաժանեցի հինգ ենթախմբի՝ յուրաքանչյուրում վեց երեխա:Բաժանեցի մրգերի ու բանջարեղենների

հավաքածուներ և ասացի, որ պետք է իրենք հավաքածուից առանձնացնեն մրգերն ու բանջարեղենները և տեղադրեն սեղանի վրա դրված պարկերի մեջ, մրգերը՝ մրգեր պատկերված պարկի մեջ, բանջարեղենները՝ բանջարեղեններ պատկերված պարկի մեջ։ Այս ընթացքում բոլոր երեխաները ակտիվ առանձնացնում էին մրգերն ու բանջարեղենները։

Երբ աշխատանքն ավարտեցին, յուրաքանչյուր ենթախմբից մեկ երեխա ներկայացրեց, թե ինչ մրգեր ու բանջարեղեններ են առանձնացրել ու տեղադրել պարկի մեջ։ Բոլոր խմբերն էլ ճիշտ էին առանձնացրել. միայն մի խմբում էին շփոթել լոլիկն ու խնձորը։

Մինչ այս խաղը կազմակերպելը պարապմունքներ էինք կատարել մրգերի ու բանջարեղենների թեմայով և այդ ընթացքում շատ աշխուժացնող խաղեր էինք խաղացել։ Դրանցից մեկն էր «Միրգ, թե՞ բանջարեղեն», որի նպատակն էր կրկնել միրգ և բանջարեղեն ընդհանրացնող անունները։

Այսպես էինք խաղում, երբ ասում էի միրգ, երեխաները կանգնում էին և ձեռքերը մեկնում դեպի վեր ու երկու ձեռքով ցույց տալիս ծառի պտուղները, իսկ երբ ասում էի բանջարեղեն, երեխաները կքանստում էին և ձեռքերը իջեցնում դեպի հողը։

Խաղացել ենք նաև «Համից ճանաչիր» խաղը։ Կապում էի երեխաների աչքերը, նրանց տալիս էի որևէ մրգի կամ բանջարեղենի փոքրիկ կտոր, և ուտում էին։ Համից գուշակում էին, թե ինչ միրգ կամ բանջարեղեն կերան։ Տալիս էի երեխաներին հում և եփած բանջարեղեն։ Երեխաները շատ բարձր տրամադրությամբ էին խաղում այս խաղը։ Այս խաղով բացահայտվում էր նաև նրանց չսիրած միրգն ու բանջարեղենը։ Ինչպես նաև երեխաները սովորեցին համ ու հոտ արտահայտող ածականներ (համեղ է, քաղցր է, թթու է, անուշ հոտ ունի)։

Այս խաղերի ժամանակ նրանք շարունակեցին սովորել նկարել, զարգանում էր խոսքը, պատկերավոր մտածողությունը, արագ կողմնորոշվելու ունակությունը, հարստանում էր բառապաշարը, ինչպես նաև ընգհանրացվեց միրգ և բանջարեղեն հասկացությունները։

Մաթեմատիկայի պարապմունքների ժամանակ ևս խաղի դերը բավականին մեծ է։Խաղի նպատակը միայն զվարճություն պատճառելը չէ, այլև խաղային իրավիճակներում մաթեմատիկական գիտելիքներին հաղոդակից դարձնելն է, մաթեմատիկայի նկատմամբ ընդհանուր հետաքրքրություն առաջացնելն է։

Մաթեմատիկայի պարապմունքներին խաղացել ենք «Ասա՛ նախորդ կամ հաջորդ թիվը»[4,էջ9] խաղը, որի մեջ իմ նպատակն է եղել ամրապնդել երեխաների պատկերացումները նախորդ և հաջորդ թվերի մասին նզարգացնել նրանց արագ մտածելու կարողությունը։

Երեխաները շրջան կազմեցին, իսկ ես կանգնեցի շրջանի կենտրոնում ու սկսեցինք խաղալ։ Ասում էի ինչ որ թիվ և գնդակը նետում որևէ մեկին (հերթականությամբ չէի նետում, որ նրանք ավելի ուշադիր լինեն)։ Գնդակը բռնող երեխան ասում էր այդ թվի հաջորդ կամ նախորդ թիվը (ինչպես որ ասում էի) և

գնդակը գցում էին ինձ։ Երբ սխալ պատասխան էր լինում, երեխան դուրս էր գալիս խաղից։ Խաղը շարունակում էինք այնքան, մինչ մեկը հաղթող ճանաչվեր։ Երեխաները խաղում էին բարձր տրամադրությամբ։

«Երկրաչափական պատկերներ» թեմայի պարապմունքի ընթացքում խաղացել ենք «Ո՞ր պատկերն է պահված» խաղը։ Այս խաղի ժամանակ իմ նպատակն է եղել զարգացնելտեսողական հիշողությունը և ամրապնդել երկրաչափական պատկերների իմացությունը։

Գրատախտակին նկարում էի եռանկյուն, շրջան, ուղղանկյուն, քառակուսի, և անվանում էինք յուրաքանչյուր պատկերը։ Հետո առաջարկում էի ուշադիր դիտել։ 1-2 երեխայի դուրս էի ուղարկում և նրանց բացակայության ընթացքում մաքրում որևէ պատկեր։ Հետո կանչում էի այդ երեխաներին, և նրանք որոշում էին, թե որ պատկերն էր բացակայում։

Նրանք շատ աշխույժ էին և նույնիսկ պասիվ երեխաներն էին ոգևորվել ու ցանկություն էին հայտնում երկրորդ անգամ խաղալ։ Այսպիսով խաղալով նրանք ձեռք էին բերում մաթեմատիկական գիտելիքներ, ինչպես նաև ուշադրությունն էր զարգանում։

Ազատ խաղերի ժամանակ մի խաղ ենք խաղում, որի անունն է «Բնութագրիր ընկերոջդ գեղեցիկ խոսքերով»։

Երեխաները սկզբում դժվարանում էին դրական խոսքերով նկարագրել իրար, օգնում էի, միջամտում, բայց մի երկու անգամ խաղալուց հետո արդեն շատ գեղեցիկ բառերով նկարագրում էին միմյանց։

Ինձ համար այս խաղի նպատակն է, որ երեխաները հոգատար ու հարգալից վերաբերմունք ցուցաբերեն միմյանց հանդեպ, դառնան ավելի բարի, և հղկվի նրանց խոսքը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտման արդյունքում համոզվեցի, որ խաղերը նպաստում են երեխաների խոսքի զարգացմանը, ինքնադրսևորմանը, բառապաշարի հարստացմանը, ինքնուրույն աշխատելու ունակությանը, մաթեմատիկական գիտելիքների ձեռք բերմանը, պատկերավոր մտածողությանն ու երևակայությանը, տարածության մեջ կողմնորոշմանը, զսպվածությանն ու ճարպկությանը։

Համոզվեցի, որ խաղի միջոցով սովորեցնելը շատ ավելի հեշտ է, որ խաղի դերն առանձնապես մեծ է պասիվ երեխաների ունակությունների ձևավորման ու զարգացման գործում։ Ինչպես նաև համոզվեցի, որ խաղի բոլոր տեսակներն էլ ուսուցանող, դաստիարակող և զարգացնող են։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջուլիետա Հ. Խաղալով սովորենք, «Զանգակ-97» 2009թ.-80 էջ

2. Մարության Ս., Դալլաքյան Ա.<< Նախադպրոցական մանկավարժություն>> Երևան 2005թ. 126էջ

3. Շարժախաղեր Նախադպրոցական 3-5 տարեկան երեխաների համար, Երևան 1975թ.-98էջ

4. Սարգսյան Սոնա Ուրախ մաթեմատիկա (մեթոդական ուղեցույց), Երևան 2003թ.-76էջ

5. Սմբատյան Լալա Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում, Երևան 2014թ.-222էջ